ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՄԱՍՆԱՎՈՐԵԾՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1997-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՎԱՆ 2020

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1997-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Փորձագետ՝ Արտակ Քյուրումյան

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Երևան 0002, Մարտիրոս Սարյան փողոց 12, 5-րդ հարկ
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայքէջ՝ www.transparency.am

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9

4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 13

4.1 Մասնավորեցման գործընթացի իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը 13

4.2 Ակտիվների մասնավորեցման և ներդրումների պատմություններ 14

4.2.1 Էներգետիկա 15

4.2.1.1 Հայաստանի էլեկտրական ցանցեր 17

4.2.1.2 Հայռուսգազարդ - «Գազպրոմ» 27

4.2.1.3 Հայաստան-Իրան գազատար 34

4.2.1.4 Որոտանի կասկադ 35

4.2.1.5 Հրազդան ՋԷԿ 39

4.2.1.6 «Հրազդան 5-րդ էներգաբլոկ» 39

4.2.1.7 Սևան-Հրազդան կասկադ 40

4.2.1.8 ՁորաՀԷԿ 41

4.2.1.9 «Հեր-Հեր» ՀԷԿ 42

4.2.1.10 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 43

4.2.1.11 Հայաստանի ատոմային էլեկտրակայան 44

4.2.2 Հեռահաղորդակցություն 46

4.2.2.1 «Արմենտել» 46

4.2.2.2 «Վիվասել» 47

4.2.2.3 Օրանժ-Յուքոմ 48

4.2.2.4 «ՋիԷնՍի-ԱԼՖԱ» 48

4.2.2.5 «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» 49

4.2.3 Ֆինանսական ոլորտ 49

4.2.3.1 «Հայխնայբանկ» 49

4.2.3.2 Այլ բանկեր 52

4.2.3.3 Ապահովագրական ընկերություններ 52

4.2.4 Հանքարդյունաբերություն 53
4.2.4.1 «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» 57
4.2.4.2 «Լիդիան Արմենիա» 58
4.2.4.3 «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» 60
4.2.4.4 «Չաարատ գոլդ հոլդինգ» 60
4.2.4.5 «Թեղուտ» 61
4.2.5 Տրանսպորտ 61
4.2.5.1 «Հարավկովկասյան երկաթուղի» 61
4.2.5.2 «Հայկական ավիաուղիներ» 62
4.2.6 Արդյունաբերական ձեռնարկություններ 65
4.2.7 Գիտահետազոտական հաստատություններ 65
4.2.8 Տուրիստական ընկերություններ 66
4.2.9 Սպորտ 66
4.2.10 Տեղեկատվական դաշտ 66
5 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 67
5.1 Պետական կառավարման համակարգի բացերը 67
5.2 ՀՀ պետական մարմինների դերակատարումը և ձախողումները 73
5.3 Ռուսական կապիտալը և ազդեցությունը Հայաստանում 80
5.3.1 Գույքի ձեռքբերումը և քաղաքական ազդեցությունը 81
5.3.2 Ռուսաստանի դերը Հայաստանի տնտեսության մեջ 82
5.3.3 Ռուսաստանի ազդեցությունը խթանող այլ գործոնները 85
5.3.4 ՀՀ իշխանությունների դերակատարումը 91
6 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 94
7 ՎԵՐՋԱԲԱՆ 97

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԲԲԸ	Բաց բաժնետիրական ընկերություն
ԲԷՑ	Բարձրավոլտ էլեկտրացանցեր
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (Organization for Security and Cooperation in Europe)
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԽՀԱԱՀ	Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր (DCFTA – Deep and comprehensive free trade agreement)
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
ԾԻԳ	Ծրագրի իրականացման գրասենյակ
ՀԱԷԿ	Հայաստանի ատոմային էլեկտրակայան
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանց
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՑԷ	Համակցված ցիկլով էլեկտրակայան
ՊՆ	ՀՀ պաշտպանության նախարարություն
ՋԷԿ	Ջերմային էլեկտրակայան
ՌԱՕ ԵԷՍ	«Միասնական էներգահամակարգ» ռուսական բաժնետիրական ընկերություն (РАО ЕЭС - российское акционерное общество Единая энергетическая система)
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍՀԿ	Սևան-Հրազդան կասկադ
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՄՊՊՀ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՕՊԵԿ	Նավթ արտահանող երկրների կազմակերպություն (OPEC – organization of petroleum exporting countries)

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է պետական ընկերությունների և գույքի մասնավորեցում, որի զգալի մասն ուղեկցվել է խնդրահարույց գործընթացներով:

Հետազոտության առանցքում էներգետիկայի, հեռահաղորդակցության, ֆինանսական, հանքարդյունաբերության, տրանսպորտի և մի քանի այլ ոլորտներում կատարված խոշոր գործարքներն են:

Հետազոտության նպատակն է վեր հանել իրականացված մասնավորեցման ու ներդրումների գործընթացներին առնչվող խնդիրները, թերությունները, սխալները, օրենսդրության բացերն ու կառավարման համակարգի խնդիրները, որոնց պատճառով Հայաստանի Հանրապետությունը և նրա քաղաքացիները կրել են նյութական և բարոյական վնասներ, չեն կարողացել ապահովել տնտեսական զարգացում ու ստացված հասույթի հավասար բաշխում հասարակության բոլոր անդամների միջև և ունեցել են անդառնալի կորուստներ: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության մեջ այլ երկրների համեմատ ռուսական ներդրումների կամ ռուսական ընկերությունների մասնակցության անհամաչափ մեծ ծավալները՝ հաշվետվության մեջ զգալի տեղ է զբաղեցնում դրանց առնչվող անդրադարձը և համապատասխան գործարքների վերլուծությունը:

Հետազոտության արդյունքում վեր են հանվել պետական կառավարման, հանրային ծառայությունների կարգավորման, հաստատությունների կարողությունների, գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության, օրենքի գերակայության հետ կապված թույլ կողմերը և, դրան զուգահեռ, պետության պատասխանատու պաշտոնյաների ակնհայտորեն ծրագրված և կազմակերպված գործարքները, որոնք միտված են եղել սեփական իշխանությունը պահելուն և ամրապնդելուն, և, օգտագործվելով արտաքին ուժերի կողմից, ռիսկի տակ են դրել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, խոցելի դարձրել երկրի կայունությունը և տնտեսությունը դրել զգալի կախվածության մեջ:

Թեև հետազոտությունը կատարվել է այնպիսի ժամանակաշրջանում, երբ պետական սեփականության զգալի մասն այլևս մասնավորեցվել և օտարվել է, սակայն դա չի նվազեցնում հետազոտության կարևորությունը և օգտակարությունը:

Ակնկալվում է, որ հետազոտության կողմից արձանագրված խնդիրները և քաղած դասերը Հայաստանի Հանրապետության իշխանություններին կօգնեն կատարելագործել պետական կառավարման համակարգը և օրենսդրությունը, ինչը կապահովագրի երկիրը ապագայի սխալներից, կօգնի երաշխավորել մաքուր կապիտալի հոսքը դեպի Հայաստան, երկրի տնտեսությունը նվազ խոցելի կդարձնի արտաքին աշխարհից եկող ցնցումների և տնտեսական վայրիվերումների նկատմամբ և կերաշխավորի, որ ներդրումները ծառայեն ժողովրդի շահերին:

Զեկույցում ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին և Հաշվեքննիչ պալատին: Ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն որոշումներ ընդունող կառույցների կողմից և կօգնեն Հայաստանի Հանրապետությունը դարձնելու բացության, թափանցիկության, հաշվետու և պատասխանատու կառավարման առումով օրինակելի երկիր:

Հետազոտությունն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից: Հետազոտության գաղափարի հիմքում Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (Center for International Private Enterprise - CIPE) աշխատանքն է, որով սահմանվել են արատավոր (corrosive) և կառուցողական (constructive) կապիտալի հասկացությունները:[1]

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեսուն տարի առաջ Հայաստանի ժողովուրդն ընտրել է անկախ պետություն ունենալու ճանապարհը: 1990թ.-ի օգոստոսի 23-ին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունել է «Անկախության հռչակագիրը»[2], որով Հայկական ԽՍՀ-ն վերանվանել է Հայաստանի Հանրապետություն, իսկ «ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները» հռչակվել են ժողովրդի սեփականություն: 1991թ.-ի մարտի 1-ին ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունել է «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը[3]: 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեին մասնակցել է 2,056,758 մարդ (գրանցված քվեարկողների 95.5%-ը), որից 99.51%-ը քվեարկել է Հայաստանի Հանրապետության անկախության օգտին:

1991 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունն ունեցել է բուռն «կենսագրություն»՝ անցնելով քաղաքական անկայունության, հեղաշրջման, լճացման, բռնությունների, ահաբեկչությունների, ավտորիտար կառավարման և հեղափոխության միջով:

Տարիներ շարունակ շրջափակված լինելով երկու հարևան երկրների կողմից՝ Հայաստանի Հանրապետությունն ամուր կապեր է հաստատել մյուս երկուսի՝ Վրաստանի և Իրանի հետ:

Վրաստանը Հայաստանի համար եղել է արտաքին աշխարհի հետ կապի կարևորագույն ճանապարհը՝ Փոթի նավահանգստով ապահովելով ծովային ելք, իսկ Լարս անցակետով՝ կապելով Ռուսաստանի և մյուս երկրների հետ: Հայաստանը լավ հարաբերություններ ունի

[1] Eric Hontz, "Building a Market for Everyone: How Emerging Markets Can Attract Constructive Capital and Foster Inclusive Growth", CIPE Insights, 25 October 2019, https://www.cipe.org/newsroom/building-a-market-for-everyone-how-emerging-markets-can-attract-constructive-capital-and-foster-inclusive-growth:

[2] «ՀՀ անկախության հռչակագիր». https://www.gov.am/am/independence:

[3] «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3192:

Իրանի հետ, սակայն Արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցների պատճառով վերջինս չի կարող արտաքին աշխարհի հետ առևտրի հուսալի ճանապարհ տրամադրել: Անկախություն հռչակելուց հետո Հայաստանը փորձել է պահպանել իր հարաբերությունները խորհրդային նախկին հանրապետությունների, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ Ռուսաստան կամ ՌԴ) հետ: Նաև ակտիվ կապեր է հաստատել Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ:

1990-ականների վերջին և 2000-ականներին Հայաստանում իրականացվել է պետական ընկերությունների և գույքի մասնավորեցում, որի զգալի մասն ուղեկցվել է խնդրահարույց գործընթացներով: Հայաստանում կատարված օտարերկրյա բազմաթիվ ներդրումներ եկել են օֆշորային գոտիներից, որոնք թափանցիկ չեն իրական սեփականատեր հանդիսացող ներդրողների վերաբերյալ տվյալների առումով:

2018թ.-ի ապրիլ-մայիսի թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունն արմատական փոփոխություններ է ձեռնարկում և փորձում է քայլ առ քայլ լուծել նախկին ավտորիտար և կոռումպացված ղեկավարության կողմից քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում ստեղծած հիմնախնդիրները:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել վերջին մոտ 20 տարիներին Հայաստանի Հանրապետությունում կատարված խոշոր ներդրումային, այդ թվում՝ մասնավորեցման, օտարման և այլ գործարքները, վեր հանել ու վերլուծել դրանց հետ կապված խնդիրները, թերությունները, սխալները, օրենսդրության բացերն ու կառավարման համակարգի խնդիրները, որոնց պատճառով Հայաստանի Հանրապետությունը և նրա քաղաքացիները կրել են նյութական և բարոյական վնասներ, չեն կարողացել ապահովել տնտեսական զարգացում և ստացված հասույթի հավասար բաշխում հասարակության բոլոր անդամների միջև և ունեցել են անդառնալի կորուստներ: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության մեջ այլ երկրների համեմատ ռուսական ներդրումների կամ ռուսական ընկերությունների մասնակցության անհամաչափ մեծ ծավալները՝ հաշվետվության մեջ զգալի տեղ է զբաղեցնում դրանց առնչվող անդրադարձը և համապատասխան գործարքների վերլուծությունը:

Ակնկալվում է, որ հետազոտության կողմից արձանագրված խնդիրները և քաղած դասերը Հայաստանի Հանրապետության նոր իշխանություններին կօգնեն կատարելագործել պետական կառավարման համակարգը և օրենսդրությունը, ինչը կապահովագրի երկիրը ապագայի սխալներից, կօգնի երաշխավորել մաքուր կապիտալի հոսքը, Հայաստանի տնտեսությունը նվազ խոցելի կդարձնի արտաքին աշխարհից եկող ցնցումների և տնտեսական վայրիվերումների նկատմամբ և կերաշխավորի, որ ներդրումները ծառայեն ժողովրդի շահերին:

Հետազոտությունն իրականացվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից: Հետազոտության գաղափարի հիմքում Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության

կենտրոնի (Center for International Private Enterprise - CIPE) աշխատանքն է, որով սահմանվել են արատավոր (corrosive) և կառուցողական (constructive) կապիտալի հասկացությունները:[4]

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության առանցքում Հայաստանի Հանրապետությունում 1997-2018թթ.-ին կատարված խոշոր ներդրումներն ու մասնավորեցման գործարքներն են, որոնք կատարվել են էներգետիկայի, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, ֆինանսական, տրանսպորտի և մի քանի այլ ոլորտներում: Ուսումնասիրության առարկա են դարձել հիմնականում որոշումների ընդունման գործընթացները՝ ներառյալ դրանց օրինականությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և վերահսկելիությունը: Մի քանի առանձին դեպքերում, երբ զեկույցում դիտարկված ընկերության հետ կապված զարգացումներ են եղել 2020թ.-ին՝ մինչև սույն հրապարակումը, զեկույցն անդրադարձել է նաև այդ գործարքներին և որոշումներին:

Հաշվի առնելով Հայաստանում ռուսական ընկերությունների կողմից ուղղակի կամ անուղղակի՝ երրորդ երկրների միջոցով կատարվող ներդրումների և գործարքների մեծ ծավալը՝ հետազոտությունը զգալի տեղ է հատկացրել ռուսական ընկերությունների ներգրավվածությամբ գործարքների ուսումնասիրությանը և դրանց վերլուծությունը:

Հետազոտության շրջանակներում օգտագործվել է ինչպե՛ս պաշտոնական, այնպե՛ս էլ ոչ պաշտոնական տեղեկատվություն: Վիճակագրական տվյալների մի մասը ստացվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքից: Ռուսաստանի կողմից Հայաստանում կատարվող օտարերկրյա ուղղակի ներդրումների դեպքում օգտագործվել են Ռուսաստանի Դաշնության ինտերնետային կայքում առկա տվյալները: Բացի այդ, պաշտոնական տեղեկատվությունը ստացվել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, նախարարությունների ու գերատեսչությունների և տարբեր հանձնաժողովների պաշտոնական ինտերնետային էջերից:

Հաշվի առնելով, որ պաշտոնական ինտերնետային կայքերում հազվադեպ են ներկայացվում փորձագիտական հանրության, միջազգային հանրության և ոչ պաշտոնական այլ տեսակետներ, կատարված ներդրումների և գործարքների վերաբերյալ կարծիքները հիմնականում քաղվել են

[4] Eric Hontz, “Building a Market for Everyone: How Emerging Markets Can Attract Constructive Capital and Foster Inclusive Growth”, CIPE Insights, 25 October 2019, https://www.cipe.org/newsroom/building-a-market-for-everyone-how-emerging-markets-can-attract-constructive-capital-and-foster-inclusive-growth

լրատվական ծառայությունների, հետաքննող լրագրողների, միջազգային կառույցների ինտերնետային կայքերից:

Զեկույցի սկզբում ներկայացվել են միջազգային ցուցանիշներով և համաթվերով գնահատված՝ կոռուպցիայի ընդհանուր վիճակը Հայաստանում:

Զեկույցում նկարագրվել են տեղի ունեցած իրադարձությունները, ներկայացվել են քննարկվող հարցի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները և ՀՀ կառավարության առնչվող որոշումները, իրադարձությունների վերաբերյալ մամուլում ներկայացված փորձագիտական հանրության տեսակետներն ու գնահատականները:

Գործընթացները վերլուծվել և գնահատվել են կառավարման համակարգի բացերի և խոցելի կետերի և գլխավոր ինստիտուտների դերակատարման տեսանկյունից: Վերլուծության հիման վրա կատարվել են եզրակացություններ և ներկայացվել են կառավարման համակարգի բարելավմանը միտված առաջարկություններ՝ ուղղված ՀՀ Ազգային ժողովին, կառավարությանը և պետական այլ կառույցների:

Ափսոսանքով արձանագրում ենք, որ սույն աշխատանքը կատարվում է այնպիսի ժամանակաշրջանում, երբ հանրային և պետական սեփականության զգալի մասն այլևս մասնավորեցվել և օտարվել է: Սակայն դա չի նվազեցնում հետազոտության կարևորությունը, քանի որ ուշադրություն է հրավիրում պետական կառավարման համակարգի թույլ կողմերի վրա և կարող է նպաստել դրա զարգացմանն ու կատարելագործմանը միտված նոր օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի ընդունմանը և պետական հաստատությունների կայացմանը:

Տվյալ հետազոտությունը կարող է օգտակար լինել անցումային արդարադատության նպատակով ձևավորվող փաստահավաք խմբի համար՝ ուսումնասիրելու և գնահատելու կոռուպցիոն գործարքները և հանրային ռեսուրսների չարաշահման դեպքերը: Բացի այդ, այն կարող է նյութ ծառայել իրավապահ մարմինների համար՝ իրականացնելու առանձին գործարքների քննություն և պատասխանատվության ենթարկելու Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը ռիսկի տակ դնող պաշտոնյաներին:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երկար տարիներ Հայաստանը տառապել է կոռուպցիայի բարձր մակարդակից: Պատկեր 1-ը ներկայացնում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի՝ Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը, որը տարիներ շարունակ չի գրանցել առանձնակի փոփոխություն և միայն 2019 թվականին արձանագրել է տեսանելի առաջընթաց:

Համաձայն Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի 2016թ.-ի հարցման՝ Հայաստանը տարածաշրջանում ամենավատ արդյունքներն էր գրանցել քաղաքացիների՝ կոռուպցիայի դեմ

պայքարելու ցանկության առումով: Հարցման մասնակիցների 66 տոկոսի կարծիքով Հայաստանում հարուստներն ունեն չափազանց մեծ ազդեցություն, իսկ 63 տոկոսը կարծում էր, որ շարքային քաղաքացու ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում ոչինչ չի փոխի: Կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավվել չի ցանկացել հարցվածների 52 տոկոսը, իսկ 67 տոկոսը հայտնել էր, որ չի բարձրաձայնի կոռուպցիոն դեպքերի մասին, եթե դրանց առնչվի կամ վկա լինի[5]:

Պատկեր 1. Հայաստանի կոռուպցիայի ընկալման համաթիվը[6]



Աղբյուր. Թրանսպարենսի Ինթերնեշնլ (https://transparency.am/en/cpi)

Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցանիշների համաձայն՝ անցած 25 տարիների ընթացքում Հայաստանը խիստ փոփոխական վարքագիծ է դրսևորել (Պատկեր 2), որի պատճառները հասկանալու համար կարևոր է վերլուծել այդ ժամանակահատվածում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները[7]:

---

[5] 2016թ. կոռուպցիայի համաշխարհային բարոմետր. https://transparency.am/en/gcb/2016:

[6] Հանրային հատվածում կոռուպցիայի ընկալման մակարդակը 0-ից 100 սանդղակով, որտեղ 0 նշանակում է «բացարձակ կոռումպացված», 100՝ «բացարձակ մաքուր». https://transparency.am/hy/cpi:

[7] Կառավարման համաշխարհային ցուցիչները ձևակերպվում են հետևյալ կերպ (https://info.worldbank.org/governance/wgi/Home/FAQ).

Քաղաքական կայունություն և բռնության/ահաբեկչության բացակայությունը ցույց է տալիս քաղաքական անկայության և պատճառներով բռնության, ներառյալ՝ ահաբեկչության հավանականությունը:

Ձայնի իրավունք և հաշվետվողականությունը ցույց է տալիս սեփական կառավարության ընտրությանը մասնակցելու կարողության քաղաքացիների ընկալումը, ինչպես նաև ազատ արտահայտվելու, հավաքներ անցկացնելու իրավունքը և ազատ մամուլի առկայությունը:

Կառավարման արդյունավետությունը բնութագրում է հանրային ծառայությունների որակը, քաղաքացիական ծառայության որակը և քաղաքական ազդեցությունից դրա անկախությունը, քաղաքականության ձևավորման և իրականացման որակը և այդ քաղաքականություններին կառավարության հավատարմությունը:

Կարգավորման որակը բնութագրում է մասնավոր հատվածի զարգացմանը նպաստող քաղաքականություններ ձևավորելու և իրականացնելու ու կարգավորումներ մշակելու կառավարության ունակությունը:

Օրենքի գերակայությունը բնութագրում է հանրային կանոնների հանդեպ վստահության և դրանց ենթարկվելու աստիճանի վերաբերյալ տնտեսվարողների ընկալումը, մասնավորապես, պայմանագրերի կատարումը պարտադրելու, սեփականության իրավունքի, ոստիկանության և դատարանների գործունեության որակը, ինչպես նաև հանցագործությունների և բռնությունների հավանականությունը:

Կոռուպցիայի նկատմամբ վերահսկողությունը բնութագրում է, թե ինչ չափով է հանրային իշխանությունն օգտագործվում անձնական շահ ստանալու համար, ներառյալ՝ մանր և խոշոր կոռուպցիան, ինչպես նաև էլիտայի և մասնավոր շահ հետապնդող կառույցների կողմից պետության «զավթումը»:

Մասնավորապես՝ ազատ և արդար ընտրությունների միջոցով իշխանություն ձևավորելու հնարավորությունից քաղաքացիների զրկված լինելը, ոչ թափանցիկ համաձայնություններն ու որոշումները, ներդրողների վերաբերյալ ոչ բավարար տեղեկատվությունը հանգեցրել են Կառավարման համաշխարհային ցուցանիշներից՝ «ձայնի իրավունք և հաշվետվողականություն» (voice and accountability) ցուցանիշի աստիճանական նվազման 41-ից՝ 1998թ.-ին մինչև 24-ը՝ 2009թ.-ին և դրա դանդաղ վերականգնման մինչև 32՝ 2017թ.-ին: 1998-2009-ի անկումը, հավանաբար, պայմանավորված է պարբերաբար կեղծվող ընտրություններով, իսկ մինչև 2017թ.-ի հարաբերական բարելավումը՝ այն հանգամանքով, որ Ազգային ժողովի և Երևանի ավագու ընտրությունների արդյունքները չվիճարկվեցին, թեև ընդդիմադիր ուժերը հայտարարում էին «բազմաթիվ ահազանգեր»-ի մասին[8]:

Պետական իշխանության տարբեր կառույցներ արդյունավետ չէին իրենց իշխանությունը կիրարկելու հարցում և չնայած Կառավարման համաշխարհային ցուցիչներից «կառավարության արդյունավետություն» ցուցանիշը մինչև 2013թ աճեց մինչև 57, հետագայում այն նվազեց մինչև 50՝ 2017թ.-ին, ինչն արտացոլում էր այդ մարմինների մի մասի ձախողումը:

Պատկեր 2. Կառավարման միջազգային ցուցիչները

Քաղաքական կայունություն, բռնության և ահաբեկչության բացակայություն



Ձայնի իրավունք և հաշվետվողականություն



[8] Նանե Սահակյան, «Ընդդիմադիրները քննադատում են ընտրությունները, թեև քվեարկության արդյունքն անվավեր ճանաչելու որևէ դիմում չեն ներկայացրել», Ազատություն ռադիոկայան, 4 ապրիլի 2017թ., https://www.azatutyun.am/a/28410550.html , «Պաշտոնական արդյունքներն, ընդհանուր առմամբ, ձևավորվել են ընտրություններին մասնակցած քաղաքացիների քվեարկության արդյունքում. «Ելք», 15 մայիսի 2017թ., https://www.brightarmenia.am/am/24/780/elq-dashinqi-haytararutyuny-2017t-azh-yntrutyunneri-veraberyal.html/, https://www.azatutyun.am/a/28488942.html, Սիսակ Գաբրիելյան, ««Ելք»-ը կարողացել է «արձանագրել դաշինքի օգտին տրված յուրաքանչյուր քվե»», Ազատություն ռադիոկայան, https://www.azatutyun.am/a/28489197.html:

Կառավարման արդյունավետություն



Կոռուպցիայի նկատմամբ վերահսկողություն



Օրենքի գերակայություն



Կարգավորման որակ



Չնայած միջազգային կազմակերպությունների արձանագրմամբ՝ օրենքի գերակայությունը որոշ չափով բարելավվել էր, դրա ընտրովի կիրառումը և անհավասար դատական պաշտպանությունը մնացել էին որպես խնդիր[9]:

Երկու տասնամյակ շարունակ նախագահական և խորհրդարանական ընտրությունների արդյունքների շարունակական և պարբերական կեղծումների արդյունքում իշխանության եկած և իշխանությունը պահպանած ՀՀ նախագահները, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և նրա հետ ասոցացվող գործարարների խումբը սկսեցին տնօրինել, տիրապետել և օգտագործել պետական կառավարման ամբողջ համակարգը և այն ծառայեցնել սեփական շահերին: ՀՀ երկրորդ և երրորդ նախագահների քսանամյա կառավարումը (Ռոբերտ

[9] Էրիկ Սվանիձե, Հայկուհի Հարությունյան և Տաթևիկ Մատինյան, «Արդարադատության ոլորտի վերաբերյալ հանրության կարիքները և ակնկալիքները Հայաստանում». Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ զեկույց, Եվրոպական միության «Արդարադատության մոնիթորինգ» ծրագիր Հայաստան՝ Pa*i,* CECIL-ի և «Ի Էլ Էլ Գործընկերության» հետ համատեղ, 2017թ., http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1057954891731_Justice_Monitoring.pdf:

Քոչարյան՝ 1998-2008, Սերժ Սարգսյան՝ 2008-2018), մեկ կուսակցության՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության գերիշխանությունը 1999-2018թթ.-ին հանգեցրեց կոռուպցիայի խորացման և արմատավորման: Բարձրաստիճան պետական պաշտոնյաները, նրանց հարազատները և նրանց հետ փոխկապակցված անձինք օժտված էին անվերահսկելի իշխանությամբ՝ զբաղեցնելով բարձր պաշտոններ դատական և իրավապահ համակարգերում, դիվանագիտական ոլորտում, հարկային և մաքսային ծառայություններում և այլ ոլորտներում, կամ «հաջողակ» գործարարներ էին՝ գրավելով գերիշխող դիրք մի շարք շուկաներում: Այդ իրավիճակը հանգեցնում էր հանրային միջոցների և ակտիվների չվերահսկվող ու անարդյունավետ օգտագործման և փակ սենյակներում կատարվող սեփականաշնորհման գործարքների, ինչի արդյունքում պետական իշխանությունը յուրացրած մարդկանց փոքր խումբը և նրանց մերձավորները կուտակում էին հսկայական հարստություն: Անօրինական դրամական հոսքերի ուսումնասիրությամբ զբաղվող միջազգային կառույցների ուսումնասիրությունների համաձայն, 2008-2017թթ.-ի ընթացքում Հայաստանից ավելի քան 10 մլրդ ԱՄՆ դոլար է դուրս բերվել, որոնք ակնհայտորեն անօրինական ճանապարհով ձեռք բերված գումարներ են[10]:

4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Մասնավորեցման գործընթացի իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը

Հայաստանում մասնավորեցման գործընթացը սկիզբ է առել և կարգավորվում է 1997թ.-ին ընդունված «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն, մասնավորեցումը կարող է իրականացվել բաժնետոմսերի ազատ բաժանորդագրության, աճուրդի, մրցույթի, ուղղակի վաճառքի, նոր բաժնետոմսերի բաց կամ փակ տեղաբաշխման, պարտատոմսերի թողարկման և դրանք հետագայում բաժնետոմսերի փոխարկման իրավունքով, մասնագիտացված շուկաներում բաժնետոմսերի վաճառքի և ֆիզիկական ու իրավաբանական անձանց և համայնքների գույքի նկատմամբ պետությանը պատկանող օգտագործման իրավունքի փոխանցմամբ11: Օտարերկրյա ներդրումները կարգավորվում են «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքով[12], որն ընդունվել է դեռևս 1994թ.-ին:

Հաշվի առնելով նշված օրենքների ընդունման ժամկետները՝ դրանք բավարար տեղ չեն հատկացրել պետական գույքի մասնավորեցման և օտարերկրյա ներդրումների գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության հարցերին: Համապատասխան իրավական հիմքերի բացակայությունը, անշուշտ, նպաստել է հետագա գործարքների խնդրահարույց լինելուն:

---

[10] Global Financial Integrity reports, https://gfintegrity.org/reports/. https://factor.am/1195.html:

[11] ՀՀ օրենք «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 17-ին. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=28458:

[12] ՀՀ օրենք «Օտարերկրյա ներդրումների մասին», ընդունվել է 1994թ. հուլիսի 4-ին. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872:

ՀՀ կառավարության կազմում մշտապես գործել է պետական գույքի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանում, սակայն այդ կառույցի ներգրավվածությունը մասնավորեցման խոշոր գործարքներում եղել է շատ փոքր: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կանոնադրության համաձայն՝ այն ոչ թե ուղղակի պատասխանատվություն է կրել պետական գույքի մասնավորեցման, այլ պետական գույքի մասնավորեցման արդյունավետության բարձրացման համար, ինչը կարող է նշանակել, որ նրան վերապահված է եղել մասնավորեցման գործընթացին օժանդակող դեր[13]:

1997թ.-ին Համաշխարհային բանկը կարծիք է հայտնել, որ ռազմավարական ներդրողները սեփականաշնորհվող ընկերություններում կարող են վերահսկիչ փաթեթ պահանջել: Համաշխարհային բանկի ենթադրությունը մատնացույց էր անում Հայաստանի օրենսդրության և ինստիտուցիոնալ կառուցվածքի թուլությունը օրենքի գերակայության, կանոնակարգման և կառավարման արդյունավետության առումով[14]:

4.2 Ակտիվների մասնավորեցման և ներդրումների պատմություններ

Ստորև նկարագրվում և վերլուծվում են Հայաստանի տնտեսության որոշ ոլորտներում անկախության տարիների զարգացումները, առանձին օբյեկտների մասնավորեցմանն ու ներդրումներին առնչվող որոշումների ընդունման գործընթացները, կառավարման թերացումներն ու ձախողումները, շահագրգիռ դերակատարների դիրքորոշումները:

Պետական սեփականություն հանդիսացող մի քանի ձեռնարկություններ, 2003թ.-ին, այսպես կոչված «գույք՝ պարտքի դիմաց» գործարքի արդյունքում փոխանցվել են Ռուսաստանին[15]:

[13] ՀՀ կառավարության N822-Ն որոշում, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և 2002 թվականի օգոստոսի 1-ի N1298-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N822-Ն որոշում, ընդունվել է 2003թ. հուլիսի 12-ին. https://www.arlis.am/documentview.aspx?docid=31648:

[14] World Bank. (1997). "Armenia: Privatizing Power". Report N17018-AM: 28 October 1997, http://documents.worldbank.org/curated/en/963871468740982829/pdf/multi0page.pdf.

[15] ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ԹԻՀԿ-ին տրամադրված տեղեկանքում նշվել են «Մարս» ՓԲԸ-ն՝ գնահատված 56.29 միլիոն ԱՄՆ դոլար, «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն՝ գնահատված 2.75 միլիոն ԱՄՆ դոլար, «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն՝ գնահատված 3.37 միլիոն ԱՄՆ դոլար, «Երևանի նյութագիտության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն՝ գնահատված 0,35 միլիոն ԱՄՆ դոլար:

4.2.1 Էներգետիկա

Հայաստանի էներգետիկ ոլորտը կազմված է արտադրող, տեղափոխող և բաշխող հզորություններից: Արտադրող հզորություններն են.

1. Հայաստանի ատոմային էլեկտրակայան (ՀԱԷԿ),
2. Հրազդանի ջերմաէլեկտրակայան (ՋԷԿ),
3. Հրազդան-5
4. Սևան-Հրազդան կասկադ
5. Որոտանի կասկադ
6. Երևանի համակցված ցիկլի էլեկտրակայան (Երևանի ՀՑԷ),
7. Երևանի ջերմաէլեկտրակայան (Երևանի ՋԷԿ),
8. Փոքր հզորությամբ մի շարք հիդրոէլեկտրակայաններ (ՀԷԿ):

«Բարձավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԲԷՑ) զբաղվում է էլեկտրական էներգիայի հաղորդմամբ, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ՀԷՑ) էլեկտրաէներգիայի բաշխմամբ և սպառողներին մատակարարմամբ: Աղյուսակ 1-ում ներկայացված են հիմնական արտադրող կայանների սեփականատերերի վերաբերյալ տվյալները:

Գազը և ՀԱԷԿ-ի վառելանյութը ներկրվում են Ռուսաստանից: Ռուսական գազը Հայաստան է տեղափոխվում խողովակաշարով, որն անցնում է Վրաստանի տարածքով:

Դարասկզբին, փորձագետների գնահատմամբ, առաջիկա տասնամյակի ընթացքում Հայաստանի էներգետիկ ոլորտն ուներ ավելի քան մեկ միլիարդ դոլարի ներդրումների կարիք[16]:

2016 թվականի տվյալներով Հայաստանի էներգետիկ ոլորտը մեծ պարտքեր էր կուտակել: Համաշխարհային բանկի հրապարակման համաձայն, Հայաստանի էներգետիկ ոլորտը աճող ֆինանսական ճեղք ուներ, ինչը պայմանավորված էր (ա) հիմնական գործունեության հետ կապ չունեցող նպատակներով ծախսեր կատարելով և դրա համար վարկեր վերցնելով, (բ) ՀԷՑ-ի չվճարումներով, և (գ) ինքնածախսածածկում չապահովող սակագներով[17]: Սա շարունակաբար պետական անարդյունավետ կառավարման, օրենքի գերակայություն չապահովելու, վատ կարգավորումների և ոլորտում լայնորեն տարածված կոռուպցիայի դրսևորում է:

[16] Emil Danielyan, "Armenia: World Bank Urges Fairness in Energy Privatization", Radio Liberty, 14 February 2000, https://www.rferl.org/a/1093287.html:

[17] Gyulumyan, Gohar; Shankar, Rashmi.2016. *Republic of Armenia programmatic fiscal work supporting effective fiscal management (English).* Washington, D.C.: World Bank Group. http://documents.worldbank.org/curated/en/958421481287940209/Republic-of-Armenia-programmatic-fiscal-work-supporting-effective-fiscal-management:

Աղյուսակ 1. Հայաստանի էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների սեփականատերերը

Արտադրող կարողություն	Սեփականատեր		Տեսակ	Հզորություն	Աշխատող կարողություն	Սեփականատիրոջ բաժնեմաս (%)
	Կազմակերպություն	Երկիր				
ՀԱԷԿ	ՀՀ կառավ.	Հայաստան	Միջուկային	815 ՄՎ	407 ՄՎ	100
Հրազդանի ՋԷԿ	Տաշիր	Ռուսաստան	Ջերմային	810 ՄՎ	420 ՄՎ	100
Հրազդան-5	Գազպրոմ	Ռուսաստան	Ջերմային	440 ՄՎ	440 ՄՎ	100
Երևանի ՀՑԷ	ՀՀ կառավ.	Հայաստան	Ջերմային	242 ՄՎ	242 ՄՎ	100
Երևանի ՋԷԿ	ՀՀ կառավ.	Հայաստան	Ջերմային	550 ՄՎ	0 ՄՎ	100
Սևան-Հրազդան կասկադ	Տաշիր	Ռուսաստան	Հիդրո	560 ՄՎ	560 ՄՎ	100
Որոտան	Կոնտուր գլոբալ	ԱՄՆ	Հիդրո	404 ՄՎ	404 ՄՎ	100
Փոքր ՀԷԿ-եր	Տարբեր	Տարբեր	Հիդրո	267 ՄՎ	267 ՄՎ	Առկա չէ
ԸՆԴԱՄԵՆԸ				**4088 ՄՎ**	**2740 ՄՎ**	

Աղբյուր. Համաշխարհային բանկ[18]

Ծանոթություն. Համաշխարհային բանկի հրապարակման աղյուսակում Հրազդանի ՋԷԿ-ի և Սևան-Հրազդան կասկադի սեփականատերեր են նշված «Գազպրոմ»-ը և «ՌԱՕ ԵԷՍ»-ը: 2016թ.-ից հետո այդ կառույցների սեփականությունն անցել է «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ին:

[18] Նույն տեղում

Հայաստանի իշխանություններն ունեցել են էներգետիկայի ոլորտը դիվերսիֆիկացնելու, տարանցիկ երկիր դառնալու և Իրանի հետ սահմանին նոր ՀԷԿ կառուցելու ծրագրեր[19]: 2014թ.-ին ՀՀ կառավարությունը Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման համար բացառիկ գերակա հանրային շահ է ճանաչել որոշ համայնքների պատկանող տարածքներ[20], իսկ 2006թ.-ին համաձայնություն է տվել Արաքս գետի վրա ՀԷԿ-եր կառուցելուն և շահագործելուն[21]: Հարկ է նշել, որ այս վերջին ծրագիրը 2020թ.-ի դրությամբ չի իրագործվել:

Իրականում, մասնավորեցման ու ներդրումների անհաջող քաղաքականության և կասկածելի գործարքների արդյունքում պետության հավակնոտ ծրագրերից շատերը չեն իրականացվել:

4.2.1.1 Հայաստանի էլեկտրական ցանցեր

Հայաստանում հանրային գույքի մասնավորեցման առաջին խոշոր, առավել քաղաքական և աղմկահարույց գործընթացը **Հայաստանի էլեկտրական ցանցինն** էր (այսուհետ՝ ՀԷՑ):

ՀԷՑ-ը բաղկացած էր չորս իրավաբանական անձանցից՝ «Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ, «Հյուսիսային էլեկտրացանց» ՓԲԸ, «Հարավային էլեկտրացանց» ՓԲԸ և «Կենտրոնական էլեկտրացանց» ՓԲԸ, որոնց սեփականաշնորհումը նախատեսվում էր «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքով: Չնայած հավաքագրումների բարձր մակարդակին՝ ՀԷՑ-ն աշխատում էր մեծ վնասով[22]:

1999թ.-ի հունիսին ՀՀ կառավարությունն իր որոշմամբ հաստատեց երկփուլ միջազգային տենդերի միջոցով վերը նշված ընկերությունների պետական բաժնեմասերի առնվազն 51 տոկոսի մասնավորեցման գործընթացը, որի առաջին փուլը նախնական որակավորում էր

---

[19] ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության, Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև էլեկտրաէներգետիկայի և հզորության տարացման մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին N1398-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=40542, ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության, Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև էլեկտրաէներգետիկ համակարգերի զուգահեռ աշխատանքի մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին N1400-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=40545 և ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 20-ի «Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագրի մասին» N1334-Ն որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=46088:

[20] ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 28-ի «Իրան-Հայաստան 400 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N923-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92624: Բացառիկ՝ գերակա հանրային շահ են ճանաչվել հետևյալ տարածքները՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքային համայնքի, Գեղարքունիքի մարզի Զովաբեր, Դդմաշեն, Ծաղկունքի, Գեղամավանի, Լճաշենի, Չկալովկա, Բերդկունք, Գանձակ, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Երանոս, Վարդաձոր, Ջորագյուղ, Ծակքար, Լիճք, Ն. Գետաշեն, Մադինա, Գեղհովիտ, Վայոց ձորի մարզի Աղնջաձոր, Վերնաշեն, Արին, Գնդեվազ, Սարավան, Սյունիքի մարզի Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան, Անգեղակոթ, Ույծ, Աղիտու, Նորավան, Վաղատին, Հարժիս, Հալիձոր, Տաթև, Լեհվազ գյուղական համայնքների, Սիսիանի քաղաքային համայնքի գյուղատնտեսական նշանակության հողեր:

[21] ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա ՀԷԿ-եր կառուցելու և շահագործելու մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» N1598-Ա որոշում:

[22] Emil Danielyan. *Armenia: Bidders Quit Energy Privatization Race,* Radio Liberty, 6 April, 2001. https://www.rferl.org/amp/1096163.html:

նախատեսում[23]: Մրցույթը հաղթելու հիմնական չափանիշ էին սահմանվել ոլորտում կապիտալ ներդրումները, որի համար անհրաժեշտ էր 200 մլն դոլար:

Մրցույթը պետք է իրականացվեր Միջազգային զարգացման գործակալության կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության երկրորդ վարկային ծրագրի (SAC-II) շրջանակներում 1998թ.-ի դեկտեմբերի 17-ին՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ էներգետիկայի նախարարության, ՀՀ սեփականաշնորհման նախարարության և «Ռայֆայզեն ինվեսթմենթ Էյ Ջի» ու «Բի Էս Էյ Լիմիթիդ» միջազգային խորհրդատվական ընկերությունների կոնսորցիումի միջև ստորագրված պայմանագրին համապատասխան:

Միջազգային գործընկերները հավատում էին ՀՀ կառավարության արագ և թափանցիկ մասնավորեցում իրականացնելու հանձնառությանը: Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ) պաշտոնյան հայտարարում էր. «Քանի որ որոշ ժամանակ առաջ կառավարությունը և խորհրդարանը հիմնարար որոշում են կայացրել ամբողջությամբ թափանցիկ եղանակով մասնավորեցնել Հայաստանի բաշխիչ էլեկտրական ցանցերը, այժմ կարևոր է, որպեսզի մասնավորեցման գործընթացն իրականացվի հնարավորինս արագ և թափանցիկ: Սա Հայաստանին կօգնի ձերբազատվել կորուստների և գողության պատճառով տեղի ունեցող ֆինանսական արտահոսքից և նաև կարևոր ազդակ կուղարկի աշխարհին այն մասին, որ Հայաստանը լրջորեն հետաքրքրված է օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում»[24]: Ջեյմսթաուն հիմնադրամը, որի առաքելությունը ԱՄՆ համար ռազմավարական և մարտավարական առումներով կարևոր հասարակություններում տեղի ունեցող իրադարձությունների և դրանց միտումների վերաբերյալ քաղաքական որոշումներ կայացնողներին և լայն հասարակությանը իրազեկելն է, կարծիք էր հայտնել, որ, հեռահաղորդակցության ոլորտում մասնավորեցման ձախողումից և Երևանի կոնյակի գործարանի մասնավորեցման «երկունքից» հետո բաշխիչ էլեկտրական ցանցերի մասնավորեցման մրցույթը դիտվում էր որպես վատ կառավարվող պետական սեփականությունը մասնավորեցնելու կարողության և ցանկության փորձաքար[25]: Որպես մասնավորեցման մրցույթում հաղթելու հիմնական չափանիշ՝ պաշտոնյաները նշում էին ոլորտում կապիտալ ներդրումների ծավալը[26]:

ՀԷՑ-ի սեփականաշնորհման հարցը մի քանի անգամ քննարկվել է Ազգային ժողովում: 2000թ.-ի մարտի 22-ին Ազգային ժողովը չորս պատգամավորների՝ Արթուր Բաղդասարյանի, Խորեն Սարգսյանի, Արշակ Սադոյանի և Հայկ Բաբուխանյանի առաջարկով ՀԷՑ-ի սեփականաշնորհման հարցը քննարկելու նպատակով արտահերթ նիստ է գումարել:

---

[23] ՀՀ կառավարության 1999թ. հունիսի 10-ի ««Երևանի էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերության, «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերության, «Հյուսիսային էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերության, «Հարավային էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերության պետական բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» N407 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=39095:

[24] International Monetary Fund, "The Economic Transition in Armenia – Speech by John Odling-Smee, Director, European II Department", Speech given at the American University of Armenia, 31 July 2001, https://www.imf.org/en/News/Articles/2015/09/28/04/53/sp073101:

[25] Jamestown Foundation, "Landmark Privatization Project Fails in Armenia …", 25 April 2001, Monitor Volume: 7, Issue: 80, https://jamestown.org/program/landmark-privatization-project-fails-in-armenia/#!:

[26] Emil Danielyan, "Armenia: World Bank Urges Fairness in Energy Privatization", Radio Liberty, 2 February 2000, https://www.rferl.org/a/1093287.html:

Ազգայնական և ռուսամետ կուսակցությունները դեմ էին արտահայտվում սեփականաշնորհմանը և հայտարարում, որ տնտեսության ռազմավարական ոլորտն օտարերկրյա վերահսկողության տակ դնելը սպառնում է ազգային անվտանգությանը: Մասնավորապես՝ «Սահմանադրական իրավունք» միություն կուսակցության անդամ, «Իրավունք և միաբանություն» խմբակցությունը ներկայացնող պատգամավոր Հայկ Բաբուխանյանն իր ելույթում նշում էր աշխարհաքաղաքական հանգամանքների և գերտերությունների դերի, սպառողների շահերի պաշտպանության, հանրային շահերի և մաֆիայի մասին[27]: «Ազգային ժողովրդավարական դաշինք» կուսակցության նախագահ, պատգամավոր Արշակ Սադոյանն ընդգծում էր, որ սա ոչ թե մասնավորեցում է, այլ նժարին է դրված Հայաստանի անկախությունը[28]: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ներկայացնող և նույնանուն խմբակցության պատգամավոր Խորեն Սարգսյանը պահանջում էր ՀԷՑ-ը հեռացնել մասնավորեցման ցանկից[29]: Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ, «Միասնություն» խմբակցության պատգամավոր Վարդան Բոստանջյանն[30] առաջարկում էր, որպեսզի Ազգային ժողովը նախապայման դնի, որի համաձայն ՀԷՑ-ը կարող է մասնավորեցվել այն երկրին, որը ՀԱԷԿ-ին վառելիք է մատակարարում[31]:

Ռուս գործընկերներն, իրենց հերթին, ճնշում էին գործադրում ՀՀ կառավարության վրա: 2000թ.-ի փետրվարին, հղում կատարելով «Ազգ» օրաթերթին, «Ազատություն» ռադիոկայանը տեղեկատվություն հրապարակեց, որ ռուսական էներգետիկ հսկան՝ Գազպրոմը, իր կողմից ստեղծված «Իտերա» կորպորացիայի համար նախապատվություն ստանալու նպատակով, Մոսկվայի աջակցությամբ ներգործում էին ՀՀ կառավարության վրա[32]: ԱՄՆ-ում գրանցված «Իտերա»-ն երբեք ներգրավված չէր եղել էլեկտրաէներգիայի բաշխման գործառույթում և չուներ նման փորձ: Ռուսական լրատվամիջոցները Գազպրոմին մեղադրում էին իր հսկայական եկամուտները օֆշորային հաշիվներ ուղարկելու գործում «Իտերա»-ն օգտագործելու մեջ:

Համաշխարհային բանկը ՀՀ իշխանություններին հորդորում էր ապահովել ՀԷՑ-ի մասնավորեցման գործընթացի թափանցիկությունը և զերծ մնալ ռուսական ընկերությունների հետ գաղտնի համաձայնություններ ձեռք բերելուց: Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Ջուդի Օ'Քոնորը 2000թ.-ի փետրվարի 8-ին գրություն էր ուղարկել ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանին՝ կոչ անելով հավատարիմ մնալ մրցույթի ընթացքում արդար մրցակցության կանոններին: Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի խոսնակի համաձայն՝ գրությունը աջակցության նշան էր, այլ ոչ՝ մտահոգության վկայություն:

---

[27] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Հայկ Բորիսի Բաբուխանյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=281&lang=arm:

[28] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Արշակ Ավետիսի Սադոյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=189&lang=arm:

[29] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Խորեն Թռչունի Սարգսյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=271&lang=arm:

[30] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Վարդան Բաբկենի Բոստանջյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=256&lang=arm:

[31] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման երրորդ նստաշրջանի 2000թ. մարտի 22-ի սղագրություն, http://www.parliament.am/transcript.php?AgendaID=147&day=22&month=03&year=2000&lang=arm:

[32] Emil Danielyan, "Armenia: World Bank Urges Fairness in Energy Privatization", Radio Liberty, 02 February, 2000, https://www.rferl.org/a/1093287.html:

Երբ 2000թ.-ի ապրիլի սկզբին Հայաստանը աճուրդին մասնակցությունից հեռացրեց ռուսական «Իտերա» ընկերությանը, Գազպրոմը պահանջեց անմիջապես վճարել մատակարարված գազի դիմաց Հայաստանի 16 մլն ԱՄՆ դոլար ընթացիկ պարտքը և սպառնաց[33], որ ամբողջությամբ կդադարեցնի գազի մատակարարումը, եթե Հայաստանը չվճարի պարտքը մինչև ապրիլի 24-ը, որն օսմանյան կայսրությունում 85 տարի առաջ իրականացված Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օրն էր: Ռուսաստանն արդեն իսկ երկու անգամ և ավելի կրճատել էր Հայաստանին մատակարարվող գազի ծավալը, և տվյալ օրվա հիշատակումը լրացուցիչ զգացմունքայնություն էր հաղորդում խնդրին: Հայաստանում Ռուսաստանի դեսպանը ապրիլի 19-ին դատապարտեց մրցույթից «Իտերա»-ի հեռացումը և հայտարարեց, որ մրցույթին ռուսական ընկերությունների մասնակցության արգելքը հակասում է տնտեսական համագործակցության խորացման ռուս-հայկական համաձայնագրի դրույթներին:

Վերջնագիրը և կարճ վերջնաժամկետը կապվում էր ՀԷՑ-ի սեփականաշնորհման հետ: Չնայած մատակարարված գազի դիմաց Հայաստանի կուտակած ընթացիկ պարտքը բավականին մեծ էր, նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունները շատ ավելի մեծ ընթացիկ պարտքեր ունեին, և Հայաստանը ամենավատ պարտապանը չէր: Հայաստանում Թուրքմենստանի դեսպան Թոյլի Կուրբանովը դրական էր արտահայտվել Հայաստանի մասին՝ որպես իր ֆինանսական պարտականությունները բարեխղճորեն կատարող երկրի: Նա նշել էր, որ չնայած Հայաստանը դեռևս 14 միլիոն ԱՄՆ դոլար պարտք ունի Թուրքմենստանին նախկինում մատակարարված վառելիքի դիմաց, բայց նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների համեմատ Հայաստանը շատ ավելի լավ է կատարում իր պարտավորությունները:

ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Կարեն Գալուստյանը 2000թ.-ի ապրիլի 18-ին հայտարարեց, որ «Իտերա»-ն դուրս է մնացել մրցույթից, որովհետև չի ներկայացրել իր ֆինանսական բարվոք վիճակը հավաստող միջազգային աուդիտորական ընկերության եզրակացություն: Գալուստյանը նաև հայտարարեց, որ մրցույթի հաջորդ փուլ են անցել իսպանական Union Fenosa-ն, ամերիկյան AES (Applied Energy Services) Silk Road-ը, Ֆրանսիական Electricity de France-ն և շվեդա-շվեյցարական Asea Brown Boveri-ն (ABB):

Համաշխարհային բանկը, որը «ներկայացնում էր» արևմտյան շահերը, Հայաստանի իշխանություններին «ակնարկում էր», որ մրցույթում սատարում է Ամերիկյան «AES» ընկերությանը[34]: Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Ջուդի Օ'Քոնորը, 2000թ.-ի հունիսին Երևան այցելության ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը կստանա կառուցվածքային բարեփոխումների վարկի (structural adjustment credit կամ SAC) վերջին 50 մլն ԱՄՆ դոլար մասնաբաժինը միայն ՀԷՑ-ի բարեհաջող սեփականաշնորհումից հետո: 50 մլն ԱՄՆ դոլարը պետք է ծածկեր պետական բյուջեի կանխատեսվող պակասուրդի

[33] Emil Danielyan, "Armenia: Gazprom Puts Pressure on Debtor", Radio Liberty, 21 April 2000, https://www.rferl.org/a/1093793.html:

[34] "Most likely, the Russian "Itera" Company is not Going to Give up its Participation in the Tender for the Privatization of Distributive Power Networks of Armenia", Mediamax, 26 July 2000, http://www.panarmenian.net/m/eng/news/8300:

մոտավորապես կեսը: Համաշխարհային բանկը կարծում էր, որ ո՛չ «Իտերա»-ն և ո՛չ էլ «Ռոսէներգոատոմ»-ն ի վիճակի չեն բավարարել աճուրդի նվազագույն պահանջները[35]:

2000թ.-ի հուլիսի 24-ին «Պրայմ-ՏԱՍՍ» գործակալությանը տրված հարցազրույցում «Իտերա»-ի նախագահ Վալերի Օչերցովը հայտարարեց, որ Հայաստանի խորհրդարանը կասեցրել է սեփականաշնորհման գործընթացը և որ իրենք «Միասնական էներգահամակարգ» ռուսական բաժնետիրական ընկերության («ՌԱՕ ԵԷՍ»-ի) և «Ռոսէներգոատոմ»-ի հետ միասին ՀՀ կառավարությանն առաջարկել են ստեղծել համատեղ ձեռնարկություն՝ ներգրավելով Հայաստանի էներգետիկայի մասնագետներին, և որ Հայաստանը Վրաստանի տարածքով կամ ուղիղ էլեկտրաէներգիա կարող է արտահանել Թուրքիա[36]: Հայաստանի իշխանությունները չեն նշել «Իտերա»-ից այդպիսի առաջարկ ստանալու մասին: Էներգետիկայի նախարար Դավիթ Զադոյանը հայտարարեց, որ «Իտերա»-ն փորձել է կոնսորցիում ձևավորվել Union Fenosa-ի հետ:

2000թ.-ի հուլիսի 28-ին Ազգային ժողովն ընդունեց միջազգային մրցույթի միջոցով ՀԷՑ-ի սեփականաշնորհում նախատեսող «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցնելու մասին» ՀՀ օրենքը: ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում աճուրդի փաստաթղթերը կուղարկի ՀԷՑ-ի մասնավորեցմամբ հետաքրքրված կազմակերպություններին[37]:

2000թ.-ի հոկտեմբերին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀԷՑ-ի մասնավորեցման ժամանակացույցը[38]: Դրա համաձայն ՀՀ Ազգային ժողովը պետք է մինչև 2001թ.-ի մարտի 15-ն ընդուներ օրենսդրական փաթեթը, իսկ մինչև ապրիլի 15-ը՝ ՀՀ կառավարությունը պետք է մրցութային վերջնական փաստաթղթերն առաքեր մրցույթի մասնակիցներին: Մրցույթի մասնակիցներն իրենց առաջարկությունները պետք է հանձնեին մինչև 2001թ.-ի ապրիլի 19 ժամը 18:00-ը: Հանձնաժողովը պետք է մրցութային առաջարկությունների ծրարները բացեր և առաջարկվող գները հայտարարեր մինչև նույն օրը՝ 18:05, իսկ մրցույթի արդյունքները՝ 2001թ.-ի ապրիլի 20-ին: ՀՀ կառավարությունը նախատեսում էր մրցույթի հաղթողների հետ բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիրը կնքել մինչև 2001թ.-ի ապրիլի 27-ը:

---

[35] Emil Danielyan, "Armenia: World Bank Urges Fairness in Energy Privatization", Radio Liberty, 02 February 2000, https://www.rferl.org/a/1093287.html:

[36] "Most likely, the Russian "ITERA" Company is not Going to Give up its Participation in the Tender for the Privatization of Distributive Power Networks of Armenia", Mediamax, 26 July 2000, http://www.panarmenian.net/m/eng/news/8300:

[37] International Monetary Fund, "Republic of Armenia: Staff Report for the 2001 Articl IV Consultation and Request for a Three-Year Arrangement Under the Poverty Reduction and Growth Facility", Country Report N02/73, from 2 April 2002, https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2016/12/30/Republic-of-Armenia-Staff-Report-for-the-2001-Article-IV-Consultation-and-Request-for-a-15756:

[38] ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N696 որոշում https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=39144:

Մեկ տասնյակից ավելի ձախակողմյան կուսակցություններ և ՀԿ-ներ, ներառյալ խորհրդարանի «Միասնություն» դաշինքի մաս հանդիսացող Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, 2001թ.-ի մարտի 19-ին հայտարարություն տարածեցին՝ կառավարությանը կոչ անելով հրաժարվել բաշխիչ ցանցերի 51 տոկոս բաժնեմասը օտարերկրյա ներդրողներին վաճառվելուց: Նրանք պնդում էին, որ, ռազմավարական ոլորտը օտարերկրացիների վերահսկողության տակ դնելով, Հայաստանի ղեկավարությունը վտանգում է ազգային անվտանգությունը[39]:

Ռուսամետ ուժերը Հայաստանի աղքատ բնակչությանը ահաբեկում էին արևմուտքի կողմից գաղութացման սպառնալիքով: Ռուսամետ ուժերը Հայաստանի աղքատ բնակչությանը ահաբեկում էին արևմուտքի կողմից գաղութացման սպառնալիքով: Պոպուլիստները պնդում էին, որ «օտարները կբարձրացնեն էլեկտրաէներգիայի սակագները»: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ ռուսական ընկերությունների սեփականություն դառնալուց հետո ՀԷՑ-ը մի քանի անգամ բարձրացրեց էլեկտրաէներգիայի սակագները, և, մյուս կողմից, դարձավ էներգետիկ համակարգում հսկայական պարտքերի կուտակման պատճառ[40]:

ՀԷՑ-ի մասնավորեցման գործընթացն էլ ավելի բարդացավ, երբ կոմունիստների խմբակցության առաջնորդությամբ ընդդիմությունն այն վիճարկեց Ազգային ժողովի 2001թ.-ի ապրիլի 2-ի արտահերթ նիստում[41]: Կոմունիստական կուսակցությունը հայտարարում էր, որ կառավարությունը տանում է ժողովրդին ստրկացման և կախվածության մեջ է դնում արևմտյան կապիտալից[42]: Նիստի ժամանակ ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Արեգ Գալստյանը նշեց, որ մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների հավաքագրումը 2000թ.-ին կազմել է 88 տոկոս: Կոմունիստական խմբակցության ղեկավար Ֆրունզե Խառատյանը ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և «Երևանի էլեկտրացանց», «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավորեցնելու մասին» 2000 թվականի հուլիսի 28-ին ընդունված օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը[43]: Կոմունիստ պատգամավոր Խորեն Սարգսյանն ակնարկեց, որ մասնավորեցման միջոցով որոշ մարդիկ ցանկանում են լցնել սեփական գրպանները: Կոմունիստական խմբակցության մեկ այլ անդամ՝ Յուրա Մանուկյանը հայտարարում էր, որ եթե Հայաստանում տեր դառնան արտասահմանյան մեծահարուստները, Ռուսաստանը, որն այսօր Հայաստանին կես գնով է վաճառում գազը, կբարձրացնի դրա գինը, ինչն էլ կհանգեցնի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման:

---

[39] "Armenian Left Demands End to Energy Privatization", Newsline, Radio Liberty, 20 March 2001, https://www.rferl.org/a/1142365.html

[40] Նույն տեղում և ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման հինգերորդ նստաշրջանի 2001թ. ապրիլի 2-ի սղագրություն, http://parliament.am/transcript.php?AgendaID=698&day=02&month=04&year=2001&lang=arm#02.04.2001:

[41] Հարկ է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարումից հետո խորհրդային / կոմունիստական կուսակցության ազդեցությունը Հայաստանի քաղաքական դաշտում զգալիորեն թոթափվել է: Հետագայում, նույնիսկ պարբերաբար կեղծվող ընտրությունների պայմաններում, կոմունիստական կուսակցությունը և դրա ներկայացուցիչները չեն կարողացել խորհրդարան անցնել ինքնուրույն, այլ ընդգրկվել են իշխող ՀՀԿ կուսակցության ցուցակներում:

[42] Նույն տեղում:

[43] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Ֆրունզե Արմենակի Խառատյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=274&lang=arm:

Նա նաև հայտնեց, որ նախկին ԽՍՀՄ այլ երկրներում արտասահմանյան ընկերությունները հանրային կառույցներին թույլ են տալիս պարտքեր կուտակել, որի դիմաց հետագայում այլ սեփականություն են պահանջում կառավարություններից[44]: «Ժողովրդի ձայն» պատգամավորական խումբը ներկայացնող Մանուկ Գասպարյանը հայտարարում էր, որ «ԱրմենՏելի» և Կոնյակի գործարանի օրինակով ցանկանում են «կողքից փող աշխատել» և պնդում էր, որ «Իտերա»-ն «բացարձակապես ռուսական կազմակերպություն չէ: «Իտերա»-ի ամենաքիչը 75-80 տոկոսը արտասահմանին է պատկանում, և նրա մեջ մտած հիմնական փայատերերը ջհուդներ են»[45]:

Ի վերջո, ՀՀ Ազգային ժողովը չընդունեց ՀԷՑ-ի սեփականաշնորհումը դադարեցնելու վերաբերյալ օրենքը:

ՀԷՑ-ի սեփականաշնորհումը դարձավ խիստ քաղաքականացված գործընթաց, որի վերջնական փուլում ՀՀ կառավարությունը սկսեց «խաղալ» աճուրդի պայմանների հետ: Ջեյմսթաուն հիմնադրամի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանն անուղղակի կերպով ընդունել էր, որ մրցույթի վերջնական փուլում ՀՀ կառավարությունը փոխել էր մրցույթի որոշ պայմաններ: Այդ փոփոխությունները նվազեցնում էին նոր սեփականատիրոջ լիազորությունները, տարաձայնությունների դեպքում կրճատում էին ռեսուրսները տնօրինելու նրա ազատությունը և տեղական առանձին կոռումպացված և ստվերային խմբերի հնարավորություն էին տալիս խառնվել սեփականաշնորհված ՀԷՑ-ի գործերին[46]:

2001թ.-ի ապրիլի 21-ին, աճուրդի վերջին օրը, կառավարության անդամները մինչև ուշ երեկո նիստերի դահլիճում նստած սպասում էին շահագրգիռ ներդրողների: Չնայած նախապես 15 ընկերություն դիմել էր մրցույթին մասնակցելու համար, այդ պահի դրությամբ մրցույթին ենթադրաբար մասնակցում էին ամերիկյան AES Silk Road-ը և իսպանական Union Fenosa-ն: Ֆրանսիական Electricity de France-ն մրցույթը լքել էր 2000թ.-ի դեկտեմբերին, իսկ շվեդա-շվեյցարական ABB-ն՝ 2001թ.-ի մարտի 28-ին:

Ի վերջո՝ աճուրդը չկայացավ: Որևէ արևմտյան լուրջ ներդրող այլևս հետաքրքրված չէր ՀԷՑ-ի մասնավորեցման գործարքով:

ՀՀ էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանն ընդունեց, որ արևմտյան ներդրողներին հետ պահող գործոններից մեկը ձախ հայացքներ ունեցող քաղաքական ուժերի ցույցերն էին: Այլ պատճառների թվում նշվում էր միաժամանակ Ուկրաինայում ընթացող համանման մրցույթը:

Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի խոսնակ Վիգեն Սարգսյանը կասկած հայտնեց մասնավորեցում իրականացնելու կառավարության մտադրության մասին, ասելով, որ լուրջ չէ, երբ մասնավորեցման գործարքի ավարտից երեք շաբաթ առաջ քննարկումներ է

[44] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Յուրա Ավագի Մանուկյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=276&lang=arm:

[45] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Մանուկ Հովհաննեսի Գասպարյան, http://www.parliament.am/deputies.php?sel=details&ID=193&lang=arm:

[46] Jamestown Foundation, "Landmark Privatization Project Fails in Armenia …", Monitor Volume: 7, Issue: 80, 25 April 2001, https://jamestown.org/program/landmark-privatization-project-fails-in-armenia/#!:

ծավալում դրա վերաբերյալ այն դեպքում, երբ գործընթացն արդեն երկու տարի է շարունակվում է[47]:

2001թ.-ի ամռանը ՀՀ կառավարությունը վերսկսեց ՀԷՑ-ի մասնավորեցման գործընթացը[48]: Մասնակիցները մրցութային առաջարկությունները մրցութային հանձնաժողովին պետք է ներկայացվեին մինչև 2001թ.-ի սեպտեմբերի 28-ի ժամը 18:00-ն, մրցույթի արդյունքները պետք է հայտարարվեին 2001թ.-ի հոկտեմբերի 1-ին, իսկ բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագիրը պետք է կնքվեր 2001թ.-ի հոկտեմբերի 2-ին: Կառավարությունը 75 տոկոս գումարած մեկ բաժնետոմս էր առաջարկում բոլոր չորս ցանցերում:

Ռուսական «ՌԱՕ ԵԷՍ»-ը նախաորակավորման աճուրդին հայտ ներկայացրած միակ ընկերությունն էր[49]: Մասնավորեցման նախորդ մրցույթի վերջնական փուլ անցած արևմտյան չորս ընկերությունները համարվում էին ինքնըստինքյան որակավորված, չնայած նրանք որևէ հետաքրքրություն չէին արտահայտել: Սեպտեմբերին, Երևանում լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ռուսաստանի Դաշնության առաջին փոխվարչապետ Իլյա Կլեբանովը հայտարարել էր, որ և՛ Գազպրոմը, և՛ «Իտերա»-ն կպայքարեն ՀԷՑ-ի 51 տոկոս բաժնեմասի համար, իսկ «Իտերա»-ն իսպանական Union Fenosa-ի հետ համատեղ հայտ կներկայացնի: Union Fenosa-ի ներկայացուցիչները հերքեցին այդ լուրերը: Ի վերջո՝ ո՛չ Գազպրոմը և ո՛չ էլ «Իտերա»-ն հայտ չներկայացրեցին: Այս աճուրդը ևս ձախողվեց:

2002թ.-ի հուլիսին ՀՀ կառավարությունը հերթական անգամ վերսկսեց ՀԷՑ-ի մասնավորեցումը և շատ արագ, 2002թ. օգոստոսի 26-ին, 37 մլն ԱՄՆ դոլարով այն վաճառեց բրիտանական Միդլենդ ռեսորսիզ հոլդինգին (այսուհետ՝ Միդլենդ) [50]: Միդլենդը մրցույթի միակ մասնակիցն էր, զբաղվում էր մետաղների առևտրով, ուներ տարեկան 132 մլն ԱՄՆ դոլարի շրջանառություն և չուներ էներգետիկայի կառավարման բնագավառում որևէ փորձ:

Մասնավորեցման այս գործարքը որևէ էական դիմադրության չհանդիպեց:

2003թ.-ի մարտին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց, որով արձանագրեց, որ ՀԷՑ-ի մասնավորեցման օրվա դրությամբ ՀՀ կառավարության կողմից երաշխավորված 27,985,000 ԱՄՆ դոլարը գերազանցվել է 8.6 մլրդ դրամի, կամ մոտավորապես 14,85 մլն ԱՄՆ դոլարի չափով[51]: ՀՀ կառավարությունը Միդլենդին հետ վերադարձրեց գումարի մի մասը և արտոնություններ տրամադրեց հարկերի և սոցիալական վճարների գծով: Հնչում

---

[47] Emil Danielyan, "Armenia: Bidders Quit Energy Privatization Race", Radio Liberty, 6 April 2001. https://www.rferl.org/amp/1096163.html:

[48] ՀՀ կառավարության 2001թ. հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության էներգահամակարգի էլեկտրաէներգիա բաշխող ընկերությունների մասնավորեցման աշխատանքները կանոնակարգելու մասին» N499 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=8623:

[49] Emil Danielyan, "Russia's Gazprom, ITERA out of Armenian Energy Bidding", Radio Liberty, 1 October 2001, https://www.azatutyun.am/a/1567070.html:

[50] ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 18-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման գործընթացը կազմակերպելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N407 որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2001 թվականի մայիսի 8-ի N411 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1005-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=9691:

[51] ՀՀ կառավարության 2003թ. մարտի 20-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման օրվա դրությամբ կրեդիտորական պարտավորությունների մասին» N272-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=10724:

էին տեսակետներ, որ Միդլենդի գործարքի հետևում կանգնած է Ազգային ժողովի պատգամավոր Հարություն Փամբուկյանը[52], և որ այդ գործարքը կատարվել է Ռոբերտ Քոչարյանի մասնակցությամբ և հովանավորությամբ[53]:

Ինչպես պարզվեց հետագայում՝ ՀԷՑ-ի մասնավորեցման գործարքի դեպքում օգտագործվել էր ձևական «արևմտյան» միջնորդ ընկերություն՝ ժամանակավորապես շեղելով Հայաստանի արևմտյան գործընկերների՝ Համաշխարհային բանկի և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID, այսուհետ՝ ԱՄՆ ՄԶԳ) ուշադրությունը, հնարավորություն տալով ընդամենը մի քանի տարի անց ՀԷՑ-ը վաճառել այն իրականում ձեռք բերող ընկերությանը:

Այսպես, Միդլենդի կողմից ՀԷՑ-ը ձեռք բերելուց երեք տարի դեռ չէր անցել, երբ 2005թ.-ի հուլիսին Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի ղեկավար Ռոջեր Ռոբինսոնը հայտարարեց, որ «ՌԱՕ ԵԷՍ»-ի բաժնետերերի ընդհանուր ժողովում հրապարակված ֆինանսական հաշվետվության վերջին պարբերության համաձայն այն 73 մլն ԱՄՆ դոլարով ձեռք է բերել ՀԷՑ-ը: Միդլենդը կտրականապես հերքում էր ընկերության բաժնետոմսերի վաճառքի փաստը՝ պնդելով, թե ընդամենը «Ինտերէներգո» ընկերությանն է փոխանցել ՀԷՑ-ի կառավարման իրավունքը: «Ազատություն» ռադիոկայանի հարցին ի պատասխան՝ «ՌԱՕ ԵԷՍ»-ի մամուլի ծառայության ներկայացուցիչ Տատյանա Միլյաևան ասաց, որ Միդլենդը «այնքան էլ իրավացի չէ»: Միլյաևան նաև հայտարարեց, որ բաժնետերերի ընդհանուր ժողովում հրապարակված ֆինանսական հաշվետվությունը արդեն հանել են «ՌԱՕ ԵԷՍ»-ի ինտերնետային էջից[54]:

Միդլենդը ևս հերքեց վաճառքի մասին լուրը և հայտարարեց, որ ՀԷՑ-ի կառավարումը 99 տարով հանձնել է «ՌԱՕ ԵԷՍ»-ին: Համաշխարհային բանկը բացատրություններ պահանջեց ՀՀ կառավարությունից: Հարկ է նշել, որ վաճառքի վերաբերյալ հայտարարությունը արտառոց էր, քանի որ ՀՀ օրենսդրության և ՀԷՑ-ի վաճառքի պայմանների համաձայն Միլդենդը չէր կարող այն վաճառել առանց ՀՀ իշխանությունների համաձայնության:

ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը մարտ ամսին դեմ էր արտահայտվել ՀԷՑ-ը «ՌԱՕ ԵԷՍ»-ին վաճառելուն: Նա հայտարարել էր, որ այդպիսի գործարքը չի համապատասխանի արդեն մեկ տասնամյակից ավելի Հայաստանի էներգետիկ ոլորտում իրականացվող բարեփոխումների առանցքային նպատակներից մեկին, այն է՝ արտադրող, առաքող և բաշխող կարողությունների սեփականատերերի տարանջատմանը[55]:

ԱՄՆ ՄԶԳ-ն զգուշացրեց, որ «կարող է վերանայել Հայաստանի էներգետիկ ոլորտին տրամադրվելիք օժանդակության փաթեթը»: Համաշխարհային բանկի երևանյան

[52] ՀՀ Ազգային ժողովի երկրորդ գումարման պատգամավոր Հարություն Կարոյի Փամբուկյան, http://parliament.am/deputies.php?sel=details&ID=171&lang=arm:

[53] Հարցազրույց տնտեսագետ Վահագն Խաչատուրյանի հետ, «Հայաստանի էլեկտրական ցանցերի գործունեության մասին», Քաղաքական դիսկուրս, 26 հունիսի 2015թ. http://diskurs.am/2015/06/548:

[54] Ազա Բաբայան և Շաբե Ավոյան, «Ռուսաստանյան ընկերությունը հերքում է, թե գնել է Հայաստանի բաշխիչ ցանցերը», Ազատություն ռադիոկայան,13 հուլիսի 2005թ., https://www.azatutyun.am/a/1577698.html:

[55] Atom Margaryan, "World Bank Set To Accept Russian Takeover Of Armenian Power Grid", Radio Liberty, 13 September 2005, https://www.azatutyun.am/a/1578447.html:

գրասենյակի ղեկավար Ռոջեր Ռոբինսոնն ասել էր. «Չեմ կարծում, որ Համաշխարհային բանկը պետք է համոզի կառավարությանը, որ Հայաստանի օրենսդրությունը հարգվի» [56]:

2005թ.-ի սեպտեմբերին Միդլենդը ՀԷՑ-ը «ՌԱՕ ԵԷՍ»-ի դուստր ձեռնարկությանը վաճառելու հայտ ներկայացրեց Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (ՀԾԿՀ): Սկզբում Համաշխարհային բանկը դեմ էր «ՌԱՕ ԵԷՍ»-ի կողմից ՀԷՑ-ի ձեռքբերմանը, սակայն հետագայում տեղի տվեց: 2005թ.-ի սեպտեմբերի 13-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ արդեն Ռոջեր Ռոբինսոնը լրագրողներին ասել էր. «Շատ կարևոր էր որ Հայաստանի հանրությունը տեսնի, որ ամեն ինչ արվում է օրենքի տառին համապատասխան» [57]:

2015թ.-ի հունիսին էլեկտրաէներգիայի սակագինը բարձրացնելու ՀԾԿՀ որոշումը լայնածավալ դժգոհությունների և բողոքի ցույցերի պատճառ դարձավ[58]: Իրավիճակի հանգուցալուծում դարձավ ՀԷՑ-ի վաճառքը «Տաշիր»-ին:

2015թ.-ի սեպտեմբերին «Տաշիրը» ձեռք բերեց ՀԷՑ-ի բաժնետոմսերի 100 տոկոսը: «Ազատություն» ռադիոկայանը նշում էր, որ, «Հայկական ժամանակ» թերթի համաձայն, ՀԷՑ-ի ձեռքբերման գործարքին, բացի «Տաշիր»-ի սեփականատեր Սամվել Կարապետյանից, մասնակցում են Գագիկ Ծառուկյանը, Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը և Ազգային ժողովի նախկին պատգամավոր Հարություն Փամբուկյանը[59]:

Ռուսական պետական ընկերությունների սեփականություն հանդիսանալը չօգնեց բարելավել ՀԷՑ-ի կառավարումը: Համաշխարհային բանկի տվյալների համաձայն, 2015թ.-ի օգոստոսին Հայաստանի չորս պետական ընկերություններին՝ ՀԱԷԿ-ին, Երևանի ՋԷԿ-ին, Երևանի ՀՑԷ-ին և ԲԷՑ-ին միասին վերցրած, ՀԷՑ-ը պարտք էր 22.4 մլրդ դրամ: Չնայած ՀԷՑ-ը հավաքագրում է մատակարարած էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների մեծ մասը, այն ֆինանսական ծանր վիճակում էր հայտնվել արտադրող տարբեր կայանների կողմից կանխատեսված և փաստացի մատակարարվող էլեկտրաէներգիայի համամասնությունների տարբերության պատճառով: ՀԷՑ-ը ծրագրավորվածի համեմատ ավելի շատ էլեկտրաէներգիա էր ստանում այն կայաններից, որոնք ավելի թանկ էլեկտրաէներգիա էին մատակարարում, և ավելի քիչ՝ այն կայաններից, որոնք ավելի էժան էլեկտրաէներգիա էին մատակարարում:

Հարկ է նկատել, որ ՀԷՑ-ի սեփականաշնորհումը առաջին դեպքն էր, երբ Հայաստանի հիմնական ֆինանսավորող գործընկեր կառույցը՝ Համաշխարհային բանկը, որը բավական խիստ և կոշտ դիրքորոշում ուներ տարբեր ոլորտներում ընթացող բարեփոխումների առնչությամբ և սովորաբար պահանջում էր ազատ շուկայական հարաբերությունների

[56] Ռուզաննա Ստեփանյան, «Հայաստանի բաշխիչ ցանցերի սեփականատերը «տեղեկություններ է տրամադրել կառավարությանը»», Ազատություն ռադիոկայան 20 հուլիսի 2005թ., https://www.azatutyun.am/a/1577795.html:
[57] Atom Margaryan, "World Bank Set To Accept Russian Takeover Of Armenian Power Grid", Radio Liberty, 13 September 2005, https://www.azatutyun.am/a/1578447.html:
[58] «Էլեկտրիկ Երևան. Մեկ տարի անց», Սիվիլնեթ, 23 հունիսի 2016թ., https://www.civilnet.am/news/2016/06/23/էլեկտրիկ-երևան-մեկ-տարի-անց/295547:
[59] Саргис Арутюнян, "Основатель компании, приобретающей ЭСА, работает в банке принадлежащем Самвелу Карапетяну", Радио Свобода, 18 сентября 2015г., https://rus.azatutyun.am/a/27256229.html:

ոգուն հավատարիմ արմատական բարեփոխումներ, տեղի տվեց: Հետագայում Համաշխարհային բանկի դերն ավելի նվազեց, երբ այն հայտնվեց «մրցակցային» իրավիճակում, ուր Հայաստանին օժանդակություն էին առաջարկում և տրամադրում Եվրոպական Միությունը, Ասիական զարգացման բանկը, Չինաստանը, արաբական երկրների զարգացման հիմնադրամները և այլ կառույցներ:

4.2.1.2 Հայռուսգազարդ - «Գազպրոմ»

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում գազի մատակարարումը խաթարվել էր տարածաշրջանային բախումների պատճառով, և այն հնարավոր եղավ վերականգնել միայն Հարավային Կովկասում հարաբերական քաղաքական կայունություն հաստատելուց հետո:

«Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն, որը 2013թ.-ին վերանվանվեց **«Գազպրոմ Արմենիա»-ի**, ստեղծվել է 1997թ.-ին որպես ՀՀ կառավարության (45 տոկոս), Գազպրոմի (45 տոկոս) և «Իտերա» Միջազգային էներգետիկ ընկերություն ՍՊԸ-ի (10 տոկոս) համատեղ ձեռնարկություն[60]: 1998թ.-ին ՀՀ կառավարությունը գործող «Հայգազարդ» ՓԲԸ-ին հանձնարարեց Հայաստանի 270 մլն ԱՄՆ դոլար գումար արժեքով գազատրանսպորտային համակարգը ներդնել «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ում և 148.5 մլն ԱՄՆ դոլար վճարումը ստանալ գազի տեսքով[61]: 2007թ.-ի ելույթում Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի հիմնադիր փաստաթղթերի համաձայն, ռուսական կողմը ստանձնել էր 55 տոկոս բաժնեմասի դիմաց Հայաստանին չորս տարի անվճար գազ մատակարարել: Տեր-Պետրոսյանի համաձայն, Հայաստանի իշխանություններն այդ գազը սպառեցին երկու տարվա ընթացքում՝ 1998-1999թթ.-ին, «իսկ նրա վաճառքի դիմաց գոյացած 148 միլիոն դոլարը, նախագահ Քոչարյանի վկայությամբ, պարզապես անհետացավ»[62]:

Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն 2007թ.-ին 118 մլն ԱՄՆ դոլար արժեքով բաժնետոմսեր թողարկեց, որոնք ամբողջությամբ ձեռք բերեց «Գազպրոմ»-ը[63],: Արդյունքում, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կապիտալում «Գազպրոմ»-ի բաժնետոմսերի տեսակարար կշիռը հասավ 57.59 տոկոսի, ՀՀ կառավարության և «Իտերա»-ի բաժնեմասերը կազմեցին համապատասխանաբար 34.7 և 7.71 տոկոս[64]:

---

[60] ՀՀ կառավարության 1997թ. սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության, Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաժնետիրական ընկերության և «Իտերա» ընկերության միջև «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու հիմնադիր պայմանագրի մասին» N373 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6252:

[61] ՀՀ կառավարության 1998թ. սեպտեմբերի 18-ի ««Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունն ապահովող առաջնահերթ միջոցառումների մասին» N568 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48492

[62] Տեր-Պետրոսյան, Լևոն, Հատված 2007թ. դեկտեմբերի 22-ի ելույթից, «Վերադարձ. Ելույթներ, հարցազրույցներ, մամլո ասուլիսներ», Երևան, 2009, էջ 147:

[63] Սամվել Ավագյան, ««Հայռուսգազարդի» ռուսիֆիկացման պատմությունը», 5 դեկտեմբերի 2013թ., https://hetq.am/hy/article/31171:

[64] Հայռուսգազարդ, «Երևանում կայացել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը», 30 հունիսի 2007թ., https://armenia-am.gazprom.com/press/news/2007/06/834/:

2011թ.-ի փետրվարի 28-ին «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն հայտարարեց, որ փետրվարի 25-ին կայացած հանդիպման[65] ժամանակ Հայաստանի և Ռուսաստանի նախագահներ Սերժ Սարգսյանը և Դմիտրի Մեդվեդևը պայմանավորվել են, որ Հայաստանին մատակարարվող գազի գինը չի բարձրանա[66]: 2011թ.-ի հուլիսին «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն հերքում էր Ռուսաստանի կողմից մատակարարվող գազի գինը հազար խորանարդ մետրի դիմաց 180 ԱՄՆ դոլարից 270-ի բարձրացնելու վերաբերյալ մամուլի հրապարակումները: «Հայռուսգազարդի» մամուլի խոսնակ Շուշան Սարդարյանը հայտնում էր. «Որքան ես եմ տեղեկացված, գազի գնի բարձրացում տեղի չի ունեցել: Եթե նման բան տեղի ունենար, ապա «Հայռուսգազարդ»-ը սպառողներին մատակարարվող գազի սակագինը փոխելու առաջարկով կդիմեր հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով»[67]:

Երկու տարի անց, 2013թ.-ի մայիսի 14-ին «Հայռուսգազարդ»-ը սպառողներին մատակարարվող գազի գինը բարձրացնելու խնդրանքով հայտ ներկայացրեց ՀԾԿՀ: ՀՀ վարչապետը հայտարարեց, որ կառավարությունը պատրաստ է սուբսիդավորել գազի գինը և գրություն ուղարկեց ՀԾԿՀ-ին[68]: Առանց փաստարկ ներկայացնելու, ՀՀ վարչապետը ՀԾԿՀ նախագահին առաջարկում էր՝ ՀՀ սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման ժամանակ հանրապետություն ներկրվող բնական գազի՝ պայմանագրով նախատեսված հազար խորանարդ մետրի դիմաց 270 ԱՄՆ դոլար ձեռքբերման գնի փոխարեն հաշվարկներում հիմք ընդունել 30 տոկոսով ցածր գին: ՀՀ վարչապետը խոստանում էր, որ ՀՀ կառավարությունը կփոխհատուցի տարբերությունը, և որ փոխհատուցման մեխանիզմները քննարկվում են ՌԴ կառավարության և «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի հետ:

2013թ.-ի մայիսի 23-ին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը դեռևս պնդում էր, որ բանակցությունները շարունակվում են, և ներկա պահին գործող հազար խորանարդ մետրի դիմաց 180 ԱՄՆ դոլար սակագինը կիրառվելու է մինչև բանակցությունների ավարտը[69]:

Հետագայում պարզվեց, որ Հայաստանին մատակարարվող գազի սակագնի ավելացում նախատեսված էր դեռևս ռուսական «Գազպրոմ Էքսպորտ» ՍՊԸ-ի[70] և «Հայռուսգազարդ»

---

[65] «Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Ռուսաստանի Դաշնություն», 25 փետրվարի 2011թ., https://www.president.am/hy/foreign-visits/item/2011/02/25/news-232, "Встреча с Президентом Армении Сержем Саргсяном", 25 февраля 2011г, http://kremlin.ru/catalog/countries/AM/events/10437):

[66] ԱրմենիաՆաու, «Բարի լուր սպառողների համար. նախագահները պայմանավորվել են կանխել երկնագույն վառելիքի սակագնի բարձրացումը», https://www.armenianow.com/hy/economy/27934/armenia_russia_gas_price, «Հայոց աշխարհ. Գազի գինը չի բարձրանա», Երկիր, 26 փետրվարի 2011թ., https://www.yerkir.am/news/view/3553.html, կամ «Սարգսյան-Մեդվեդև հանդիպումն ավարտվեց. Հայաստանի սպառողների համար գազի գինը 2011-ին չի բարձրանա:Սանկտ Պետերբուրգում քիչ առաջ ավարտել է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի և Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը», 25 փետրվարի 2011թ., http://www.aaeurop.com/?p=4643): Հետքը՝ https://old.hetq.am/arm/news/31460/hayastani-300-mln-dolar-partqy-nerarum-e-naev-hayrusqazardi-yntacik-partqery.html հղում էր կատարել «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի էջին (http://www.armrusgasprom.am/am/infocenter/news/581), որը սակայն այլևս հասանելի չէ:

[67] ««Հայռուսգազարդը» մեկնաբանում է գազի թանկացման մասին տեղեկությունը», 13 հուլիսի 2011թ., https://news.am/arm/news/67756.html:

[68] ՀՀ վարչապետի աշխատակազմի 2013թ. մայիսի 14-ի 01/23.16/6490-13 գրություն, որի պատճենը ուղարկվել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին, ինչպես նաև ներկայացվել է ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

[69] Արթուր Վարդանյան, «Արմեն Մովսիսյանը հրապարակել է իրանական գազի գինը», 23 մայիսի 2013թ., https://168.am/2013/05/23/228763.html:

[70] «Գազէքսպորտ» ԲԲԸ-ն ստեղծվել է «Գազպրոմ» ռուսական բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 1997թ. ապրիլի 9-ի N39 և 1998թ. փետրվարի 12-ի N53 որոշումներով: Պետական գրանցման մարմնում 1999թ. մայիսի 12-ին ստացել է N028081 վկայականը: Հիմնադիր սեփականատիրոջ որոշմամբ 2006թ. ընկերությունը վերանվանվել է «Գազպրոմ

ՓԲԸ միջև 2008թ.-ի սեպտեմբերի 12-ի №2102-08-22 պայմանագրով, որի համապատասխան էջի լուսապատճենը ներկայացված է Պատկեր 3-ում:

Պատկեր 3. «Հայռուսգազարդը» ՓԲԸ-ի և «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի միջև ստորագրված պայմանագրի սակագներին վերաբերող էջը (ռուսերեն)



8

6.3. Коммерческие Акты сдачи-приемки Природного газа являются основанием для проведения взаиморасчетов Сторон.

7. Переход права собственности

Право собственности на Природный газ переходит к Покупателю в момент пересечения Природным газом границы Республика Грузия/Республика Армения. После перехода права собственности Покупатель несет все риски и принимает на себя всю ответственность, связанную с правом собственности на Природный газ.

8. Цена Природного газа

8.1. Цена Природного газа, поставляемого по настоящему Контракту, на условиях DAF-граница Республика Грузия/Республика Армения устанавливается в долларах США за 1000 куб.метров в размере согласно приведенной ниже таблице:

Период поставки газа	Цена Природного газа в долларах США за 1000 куб.м
С 1 января 2009 года по 31 марта 2009 года	110,0
С 1 апреля 2009 года по 31 марта 2010 года	154,0
С 1 апреля 2010 года	200,0
С 2011 года конкретная дата будет согласована дополнительно	Для поставок Природного газа на период с 2011 г. Стороны не позднее 01.01.2011г. согласуют уровень базисной цены и условия ее индексации. В случае, если Стороны не достигнут соглашения по уровню базисной цены и условиям ее индексации на поставку Природного газа с 2011г., Продавец освобождается от обязательств по поставке Природного газа с 2011 года.

Указанные выше цены на Природный газ устанавливаются при низшей теплотворной способности, равной 7900 ккал/куб.м.

8.2. В случае, если средневзвешенная фактическая месячная низшая теплотворная способность поставленного Природного газа будет выше или ниже теплотворной способности, указанной в пункте 8.1. настоящего Контракта, цена будет соответственно изменяться прямо пропорционально увеличению или уменьшению средневзвешенной фактической месячной низшей теплотворной способности поставленного газа и определяться по формуле:

$P_x = P_n \times Q_{факт} / 7900$, где:

P_x – фактическая цена Природного газа;

P_n – контрактная цена Природного газа;

$Q_{факт}$ – средневзвешенная фактическая месячная низшая теплотворная способность. Для целей настоящей Статьи $Q_{факт}$ определяется на ГИС Кохб, удостоверяется уполномоченной в установленном законодательством РА порядке организацией и представляется Покупателем Продавцу не позднее 5 (пяти) рабочих дней после окончания Месяца поставки.

2011-2013թթ.-ին մատակարարվող գազի սակագնի վերաբերյալ կողմերը ստորագրել են 3 լրացուցիչ համաձայնագիր, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. 2011-2013թթ.-ին մատակարարվող գազի սակագնի վերաբերյալ «Հայռուսգազարդը» ՓԲԸ-ի և «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագրերի տվյալները

Լրացուցիչ համաձայնագրի		Լրացուցիչ համաձայնագրի գործողության ժամկետը	1000 մ^3 գազի սակագինը (ԱՄՆ դոլար)
հերթական համարը	ստորագրելու օրը		
6	04.06.2011	01.06.2011 – 31.03.2012	210
15	28.06.2012	01.04.2012 – 01.04.2013	240
23	29.03.2013	01.04.2013 – 31.03.2014	270

էքսպորտ» ՍՊԸ, http://www.gazpromexport.ru/about/history: «Գազպրոմը» «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատերն է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը հանդիսացել է «Հայռուսգազարդ»-ի 20 տոկոսի բաժնետեր, անհնար է, որպեսզի նա տեղյակ չլիներ նշված լրացուցիչ համաձայնագրերի առկայությունից: «Հայռուսգազարդ»-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են աուդիտի[71]:

Ռուսաստանի հետ գազային երեք համաձայնագրերը ստորագրվեցին 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի Երևան կատարած այցի ժամանակ: Դրանք վավերացվեցին ՀՀ ազգային ժողովի կողմից 2013թ.-ի դեկտեմբերի 23-ի արտահերթ նիստին:

ՀՀ Ազգային ժողովի 2013թ.-ի դեկտեմբերի 23-ի նիստն անցավ գերլարված մթնոլորտում: Նիստի ողջ ընթացքում ԱԺ պարիսպներից դուրս ընթանում էր բողոքի ցույց: ԱԺ-ում հավատարմագրված մի խումբ լրագրողներ ֆլեշմոբ իրականացրեցին ինչպես իրենց համար նախատեսված հատվածում, այնպես էլ՝ նիստերի դահլիճում: ԱԺ ընդդիմադիր կուսակցություններն ակտիվորեն աշխատում էին քվեարկությունը տապալելու ուղղությամբ: «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանը, Հայ ազգային կոնգրես խմբակցության կողմից հայտարարված ընդմիջման ժամանակ հավաքեց որոշ ՀՀԿ-ական պատգամավորների քվեարկության քարտերը[72], ինչն անհնար դարձրեց էլեկտրոնային քվեարկությունը:

Գազային համաձայնագրերի վավերացման նպատակով իրականացվեց բաց քվեարկություն: Դեմ և ձեռնպահ քվեարկողներ չեղան, քանի որ ոչ իշխանական՝ «Բարգավաճ Հայաստան»-ը, Հայ ազգային կոնգրեսը (այսուհետ՝ ՀԱԿ), ՀՅԴ-ն ու «Ժառանգություն» խմբակցությունների պատգամավորները քվեարկության ժամանակ լքեցին խորհրդարանի նիստերի դահլիճը: Բացի այդ, տեղի ունեցավ ընթացակարգի խախտում, քանի որ հաշվարկային հանձնաժողովի 7 անդամներից 4-ը չմասնակցեցին ձայների հաշվարկին: Ընդդիմադիր ուժերը համապատասխանաբար հայտարարեցին, որ համաձայնագիրը չի կարող վավերացված համարվել, քանի որ կոպտորեն խախտվել է «ԱԺ կանոնակարգ» օրենքը[73]:

Վերը նշված երեք համաձայնագրերը և 2013թ.-ի բյուջեի մասին օրենքում փոփոխությունը, որով «Հայռուսգազարդ»-ում ՀՀ կառավարության 20 տոկոսի վաճառքով պայմանավորված դրամական հոսքերի մի մասն արտացոլվեց պետական բյուջեում, ստացան 72 ձայն (դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0)[74]: Արտահերթ նիստի ժամանակ ԱԺ-ն փոփոխություն կատարեց նաև «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում:

---

[71] Ըստ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի 2011-2015թթ. ֆինանսական հաշվետվությունների՝ վերջինիս ֆինանսական աուդիտն իրականացվել է PricewaterhouseCoopers ընկերության կողմից:

[72] «Զարուհի Փոստանջյանը հավաքել է քվեարկության քարտերը (տեսանյութ)», A1պլյուս, 23 դեկտեմբերի 2013թ., https://a1plus.am/hy/article/79772:

[73] Աստղիկ Բեդևյան, «Խորհրդարանը վավերացրեց գազային համաձայնագրերը», Ազատություն ռադիոկայան, 23 դեկտեմբերի 2013թ., https://www.azatutyun.am/a/25209371.html:

[74] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման 2013 թվականի դեկտեմբերի 20-23-ի արտահերթ նստաշրջանի արձանագրություն, 20 դեկտեմբերի 2013թ., http://parliament.am/register.php?ID=346, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման արտահերթ նստաշրջանի 20 դեկտեմբերի, 2013թ.-ի նիստի սղագրություն, http://parliament.am/transcript.php?AgendaID=2554&day=20&month=12&year=2013&lang=arm#20.12.2013, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման արտահերթ նստաշրջանի 23 դեկտեմբերի 2013թ. նիստի սղագրություն. http://parliament.am/transcript.php?lang=arm&month=12&year=2013:

2013թ. դեկտեմբերի հայ-ռուսական գազային պայմանագրի կնքումով ոչ միայն «Հայռուսգազարդ»-ն ամբողջությամբ անցավ Ռուսաստանին, այլև Հայաստանը պարտավորվեց մինչև 2043թ.-ի վերջը երաշխավորել «Գազպրոմ»-ի իրավունքներն ու շահերը Հայաստանում, իսկ գազի գները ֆիքսվեցին առաջիկա 5 տարիների համար[75]: Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ կնքված՝ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի վերաբերյալ համաձայնագրից տպավորություն է ստեղծվում, որ հայկական կողմը դրա առանձին դրույթների վերաբերյալ չի բանակցել, և ռուսական կողմը պայմանագրում դրանք ներառել է այն տեսքով, ինչպես ցանկացել է: Օրինակ, վերը նշված համաձայնագրի համաձայն, հայկական կողմը մինչև 2043թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ երաշխավորել է «Գազպրոմ» ԲԲԸ-ի, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի և դրանց իրավահաջորդների իրավունքներն ու շահերի անձեռնմխելիությունը, ըստ էության, Հայաստանի Հանրապետությանը զրկելով մինչև 2043թ.-ի ավարտը գազի գնման, տարանցման և այլ աշխատանքների հետ կապված ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից[76]:

Մինչ Հայաստանի պաշտոնյաները[77] փորձում էին «Գազպրոմ»-ին երկար ժամանակով արտոնյալ պայմանների տրամադրումը հիմնավորել իրանական գազի բարձր գնի վերաբերյալ պնդումներով, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսին հայտարարում էր. «Մի բան էլ կա. գուցե մի երկիր ինչ-որ մի երկրի հազար խորանարդ մետրը վաճառի 400 դոլարով, մի այլ երկրի ցանկանա վաճառել 100 դոլարով: Դա կախված է երկու երկրների միջև ձեռք բերված համաձայնությունից» [78]:

2014թ.-ի փետրվարին Ազգային ժողովը քննարկեց[79] ԱԺ պատգամավորների մեկ երրորդի նախաձեռնությամբ ներկայացված՝ Գալուստ Սահակյանի, Դավիթ Հարությունյանի, Հեղինե Բիշարյանի հեղինակած «Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» ԱԺ որոշման նախագիծը՝ արդեն պոստ-ֆակտում ուսումնասիրելու Գազպրոմի հանդեպ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի 300 միլիոն ԱՄՆ դոլարի պարտքը ստանձնելու և դրա դիմաց «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ում իր ունեցած 20 տոկոս բաժնեմասը Գազպրոմին փոխանցելու արդեն իսկ կատարված գործարքի օրինականությունը: Հանձնաժողովի մոտեցումը ձևական էր, և տպավորություն ստեղծվեց, որ այն պարզապես ստեղծվել էր կառավարության գործողությունները «օրինականացնելու» նպատակով:

---

[75] «ՀՀ Նախագահի նստավայրում կայացել են հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցություններ», մամուլի հաղորդագրություն, 2 դեկտեմբերի 2013թ, https://www.president.am/hy/press-release/item/2013/12/02/President-Serzh-Sargsyan-meeting-with-the-President-Vladimir-Putin:

[76] Դանիել Իոաննիսյան, «Գազի գնի պայմանագիրը ավարտվում է, մենաշնորհը՝ ոչ», Իրազեկ քաղաքացիների միավորում, 21 դեկտեմբերի 2018թ. https://uic.am/5276:

[77] Ռուզաննա Ստեփանյան, «Նախարար. Հայաստանը «Հայռուսգազարդ»-ին իրականում պարտք էր 300 միլիոն դոլար», Ազատություն ռադիոկայան, 4 դեկտեմբերի 2013թ., https://www.azatutyun.am/a/25190033.html:

[78] Սարգիս Հարությունյան, «Դեսպան. Հայաստանն Իրանից գազ ներկրելու շուրջ չի բանակցել», Ազատություն ռադիոկայան, 6 դեկտեմբերի 2013թ., https://www.azatutyun.am/a/25192067.html:

[79] «Ազգային ժողովը շարունակեց քառօրյա նիստերի աշխատանքը», 25 փետրվարի 2014թ., http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=6437&year=2014&month=02&day=25: Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 26 փետրվարի 2014թ.-ի «Հայաստանի Հանրապետության գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» ԱԺ որոշում. http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4919&lang=arm:

Ստեղծված հանձնաժողովն, իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի հիման վրա, եկել էր եզրակացության, որ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կուտակված առևտրային պարտքի ձևավորումը օրինական է և տնտեսապես հիմնավոր, ունի պայմանագրային հիմք, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-Ի-ի 2012-2013թթ.-ի պարտքի փոխհատուցման պարտավորության ստանձնումը ՀՀ կառավարության կողմից համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին և օրինական է, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի առևտրային պարտքը «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի տեսակետից չի կարող որակվել որպես պետական պարտք, քանի որ իր ֆինանսատնտեսական բովանդակությամբ այն ՀՀ կառավարության կողմից դիտարկվել է որպես բյուջետային ծախս, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ՀՀ կառավարության 20 տոկոսը բաժնեմասի օտարումն իրականացվել է «ՌԴ կառավարության և ՀՀ կառավարության միջև «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության վերաբերյալ» 2013 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված և ԱԺ կողմից վավերացված համաձայնագրի հիման վրա և օրինական է: Հանձնաժողովում ընդդիմությունը ներկայացնող պատգամավորները վերապահումներ ունեին հանձնաժողովի եզրակացությունների վերաբերյալ: ՀԱԿ խմբակցության ղեկավար Լևոն Զուրաբյանը հայտարարեց, որ իրենց ներկայացուցիչը հատուկ կարծիք ուներ և որ ներկայացված փաստաթուղթը «կեղծիք» է, պատգամավոր Գագիկ Ջհանգիրյանը հայտարարեց, որ կառավարությունը «ինքնագլուխ» վաճառել է պետական սեփականությունը, իսկ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը հարց ուղղեց, թե «ինչո՞ւ է Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ նախագահը քննարկում գազի գինը», քանի որ նրա կարծիքով, գործընթացում ներգրավված բոլոր կազմակերպությունները ռուսական են[80]: Ընդդիմադիր պատգամավորների հարցերը հիմնականում մնացին անպատասխան:

Հարկ է նշել, որ մինչև 20% բաժնետոմսերը Գազպրոմին փոխանցելը ՀՀ կառավարությունը «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին փոխանցել էր զգալի ծավալով գույք[81]:

2012թ.-ի ՀՀ կառավարությունն ընդունել է երկու որոշում, որոնց համաձայն Շիրակի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզպետներին հանձնարարել է, Շիրակի մարզի Ախուրյան, Լոռու մարզի Արծնի, Տավուշի մարզի Թեղուտ, Սյունիքի մարզի Քաջարան, Լեռնաձոր, Կապան, Գորիս համայնքներին առաջարկել համայնքների սեփականությունը հանդիսացող գազաբաշխիչ գազատարները, որոնք կառուցվել են տարբեր ծրագրերով, համայնքների սեփական կամ ներգրավված միջոցներով, նվիրաբերել ՀՀ-ին՝ ի դեմս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը, հետագայում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կապիտալում ՀՀ բաժնեմասն ավելացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2005թ.-ի հունվարի 28-ին ստորագրված N 653-AM, Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2005թ.-ի

[80] Աստղիկ Բեղևյան, «Զուրաբյանը «կեղծիք» է որակում գազի հարցով ԱԺ հանձնաժողովի եզրակացությունը», Ազատություն ռադիոկայան, 7 ապրիլի 2015թ. https://www.azatutyun.am/a/26943003.html:

[81] ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության բաժնեմասի ավելացման միջոցառումների մասին» N1117-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108224 և ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 8-ի «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության բաժնեմասի ավելացմանն ուղղված միջոցառումների մասին» N1412-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108226:

ապրիլի 21-ին ստորագրված N 1023Բ փոխառության համաձայնագրերով իրականացված «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման», Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2007թ.-ի հունվարի 17-ին ստորագրված N 1104Բ փոխառության համաձայնագրով իրականացված «Արտադրական ենթակառուցվածքների վերականգնում» և Հայաստանի Հանրապետության և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջև 2008թ.-ի հունվարի 8-ին ստորագրված N 730-AM, Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև 2008թ.-ի դեկտեմբերի 23-ին ստորագրված N 1226Բ փոխառության համաձայնագրերով իրականացված «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մի շարք համայնքներում կառուցված գազատարների շահագործումն ապահովելու և այդ գազատարներով սպառողներին անխափան գազամատակարարում իրականացնելու, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետության բաժնեմասն ավելացնելու նպատակով «Գյուղական տարածքների տնտեսական զարգացում», «Արտադրական ենթակառուցվածքների վերականգնում» և «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրերի (այդ թվում՝ Քոփերաթիվ Հաուզինգ Ֆաունդեյշն (Սի Էյչ Էֆ) հիմնադրամի հետ 2009թ.-ի սեպտեմբերի 15-ին և 2010թ.-ի օգոստոսի 20-ին կնքված համագործակցության համաձայնագրերի հիման վրա իրականացված աշխատանքների) շրջանակներում ձեռք բերված գույքի կազմից մոտ 1.3 մլրդ դրամ արժողությամբ գույքը նվիրաբերել Շիրակի մարզի Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Սառնաղբյուր, Լեռնակերտ, Ողջի, Մեղրաշատ և Արևաշատ, Լոռու մարզի Փոքր Այրում, Մեծ Այրում և Ախթալա, Արագածոտնի մարզի Քուչակ, Ոսկեվազ, Դաշտադեմ, Ափնա և Ցամաքասար, Արարատի մարզի Քաղցրաշեն, Վայոց ձորի մարզի Արփի, Աղավնաձոր, Փոռ, Զառիթափ և Վայք, Կոտայքի մարզի Պռոշյան և Երզնկա համայնքներին, որից հետո այդ գույքը պետք է նվիրաբերվեր ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը, որն էլ իր հերթին այդ գույքը պետք է ներդներ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ում:

Արժե հիշատակել նաև, որ 2009թ.-ին ՀՀ կառավարությունը Ռուսաստանի Դաշնությունից ստացած 500 մլն ԱՄՆ դոլար վարկի միջոցներից 6 ամիս մարման ժամկետով 40 մլն ԱՄՆ դոլար վարկ է տրամադրել «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին[82]: Հետագայում՝ 2017թ.-ին, ՀՀ կառավարությունը, որը գլխավորում էր «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի նախկին գործադիր տնօրեն և «Գազպրոմբանկ» ԲԲԸ-ի նախկին առաջին փոխնախագահ Կարեն Կարապետյանը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով անորոշ ժամկետով ավելի քան 2.5 մլն ԱՄՆ դոլար արժեքով գույք փոխանցեց[83]:

Հարկ է նշել, որ «Գազպրոմը» Հայաստանում ունի նաև ոչ պրոֆիլային ակտիվներ: Այսպես, Ծաղկաձորի զբոսաշրջության կենտրոններից մեկը՝ «Մարիոթ» հյուրանոցը, ստեղծվել է

[82] ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N1573-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և բյուջետային վարկ տրամադրելու մասին» N1127-Ն որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=54162:

[83] ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 14-ի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» N1646-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118270:

«Հայռուսգազարդ» ընկերության հետ համատեղ և օգտագործվել է վերջինիս պատկանող շենքն ու շինությունները[84]:

4.2.1.3 Հայաստան-Իրան գազատար

2005թ.-ին Հայաստանը և Իրանը նախաձեռնեցին գազատարի շինարարություն: 2005թ.-ի դեկտեմբերին ՀՀ էներգետիկայի նախարարը հայտարարեց, որ **Իրան-Հայաստան գազատարը** շահագործման կհանձնվի 2007թ.-ի սկզբում և կնպաստի Հայաստանի էներգետիկ անվտանգությանը[85]: 2005 և 2007 թվականներին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց գազատարի առանձին հատվածների կառուցմանը[86]:

Գազատարի շինարարությունը ֆինանսավորեց ԲԷՑ-ը, իսկ դրա հետ կապված ծախսերը ներառվեցին ՀԾԿՀ-ի կողմից հաստատվող ծառայությունների սակագնում: Հայաստանի փորձագիտական հանրությունը կարծում էր, որ եթե Ռուսաստանը բարձրացնի մատակարարվող գազի սակագինը, Հայաստանը կարող է անցնել Իրանից մատակարարվող գազի սպառման: Ակնկալվում էր, որ գազատարը կունենա 1,200 միլիմետր տրամագիծ:

Ի վերջո, թերևս «Գազպրոմ»-ի ճնշման ներքո, Իրան-Հայաստան գազատարը ունեցավ 700 միլիմետր տրամագիծ, որը 2015թ.-ին վաճառվեց Գազպրոմին[87]: «Գազպրոմ Արմենիա» ընկերության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Շուշան Սարդարյանը «Ազատություն» ռադիոկայանին հայտնել էր, որ Իրան-Հայաստան գազատարի 40 կիլոմետրանոց հատվածը 40 մլն ԱՄՆ դոլարով գնելու պայմանագիրը «Հայռուսգազարդ»-ի ԲԷՑ-ի միջև ստորագրվել էր դեռևս 2007թ.-ին: «Գազպրոմ»-ը նաև կատարել էր 30 մլն ԱՄՆ դոլարի կանխավճար[88]:

Տնտեսագետ Վահագն Խաչատրյանի կարծիքով, եթե Հայաստանը ցանկանա Իրանից գազ գնել, պետք է նախ ստանա «Գազպրոմ»-ի համաձայնությունը, ապա նաև նոր գազատար կառուցի, քանի որ եղածը բավարար չէ: Էներգետիկայի փոխնախարար Արա Սիմոնյանը վստահեցնում էր, որ եթե Հայաստանը Իրանի հետ պայմանավորվի, ու գազատարի տեխնիկական պայմանները թույլ տան, «Գազպրոմ Արմենիա»-ն պարտավոր է տեղափոխել գազը: Վահագն Խաչատրյանը նաև պնդում էր, որ ԲԷՑ-ի ծառայությունների սակագինը հաստատելիս ՀԾԿՀ-ն ներառել է նաև Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածի կառուցման արժեքը՝ 6 մլրդ 100 միլիոն դրամի չափով, և գազատարի վաճառքից հետո սակագինը պետք նվազեցվի:

---

[84] «Սերժ Սարգսյանը մասնակցեց «Ծաղկաձոր Մարիոթ» հյուրանոցի բացմանը», Արմենպրես, 22 դեկտեմբերի 2012թ., https://armenpress.am/arm/news/703557:

[85] "Project of Building Hrazdan Thermal Power Plant 5th Block Launched", 8 December, 2005, http://panarmenian.net/m/eng/news/15680:

[86] ՀՀ կառավարության 2005թ. օգոստոսի 18-ի «Իրան-Հայաստան գազամուղի Մեղրի-Քաջարան հատվածի ծրագրի մասին» N1340-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109097, ՀՀ կառավարության 2007թ. սեպտեմբերի 27-ի «Իրան-Հայաստան գազամուղի Քաջարան-Արարատ հատվածի ծրագրի մասին» N1130-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=42621:

[87] Սարգիս Հարությունյան, «Իրանը Հայաստանի տարածքով գազ կարտահանի Վրաստան», Ազատություն ռադիոկայան, 11 հունվարի 2016թ., https://www.azatutyun.am/a/27481040.html:

[88] Աստղիկ Բեդևյան, «Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածը վաճառվում է «Գազպրոմ Արմենիա»-ին», Ազատություն ռադիոկայան, 3 հունիսի 2015թ., https://www.azatutyun.am/a/27051397.html:

4.2.1.4 Որոտանի կասկադ

«**Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր»** ՓԲԸ-ն (այսուհետ՝ Որոտանի կասկադ) ունի 404.2 ՄՎտ ընդհանուր հզորությամբ երեք հիդրոէլեկտրակայան[89].

1. Սպանդարյան ՀԷԿ, կառուցվել է 1989թ.-ին, ունի երկու բլոկ և 76 ՄՎտ հզորություն,
2. Շամբի ՀԷԿ, կառուցվել է 1979թ.-ին, ունի երկու բլոկ և 171 ՄՎտ հզորություն,
3. Տաթևի ՀԷԿ, կառուցվել է 1970թ.-ին, ունի երեք բլոկ և 157.2 ՄՎտ հզորություն:

Որոտանի կասկադն ունի նաև այլ շինություններ և կառույցներ:

Որոտանի կասկադը շահույթով աշխատող ձեռնարկություն էր: Նախկինում մի շարք դեպքերում ՀՀ կառավարությունը Որոտանի կասկադին է թողել պետությանը հասանելիք և պետական բյուջե փոխանցման ենթակա գումարները[90]:

2017թ.-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել, որով «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի կողմից նախորդ տարիների գործունեության արդյունքներով կուտակված շահույթի հաշվին Հայաստանի Հանրապետությանն է վճարվել 7,320,810.0 հազար դրամի շահաբաժին՝ վճարումը կատարելով ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ «Նաիրիտ-2» ՓԲԸ-ի՝ 732081 հատ հասարակ բաժնետոմսերով (յուրաքանչյուրը՝ 10 հազար դրամ անվանական արժեքով)[91]:

ՀՀ կառավարության 2017թ.-ի մարտի 16-ի նիստին քննարկված որոշման նախագծին կից տեղեկանքի հիմնավորման մեջ նշվում է, որ «Ընկերության գույքային համալիրի հիմնական մասը ՀՀ կառավարության 21.11.2013թ. №1496-Ա որոշման համաձայն օտարվել է «Քոնթուր Գլոբալ ՀիդրոԿասկադ» ՓԲԸ-ին, իսկ «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայանը ՀՀ կառավարության 04.08.2016թ. №835-Ա որոշմամբ օտարվել է ՀՀ ՊՆ ենթակայության «Արմ-Աէրո» ՓԲԸ-ին»: Տեղեկանք հիմնավորման համաձայն, «Ընկերությունը գործունեություն չի իրականացնում և նրա հաշվեկշռում որևէ գույք չի հաշվառվում: Ընկերությունը նախորդ տարիների գործունեության արդյունքներով ունի 49,7 մլրդ դրամ կուտակված շահույթ»:

---

[89] «Որոտանի ՀԷԿ-երի համակարգ», http://www.minenergy.am/page/533:

[90] Օրինակ՝ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 14-ի ««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերությունների 2005 թվականի արդյունքներով հաշվարկված՝ պետությանը հասանելիք շահաբաժինների մասին» N1809-Ա որոշմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=30573 ՀՀ կառավարությունը Որոտանի կասկադին է թողել 2005թ. գործունեության արդյունքներով պետությանը հասանելիք և պետական բյուջե փոխանցման ենթակա 952,453.4 հազար դրամ և ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի ««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերությունների 2007 թվականի արդյունքներով հաշվարկված՝ պետությանը հասանելիք շահաբաժինների մասին» N875-Ն որոշմամբ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=54705՝ 2007թ.-ին 191,181.0 հազար դրամ շահաբաժին:

[91] ՀՀ կառավարության 2017թ. մարտի 16-ի ««Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2017 թվականի ընթացքում շահութաբաժնի բաշխման ուղղությունների մասին» N267-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133580:

Որոտանի կասկադի մասնավորեցումը նախատեսվում էր օրենքով, սակայն տեղի չի ունեցել[92]:

2013թ.-ի նոյեմբերին 21-ին ՀՀ կառավարությունը Որոտանի կասկադի կապիտալն ավելացրել է 89,349,826 ՀՀ դրամի չափով՝ Սպանդարյանի (38,991,265 ՀՀ դրամ), Անգեղակոթի (12,089,600 ՀՀ դրամ), Տոլորսի (28,332,065 ՀՀ դրամ) և Շամբի (9,936,896 ՀՀ դրամ) ջրամբարների[93] «արժեքն» արտացոլելով Որոտանի կասկադի կապիտալում: Ջրամբարները վերանորոգվել էին Համաշխարհային բանկի «Ոռոգման պատվարների անվտանգության II ծրագրի» շրջանակներում[94]: Նույն օրը, 2013թ.-ի նոյեմբերի 21-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Որոտանի կասկադի վաճառքին[95]:

Հարկ է նշել, որ ջրամբարների սեփականաշնորհումն ինքնին խնդրահարույց էր: ՀՀ օրենսդրության համաձայն, «Ջրի ազգային ծրագրով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերը պետական սեփականություն են և ենթակա չեն մասնավորեցման»: Սպանդարյանի և Տոլորսի ջրամբարները դասվում են պետական հատուկ նշանակության ջրային համակարգերի շարքին[96]:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը պնդում էր (Պատկեր 4), որ ջրամբարները «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին են տրվել 99 տարով[97]: Սակայն ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի №1286-Ա որոշումը, որով ավելացվել էր Որոտանի կասկադի կապիտալը, 99 տարվա մասին չէր հիշատակում: ՀՀ կառավարության 2015թ. ապրիլի 22-ի №430-Ա որոշմամբ հաստատված փոփոխված և լրամշակված պայմանագրի 2.08 կետի (բ) ենթակետն արձանագրում է, որ «Փոխանցման պայմանագիրը սկզբնապես կնքվել է անշարժ գույքերի նկատմամբ սեփականության իրավունքը գնորդին փոխանցելու համար: Սակայն, հաշվի առնելով կիրառելի օրենսդրության պահանջները, կողմերը համաձայնվել են փոփոխել փոխանցման պայմանագիրն այնպես, որ դրանով հաստատվի անօտարելի անշարժ գույքի նկատմամբ ՀՀ սեփականության անօտարելի իրավունքը և գնորդին տրամադրվի վերոնշյալ գույքի նկատմամբ 99 տարի ժամկետով կառուցապատման իրավունք (սեփականության իրավունքի փոխարեն)»[98]: Այսինքն, կարելի է ենթադրել, որ պայմանագրի նախնական տարբերակում ՀՀ կառավարությունը անտեսել է

---

[92] «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docID=31342, «Հայաստանի հանրապետության պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=78059:

[93] ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի «Գույք հանձնելու և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» N1286-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87007:

[94] Համաշխարհային բանկի «Ոռոգման պատվարների անվտանգության II ծրագիր» (Project Appraisal Document on a Proposed Credit in the Amount of SDR 4.70 million (US$ 6.75 equivalent) to the Republic of Armenia for an Irrigation Dam Safety II Project. May 10 2004), http://documents.worldbank.org/curated/en/796271468741869532/pdf/29000.pdf:

[95] ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի ««Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության գույքի առուվաճառքի պայմանագրին հավանություն տալու մասին» N1496-Ա որոշում, https://www.e-gov.am/gov-decrees/item/23779/:

[96] «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի առաջին մաս, ընդունվել է 2006թ. նոյեմբերի 27-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140524:

[97] ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանի 2015թ. սեպտեմբերի 4-ի N01/19.1/4753-15 գրությունը «Չորրորդ իշխանություն» թերթի թղթակից Արման Գալոյանին:

[98] ՀՀ կառավարության 2015թ. ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N1496-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» N430-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=97312:

օրենսդրության պահանջը: Երբ պաշտոնյաները հասկացել են օրենքի խախտման փաստը, նրանք ինչ-որ կերպ կարողացել են համոզել Քոնթուր Գլոբալին փոփոխել պայմանագիրը:

Պատկեր 4. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի գրության պատճենը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2
Հեռ.(011) 52-19-64,ֆաքս (011) 52-63-65
էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

N04/18.1/4753-15
04.09.15թ.

«ՉՈՐՐՈՐԴ ԻԵԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿՎԻՃ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալոյան

Ձեր 02.09.2015թ. գրության մեջ նշված հարցերի կապակցությամբ հայտնում ենք, հետևյալը.

2015թ. հունիսի 8-ին ստորագրված «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գույքի առուվաճառքի պայմանագիրը ստորագրման պահից ուժի մեջ է և գործում է:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (գնորդի) կողմից ս.թ հուլիսի 30-ին (գործարքի ավարտման օր) գույքի առուվաճառքի պայմանագրի համաձայն «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի հաշվին է փոխանցվել գույքի վաճառքի գնի 50 տոկոսը՝ 43068.0 մլն դրամ (կամ 90.0 մլն ԱՄՆ դոլար): Պայմանագրի համաձայն՝ գնի մնացած մասը (43068.0 մլն դրամ) պետք է վճարվի գործարքի ավարտման օրվանից մեկ տարի հետո:

Վաճառված գույքը անցել է գնորդի սեփականությանը և վերջինս այն կարող է տնօրինել օրենքով սահմանված կարգով: Ընկերությունը իր պարտավորությունների դիմաց կարող է գրավադրել գույքը՝ այդ թվում բանկերում: Օրինակ ՀՀ կառավարության և «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի հանդեպ ունեցած՝ գույքի առուվաճառքի պայմանագրով նախատեսված գործարքի գումարի մնացած մասի վճարման պարտավորության ապահովման նպատակով գրավադրված է համապատասխան գույք:

Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող պետական նշանակության ջրամբարները «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին են տրվել կառուցապատման իրավունքով (99 տարի ժամկետով): Ջրամբարների հետագա շահագործման ծախսերը իրականացվելու են «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի հաշվին՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընկերության համար հաստատված սակագնով նախատեսված ծախսերի շրջանակներում:

Հարգանքով՝ ԵՐՎԱՆԴ ՉԱԽԱՐՅԱՆ

Կատարող՝ Հեղինե Բալասյան
Հեռ. (011) 52-65-73

Որոտանի կասկադի գինը սահմանվել էր 180 միլիոն ԱՄՆ դոլար: «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի հաշվին 43,068.0 միլիոն ՀՀ դրամի չափով (կամ 90.0 միլիոն ԱՄՆ դոլար) առաջին վճարումը կատարել էր 2015թ.-ի հուլիսի 30-ին: Մամուլի հրապարակումների համաձայն, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն առաջին վճարում կատարել էր HSBC-Հայաստան, Ամերիա և Կոնվերս բանկերից վերցրած վարկի միջոցներով, որոնց դիմաց գրավ էր դրել Որոտանի կասկադի գույքը: Սակայն Հայաստանում ՔոնթուրԳլոբալի ներկայացուցիչները հերքել են այս պնդումները և հայտարարել, որ իրենց ընկերությունը հայկական բանկերից ստացել է միայն 28 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ[99]: Հանրության համար, ի վերջո, անհայտ մնաց, թե ով ստացավ 180 միլիոն ԱՄՆ դոլարը և ինչպես այն օգտագործվեց:

[99] Սիսակ Գաբրիելյան, «Որոտանի կասկադի ամերիկյան սեփականատերը հերքում է ֆինանսական խնդիրների մասին լուրերը», Ազատություն ռադիոկայան, 13 հոկտեմբերի 2015թ., https://www.azatutyun.am/a/27304548.html: Առաջին 90 մլն ԱՄՆ դոլար վճարկումը պետք է կատարվեր մինչև 2015թ. հուլիսի 30-ը, երկրորդ 90 մլն ԱՄՆ դոլարը՝ մինչև 2016թ. հուլիսի

ՀՀ Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավորները բարձրացրել են Որոտանի կասկադի վաճառքի հարցը, պնդելով, որ այն կատարվել է առանց Ազգային ժողովի համաձայնության: ՀՀ Ազգային ժողովի 2014թ.-ի փետրվարի 5-ի նիստին, պատասխանելով պատգամավոր Լևոն Զուրաբյանի հարցին, ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը հայտարարեց, որ ՀՀ կառավարությունը չի մասնավորեցրել ոչինչ, այլ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ն վաճառել է իր գույքի մի մասը[100], անտեսելով այն փաստը, որ Որոտանի կասկադը վաճառել է պետական գույք, որի մասնավորեցումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ[101]: Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարի այն հայտարարությունը, որ «Որոտան» ՓԲԸ-ն վաճառել է իր ոչ թե ողջ գույքը, այլ գույքի մի մասը» համահունչ չէր ՀՀ կառավարության 2017թ.-ի մարտի 16-ի նիստին ընդունված №267-Ա որոշման հիմնավորման այն ձևակերպմանը, որ «ընկերությունը գործունեություն չի իրականացնում և նրա հաշվեկշռում որևէ գույք չի հաշվառվում»: 2017թ. մարտի 16-ի №267-Ա որոշումը վկայում է, որ նույնիսկ, եթե «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ն ձևական առումով գոյություն ուներ, 2017թ.-ի այն ի վիճակի չէր իրականացնել որևէ գործունեություն դրա համար անհրաժեշտ գույքի բացակայության պատճառով: ՀՀ արդարադատության նախարարի պնդումը, որ ընդդիմադիր պատգամավորին «կորպորատիվ իրավունքի տարրական էլեմենտար գիտելիքներն ընկալելի չեն» տեղին չէր, քանի որ կորպորատիվ կառավարման սկզբունքների համաձայն, եթե սեփականատերը շահագրգռված է իրեն պատկանող ընկերության գործունեության շարունակականությամբ, ապա չի կարող համաձայնություն տալ վաճառել այդ ընկերության գույքը, եթե դրա արդյունքում նրա հաշվեկշռում չի լինելու այնպիսի գույք, որ ընկերությունը ի վիճակի լինի շարունակել իր գործունեությունը: Այսինքն, կարելի է ենթադրել, որ ՀՀ կառավարությունը որոշել է ձերբազատվել «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ից և դրա համար ընտրել է նրա հիմնական գույքը օտարելու ճանապարհը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017թ. մարտի 16-ի №267-Ա որոշման հիմնավորումներում նշվում է, որ Որոտանի կասկադը «նախորդ տարիների գործունեության արդյունքներով ունի 49.7 մլրդ դրամ կուտակված շահույթ», կարելի է ենթադրել, որ ՀՀ կառավարությունը վաճառել է բարձր շահութաբերություն ապահովող ակտիվ, ինչը նույնպես կորպորատիվ կառավարման տեսակետից հիմնավորված չէ:

30-ը: Սյունե Համբարձումյան, «Ինչու են գրավադրվում Սպանդարյանի, Շամբիի և Տաթևի ՀԷԿ-երը», Ժողովուրդ, 12 դեկտեմբերի 2016թ., https://armlur.am/626024:

[100] «Լեզվակռիվ Հրայր Թովմասյանի և Լևոն Զուրաբյանի միջև», ՀՀ ԱԺ 2014թ. փետրվարի 5-ի նիստից հատված, https://www.youtube.com/watch?v=MvLg1qTgjGM, ՀՀ ԱԺ 2014թ. փետրվարի 5-ի նիստի սղագրություն. http://www.parliament.am/transcript.php?AgendaID=2561&day=05&month=02&year=2014&lang=arm#05.02.2014:

[101] 2018թ. ապրիլին Հրայր Թովմասյանը դարձավ Սահմանադրական դատարանի նախագահ 2005թ. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ընթացակարգով՝ վերջինի ուժը կորցնելուց ընդամենը մի քանի օր շուտ: Տվյալ ընթացակարգի բերումով Հ. Թովմասյանը պետք է պաշտոնավարեր մինչև 2035թ.՝ այդպիսով ՀՀ Սահմանադրական դատարանի մնացած դատավորներին մինչ նշված տարեթիվը զրկելով նախագահ ընտրվելու կամ այլ նախագահ ընտրելու իրավունքից: Սա հակասում էր 2015թ. սահմանադրական փոփոխություններին, որոնց համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը և փոխնախագահն ընտրվում են 6 տարի ժամկետով և չեն կարող վերընտրվել (ՀՀ սահմանադրություն, հոդված 166): 2020թ. փետրվարի 6-ին ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ Սահմանադրական դատարանի հարցով ելույթ ունեցավ ՀՀ Ազգային ժողովում, https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2020/02/06/Nikol-Pashinyan-Speech/: 2020թ. փետրվարի 9-ին ՆՆ նախագահ Արմեն Սարգսյանը ստորագրել էր 2020թ. ապրիլի 5-ին «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական փոփոխությունների հանրաքվե նշանակելու մասին» հրամանագիրը, https://www.president.am/hy/decrees/item/4972, սակայն հանրաքվեն հետաձգվեց COVID-19 համավարակի պատճառով: Հետագայում, 2020 թվականի հունիսի 22-ին հանրաքվեի համար առաջարկվող նախագծի փոխարեն ՀՀ Ազգային ժողովն ընդունեց օրենք, որի համաձայն դադարեցվեց ՀՀ Սահմանադրական դատարանում 12 տարուց ավել պաշտոնավարող երեք անդամների անդամությունը և Հ.Թովմասյանի նախագահությունը, https://www.arlis.am/documentview.aspx?docid=143713, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13118&year=2020&month=06&day=22 :

Որոտանի կասկադի վաճառքի վերաբերյալ հայտարարությունն արվել է 2014թ.-ի հունվարին, որոշման ընդունումից երկու ամիս հետո[102]: Մամուլի հրապարակումների համաձայն, ՀՀ կառավարությունը գաղտնի է պահել վաճառքի վերաբերյալ որոշումը[103]: Վաճառքից հասույթը ՀՀ կառավարության հաշվին մուտքագրվելու փոխարեն մուտքագրվել է Որոտանի կասկադի հաշվին[104], իսկ գործարքի հետևում կանգնած է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի փեսան՝ Միքայել Մինասյանը[105]:

Հարկ է նշել, որ Որոտան կասկադի վաճառքի որոշման նախագիծն ընդգրկված չի եղել ՀՀ կառավարության 2013թ.-ի նոյեմբերի 21-ի նիստի օրակարգում[106]: Դրա մասին չի հիշատակվել նաև ՀՀ կառավարության տվյալ օրվա նիստի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրության մեջ, չնայած, ամենայն հավանականությամբ, դա օրվա կարևորագույն որոշումներից մեկն էր[107]:

«Ժողովուրդ» օրաթերթի համաձայն, իրավաբանները պնդում են, որ չնայած որոշմանը, և հատկապես այդ որոշումը կայացնելուց հետո ՀՀ կառավարությունը պարտավոր էր Որոտանի կասկադն ընդգրկել պետական գույքի մասնավորեցման ծրագրում և ներկայացնել ԱԺ:

4.2.1.5 Հրազդան ՋԷԿ

Հրազդանի ՋԷԿ-ի չորս հին էներգաբլոկները 2002թ.-ից ի վեր պատկանում էին «Հրազդանի էներգետիկ ընկերություն (ՀրազՋԷԿ)» ՓԲԸ-ին և շահագործվում էին նրա կողմից: «Հրազդանի էներգետիկ ընկերություն (ՀրազՋԷԿ)» ՓԲԸ-ն հիմնադրվել էր ռուսական պետական Ինտեր «ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ-ի կողմից, երբ կայանը Ռուսաստանին էր փոխանցվել «գույք՝ պարտքի դիմաց» գործարքի շրջանակներում: 2017թ.–ին «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ն ձեռք բերեց «ՀրազՋԷԿ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100 տոկոսը:

4.2.1.6 «Հրազդան 5-րդ էներգաբլոկ»

2005թ.-ին Հայաստանը և Իրանը **Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի** կառուցման ծրագիր նախաձեռնեցին: Սակայն 2006թ.-ի ապրիլի 6-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների

---

[102] «ՀՀ կառավարության և «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ»-ի միջև ստորագրվել է «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր»-ի գույքի առուվաճառքի պայմանագիր», 29 հունվարի 2014թ., https://www.gov.am/am/news/item/10998:

[103] Արման Գալոյան, «Որոտանի ՀԷԿ-ի վաճառքի գաղտնիքները. հետաքննություն», Ժողովուրդ, 17 մարտի 2014, https://armlur.am/134082/:

[104] Սյունե Համբարձումյան, «Ինչու են գրավադրվում Սպանդարյանի, Շամբիի և Տաթևի ՀԷԿ-երը», Ժողովուրդ, 12 դեկտեմբերի 2016թ., https://armlur.am/626024:

[105] 2007-2008թթ. Միքայել Մինասյանը եղել է ՀՀ վարչապետի օգնական (տվյալ պահին ՀՀ վարչապետը Մինասյանի աներ Ս.Սարգսյանն էր), 2008-2012թթ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (տվյալ պահին ՀՀ նախագահը Մինասյանի աներ Ս.Սարգսյանն էր), 2013-2018թթ.՝ Սուրբ Աթոռում ՀՀ դեսպան, 2014-2018թթ.՝ Մալթայի Մարտական Ինքնիշխան Ուխտում ՀՀ դեսպան, 2017-2018թթ.՝ Պորտուգալիայում ՀՀ դեսպան:

[106] ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի նիստի օրակարգը հասանելի է կառավարության պաշտոնական կայքում, https://www.e-gov.am/sessions_old/archive/2013/11/21/: Նիստի օրակարգում որպես 45-րդ հարց ներառված էր «Գույք հանձնելու և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու մասին» որոշման նախագիծը, որն ընդունվելուց հետո գրանցվել է որպես N1286-Ա որոշում: Գույքի վաճառքին հավանություն տալու մասին, հետագայում N1496-Ա համարը ստացած որոշման նախագիծ նիստի օրակարգում չկա:

[107] «Կազմվում է Մաքսային միությանն անդամակցելու ճանապարհային քարտեզ», ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի նիստի պաշտոնական լրահոս, https://www.gov.am/am/news/item/10866/:

մասին» №449-Ն որոշումը, որով ՀՀ պաշտպանության նախարարությանն առաջարկվում էր ՀՀ էներգետիկայի նախարարության ենթակայության «Հրազդան 5» ԾԻԳ» պետական հիմնարկից հաշվեկշռային արժեքով ընդունել «Հրազդան 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրը և մուտքագրել ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշիռ, Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» ԲԲԸ-ի առաջարկած՝ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կամ ՀՀ տարածքում «Գազպրոմ» ԲԲԸ-ի հիմնադրած նոր իրավաբանական անձի հետ կնքել «Հրազդան 5-ր էներգաբլոկ» գույքային համալիրի առուվաճառքի պայմանագիր և գույքային համալիրը վաճառել 248.8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամով[108]: Որոշմամբ նախատեսվում էր 2006թ.-ի ընթացքում ստանալ 30 մլն ԱՄՆ դոլարին համարժեք 11,165,500,000 դրամ, իսկ 2008թ.-ի ընթացքում՝ մնացած 218.8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ գնորդի կողմից վճարվող գումարները ստանալով ՀՀ պաշտպանության նախարարության արտաբյուջետային բանկային հաշվին: Դրանից 242,969,092 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ նախատեսվում էր վճարել «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին՝ որպես բնական գազի սպառողներին մատակարարված գազի սահմանված սակագնի մասնակի փոխհատուցում, այդ թվում՝ 2006թ.-ին վճարված 30 մլն ԱՄՆ դոլարը և 2008թ.-ին վճարված գումարից 212,969,092 ԱՄՆ դոլարը, իսկ մնացած 5,830,908 ԱՄՆ դոլարը մուծել ՀՀ պետական բյուջե:

Այլ կերպ ասած, տվյալ գործարքով Գազպրոմի վճարած գումարի մեծ մասը հետ է փոխանցվում Գազպրոմի սեփականությունը հանդիսացող միավորին:

4.2.1.7 Սևան-Հրազդան կասկադ

2003թ.-ին ՀՀ կառավարությունը ՀԱԷԿ-ին մատակարարված վառելիքի դիմաց կուտակված 40 մլն ԱՄՆ դոլար պարտքից 25 մլն-ը փոխհատուցելու համար «ՌԱՕ ԵԷՍ»-ի կողմից 2003թ.-ին Հայաստանում գրանցված, վերջինիս առաջին արտադրող ընկերությունը հանդիսացող «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ին (այսուհետ՝ «ՄԷԿ» ՓԲԸ) հանձնեց **Սևան-Հրազդան կասկադը**: 2011թ.-ին «Ռուսհիդրո» ԲԲԸ-ն ձեռք բերեց «ՄԷԿ» ՓԲԸ-ն: 2019թ.-ի նոյեմբերին հայկական մամուլը հաստատեց, որ «Ռուսհիդրո» ԲԲԸ-ն 3 մլն ԱՄՆ դոլարով Սևան-Հրազդան կասկադը վաճառել է «Տաշիր»-ին: «Տաշիր»-ի կողմից Հայաստանում Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադի կառավարումն իրականացնող՝ «ՄԷԿ» ՓԲԸ բաժնետոմսերի գնման մասին 2020թ.-ի դեկտեմբերին կնքված պայմանագրի համաձայն, «Տաշիր»-ը վերաֆինանսավորել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ ՎԶԵԲ) և Ասիական զարգացման բանկի (այսուհետ՝ ԱԶԲ) հանդեպ «ՌուսՀիդրո» ՀԲԸ-ի երաշխավորությամբ ապահովված «ՄԷԿ» ՓԲԸ-ի վարկային պարտավորությունները, որից հետո վերջինիս բաժնետոմսերը փոխանցվել են գնորդին[109]:

---

[108] ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 6-ի «Պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին» N449-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=50658:

[109] ЗАО "Международная энергетическая корпорация" было зарегистрировано в Республике Армения 8 мая 2003г. и стало первой генерирующей компанией ИНТЕР РАП ЕЭС. 17 июля 2003г. Обществу был передан имущественный комплекс ЗАО "Севан-Разданский каскад", а 24 марта 2011г. ОАО "РусГидро", http://www.mek.am, «ՄԷԿ» ՓԲԸ, http://www.minenergy.am/page/534: «Ավարտվել է «ՌուսՀիդրո» Խմբին պատկանող «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ («ՄԷԿ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետություն) բաժնետոմսերի փաթեթի վաճառքի ռազմավարական գործարքն հօգուտ «Տաշիր» Խմբին պատկանող Հրազդանի էներգետիկ կազմակերպության», 11 մարտի 2020թ, http://www.mek.am/am/news.html:

Հայաստանի նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի կարծիքով, 2002թ.-ի «գույք՝ պարտքի դիմաց» «գործարքի իրական պատճառը հետագայում Հրազդան-Սևան հիդրոկասկադն իր ընդհանուր 560 Մվտ հզորությամբ Ռուսաստանին հանձնելն է եղել»[110]: Նա նաև հայտարարել է, որ սպառված գազի և էլեկտրաէներգիայի գանձված գումարները կանխամտածված կերպով չեն օգտագործվել ռուսական մատակարարներին վճարելու համար, և որ «գործ ունենք Քոչարյանի վարչակարգի կողմից իրականացված լայնամասշտաբ կոռուպցիայի հետ» և այդ գումարները «գոնե մի 85 տոկոսի չափով ուղղակիորեն գրպանվել են»:

4.2.1.8 ՀորաՀԷԿ

«Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է 2001թ.-ի հուլիսի 27-ին) **ՀորաՀԷԿ**-ը ենթակա էր մասնավորեցման: Սակայն օրենքի ընդունումից ընդամենը հինգ ամիս հետո այս օրենքում կատարվում է փոփոխություն, որի 2-րդ հոդվածի (է) կետը նախատեսում է Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարության ընկերությունների ցանկից հանել ՀորաՀԷԿը[111]: 2001թ.-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունում «ՀորաՀԷԿ» ՓԲԸ-ի մասնավորեցման մասին[112], իսկ 2002թ.-ին ՀՀ կառավարությունը «ՀորաՀԷԿ» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունները վերապահում է ՀՀ պաշտպանության նախարարությանը[113]: Այդ պահին ՀՀ պաշտպանության նախարարը Սերժ Սարգսյանն էր, ով 2007թ.-ին ստանձնեց վարչապետի, իսկ 2008թ.-ին՝ Հայաստանի Նախագահի պաշտոնը[114]: 2006-2010թթ.-ի ընթացքում «ՀորաՀԷԿ» ՓԲԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանը 1 մլրդ 252 մլն դրամի շահաբաժին է վճարել[115]:

2010թ.-ին ՀՀ կառավարությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը, «թույլատրել է» «ՀորաՀԷԿ» ՓԲԸ-ն օտարել «Հորագետ Հիդրո» ՍՊԸ-ին[116]: Համաձայն ՀՀ

---

[110] «Գույք պարտքի դիմաց» գործարքը իշխանությունն ամրապնդելու նպատակ ուներ», նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի հարցազրույցը «Հրապարակ» օրաթերթին, 19 ապրիլի 2011թ. https://hraparak.am/post/591fc99de3d84d0d37fe210d:

[111] «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2001թ.-ի դեկտեմբերի 28-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1047:

[112] ՀՀ կառավարության 2001թ. մարտի 14-ի « «ՀորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» N185 որոշում: ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 26-ի ««ՀորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության և «Հայէներգավերանորոգում» փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների մասին» N140 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=8376: ՀՀ կառավարության 2001թ. հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 26-ի N140 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N926 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=8922: ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 26-ի N140 և մարտի 14-ի N185 որոշումներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N435 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=8581:

[113] ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 15-ի «ՀորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարմանը հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 14-ի N 185 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N36 որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=15555

[114] Սերժ Սարգսյանի կենսագրություն, https://www.president.am/hy/serzhsargsyan:

[115] Արման Գալոյան և Լուսինե Մինասյան, «ՀորաՀԷԿ»-ի մասնավորեցումը Սերժ և Տիգրան Սարգսյանների օրոք», Ժողովուրդ, 10 մայիսի 2019թ., https://armlur.am/899422:

[116] ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի ««ՀորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից գույքի օտարման խոշոր գործարք կնքելուն հավանություն տալու մասին» N1660-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64122

արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի, «Ձորագետ Հիդրո» ՍՊԸ-ի հիմնադիրներն են «ԷՄՁԻԴԻՍԻ» ԻՆԿ. ԲՎԿ ԱՌԵՎՏՐ-ին, «ՎՈԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, Արմեն Պետրոսյանը և Լեոնիդ Արևշատյանը[117]: Համաձայն փաստերի ստուգման հարթակի, 2016թ.-ին «Ձորագետ հիդրոյի» 100 տոկոս բաժնետեր է դարձել «Էներգո ինվեստ հոլդինգ» ՓԲԸ-ն, որի միակ բաժնետերը «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն» ԲԲԸ-ն է, որի սեփականատերն է «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ն[118]:

Հարկ է նշել, որ ՁորաՀԷԿ-ը մասնավորեցնելուց մեկ տարի հետո՝ 2011թ.-ին, ՀՀ կառավարությունը ՀԾԿՀ-ին առաջարկել է փոխել ՀԷԿ-երի դասակարգման շեմը և փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանել մինչև 30 ՄՎտ-ը[119]: Արդյունքում՝ ՁորաՀԷԿ-ը, որն ուներ 26.4 ՄՎտ հզորություն, դասվեց «փոքր» ՀԷԿ-երի թվում՝ ստանալով հնարավորություն իր արտադրած էլեկտրաէներգիան համակարգին վաճառելու ավելի թանկ գնով, այսինքն՝ նախկին 3.42 դրամ/կՎտ-ի փոխարեն՝ 25.4 դրամ/կՎտ-ով[120]: Այդպիսով՝ կառավարության «առաջարկության» արդյունքում ՁորաՀԷԿ-ի տարեկան շահույթն ավելացավ մոտ 1.5 մլրդ ՀՀ դրամով, կամ 3.1 մլն ԱՄՆ դոլարով[121]: Մամուլի հրապարակումների համաձայն, ՀՀ կառավարությունը գնացել է այս քայլին, քանի որ ՁորաՀԷԿ-ի իրական սեփականատերը ՀՀ երրորդ նախագահի փեսան է[122]:

4.2.1.9 «Հեր-Հեր» ՀԷԿ

2016թ.-ի օգոստոսի 4-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Գույք օտարելու թույլտվություն տալու մասին» №835-Ա որոշումը, որով ՀՀ պաշտպանության նախարարին հանձնարարվում էր, որպես «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի և «Արմ-Աէրո» ՓԲԸ-ի միակ բաժնետիրոջ իրավասություններ իրականացնող անձ, ընդունել միակ բաժնետիրոջ որոշում՝ 100 տոկոս պետական մասնակցությամբ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի (վաճառող) կողմից **«Հեր-Հեր»** ՀԷԿ-ը վաճառել 100 տոկոս պետական մասնակցությամբ «Արմ-Աէրո» ՓԲԸ-ին: «Արմ-Աէրո» ՓԲԸ-ն ստեղծվել է ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 6-ի «Արմ-Աէրո» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» №811-Ն որոշմամբ, իսկ 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը[123]: «Արմ-Աէրո» ՓԲԸ-ի հիմնադիրը ՀՀ կառավարությունն էր, իսկ կառավարման լիազորությունը, «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի հաշվեկշռում

---

[117] «Ձորագետ հիդրո» ՍՊԸ, https://www.e-register.am/am/companies/1275456: Լեոնիդ Արևշատյանի մասնակցությունը դադարեցված է:

[118] Մկրտիչ Կարապետյան, «Ձորագետը՝ ՀԷԿ-երի ճիրաններում. ովքե՞ր են հիդրոէլեկտրակայանների սեփականատերերը», Փաստերի ստուգման հարթակ, 13 փետրվարի 2020թ., https://fip.am/10405: Համաձայն փաստերի ստուգման հարթակի Արմեն Պետրոսյանը «Ջազզվե» սրճարանների ցանցում 5 տոկոս բաժնեմաս ունի: Լեոնիդ Արևշատյանը ՀՀ երկրորդ նախագահ Ս.Սարգսյանի փեսա Մ.Մինասյանի շրջապատից է և նրա բիզնեսների կառավարիչներից է:

[119] ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու վերաբերյալ առաջարկության մասին» N1300-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=70924:

[120] Հիդրոէներգետիկա, http://www.minenergy.am/page/448:

[121] Արմենուհի Վարդանյան, «Տարեկան շուրջ 3 միլիոն ԱՄՆ դոլար ՀԷՑ-ից «փեսային», ԳալաTV, 3 հոկտեմբերի 2015թ., https://galatv.am/hy/125655: «Տարեկան 1.5 մլրդ դրամ է նվիրվում «ՁորաՀԷԿ»-ի սեփականատերերին». Հայկական բնապահպանական –ճակատ, Իլուր, 29 հուլիսի 2015թ., http://www.ilur.am/news/view/47596.html:

[122] Արման Գալոյան և Լուսինե Մինասյան, «ՁորաՀԷԿ»-ի մասնավորեցումը Սերժ և Տիգրան Սարգսյանների օրոք», Ժողովուրդ, 10 մայիսի 2019թ., https://armlur.am/899422:

[123] ՀՀ կառավարություն, պաշտոնական լրահոս, 6 մայիսի 2004թ., https://www.gov.am/am/news/item/1241:

հաշվառվող գույքի զգալի մասը (ուղղաթիռներ, ուղղաթիռների շարժիչներ, պահեստամասեր և այլն) արդյունավետ կառավարելու, ռազմաօդային պաշտպանության բնագավառում իրականացվող գործունեությունը կոմերցիոն հիմունքներով ավիացիոն ծառայությունների մատուցման բնագավառում իրականացվող գործունեությունից հստակորեն տարանջատելու նպատակով» իրականացնում էր ՀՀ պաշտպանության նախարարությանը[124]:

«Հեր-Հեր» ՀԷԿ-ի հետ կապված աշխատանքներում ՀՀ պաշտպանության նախարարության ներգրավվածությունը ուշադրության արժանի միակ հանգամանքը չի: ՀՀ կառավարության 2016թ. №835-Ա որոշումն ընդունվել է օգոստոսի 4-ի նիստում, որը նախագահել է վարչապետ Հովիկ Աբրահամյանը: Այդ որոշման նախագիծը եղել է օրակարգի 20-րդ հարցը, և ներկայացրել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Լևոն Յոլյանը: Սակայն Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման www.e-gov.am համակարգում, այդ օրվա 20-րդ հարցի տակ ներկայացվում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարության 2018թ. հուլիսի 4-ի նիստում հաստատված №788-Ն որոշման նախագիծը և դրա հավելվածն ու տեղեկանք-հիմնավորումը[125]:

Ենթադրվում է, որ 2018թ.-ին ընդունված որոշման նախագիծը, դրա հավելվածներն ու տեղեկանք հիմնավորումը պատահաբար չէին կարող հայտնվել 2016թ.-ի մեկ այլ կառավարության նիստի օրակարգի փաստաթղթերի փոխարեն: Հավանական է, որ մարդիկ, ովքեր ազդեցություն ունեն էլեկտրոնային համակարգի կառավարման գործընթացի վրա, 2016թ.-ի որոշմանը վերաբերող փաստաթղթերի փոխարեն այնտեղ տեղադրել են 2018թ.-ի որոշման փաստաթղթեր: Հարկ է նշել, որ նախկինում ևս արձանագրվել են դեպքեր, երբ ՀՀ կառավարության էլեկտրոնային շտեմարաններում կատարվել են փոփոխություններ, որոնց իրավական կարգավորումը պարզ չէ[126]:

4.2.1.10 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր»

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին (այսուհետ՝ ԲԷՑ) է պատկանում 110-200 կՎտ հզորությամբ էլեկտրականության փոխանցման ցանցը: ԲԷՑ-ը պատասխանատու է Հայաստանում էլեկտրականության փոխանցման, բաշխիչ ցանցին՝ ՀԷՑ-ին, կամ սպառողներին էլեկտրականության վաճառքի և արտահանման համար: ԲԷՑ-ը միաժամանակ լիազորված է կառուցել հողմային էլեկտրակայաններ՝ քամուց էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով:

[124] ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի «Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերության բյուջետային վարկի պարտքի դիմաց գույք ընդունելու մասին» N 1726-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=47448:

[125] ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի «Հերթական մարդահամարի աշխատանքների կազմակերպում» ծրագրի արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2018 թվականի նախահաշիվը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N788-Ն որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=95839:

[126] Արտակ Քյուրումյան, «Ով, ինչ իրավական ակտի համաձայն և ինչու է փոփոխություններ կատարում ՀՀ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում», «Ասպարեզ», 9 հունվարի 2020թ., https://www.asparez.am/gov-shtemaran-hh-hy/#.XwbTIG0zaM8:

2005թ.-ին ԲԷՑ-ը ֆինանսավորել է Իրան-Հայաստան գազատարի շինարարությունը և դրա համար կատարված ծախսերը՝ 6 մլրդ 100 միլիոն դրամ ներառել է ՀԾԿՀ-ի հաստատմանը ներկայացվող՝ իր կողմից մատուցվող ծառայությունների սակագնում: 2015թ.-ին պարզվեց, որ ԲԷՑ-ը գազատարի 40 կիլոմետրանոց հատվածը դեռևս 2007թ.-ին 40 մլն ԱՄՆ դոլարով վաճառել է «Հայռուսգազարդ»-ին և նույնիսկ ստացել է 30 մլն ԱՄՆ դոլար կանխավճար: Իրան-Հայաստան գազատարը «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը վաճառելուց հետո, ԲԷՑ-ը վերականգնել է գազատարի կառուցման համար կատարված ծախսերը և, հետևաբար կարող էր դրանց համար նախատեսված չափաբաժինը հանել սակագնի հաշվարկից[127]:

2017թ.-ին ՀՀ կառավարությունը, գործունեության արդյունավետության բարելավման և ծախսերի օպտիմալացման նպատակով, ԲԷՑ-ի կառավարումը հանձնել է «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ին[128] և 2018թ. ապրիլին հաստատել է ԲԷՑ-ի հավատարմագրային կառավարման ծրագիրը[129]:

Թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո ՀՀ էներգետիկայի նախարար Արթուր Գրիգորյանը հայտարարեց, որ ՀՀ կառավարությունը դադարեցնում է «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ի հետ 25 տարվա հավատարմագրային կառավարման պայմանագիրը, քանի որ համաձայնագրի որոշ դրույթներ բարենպաստ չեն Հայաստանի համար[130]: Սակայն «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ն հերքեց և հայտարարեց, որ ոչ թե ՀՀ կառավարությունը, այլ «Տաշիր կապիտալ» ՓԲԸ-ն ինքն է հրաժարվել ԲԷՑ-ի կառավարումը ստանձնելուց, քանի որ ԲԷՑ-ը դիտարկում էր ոչ թե որպես շահույթի աղբյուր, այլ սակագնի վրա ազդելու միջոց[131]: 2018թ.-ի հունիսին ՀՀ կառավարությունը ուժը կորցրած ճանաչեց ԲԷՑ-ը հավատարմագրային կառավարման հանձնելու և հավատարմագրային կառավարման ծրագիրը հաստատելու մասին իր որոշումները:

4.2.1.11 Հայաստանի ատոմային էլեկտրակայան

Հայաստանի ատոմային էլեկտրակայանը (այսուհետ՝ ՀԱԷԿ) կառուցվել է խորհրդային տարիներին. առաջին ռեակտորը գործարկվել է 1976թ.-ի վերջում, երկրորդը՝ 1980թ.-ին: 1989թ.-ի սկզբում, անվտանգության նկատառումներով, ԽՍՀՄ կառավարությունը որոշեց փակել ՀԱԷԿ-ը[132]: 1993թ.-ին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց վերագործարկել ՀԱԷԿ-ը, և 1995թ.-ի նոյեմբերին երկրորդ ռեակտորը վերսկսեց իր աշխատանքը[133]:

---

[127] Աստղիկ Բեդևյան, «Իրան-Հայաստան գազատարի Մեղրի-Քաջարան հատվածը վաճառվում է «Գազպրոմ Արմենիա»-ին», Ազատություն ռադիոկայան, 3 հունիսի 2015թ., https://www.azatutyun.am/a/27051397.html:

[128] ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի ««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N1035-Ա որոշում. http://www.irtek.am/views/act.aspx?aid=91267:

[129] ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի ««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» N463-Ա որոշում. http://www.irtek.am/views/act.aspx?aid=94662:

[130] «Կառավարությունը դադարեցնում է ԲԷՑ-ի վերաբերյալ «Տաշիր կապիտալ»-ի պայմանագիրը», Ազատություն ռադիոկայան, 30 մայիսի 2018թ., https://www.azatutyun.am/a/29259393.html

[131] «Տաշիր կապիտալը» հակադարձում է կառավարությանը՝ հենց իրենք են հրաժարվել ԲԷՑ-երի կառավարումից», Ազատություն ռադիոկայան, 31 մայիսի 2018թ., https://www.azatutyun.am/a/29261946.html:

[132] ՀԱԷԿ-ը գտնվում է 1988թ. ավերիչ երկրաշարժի կենտրոնից 83 կմ հեռավորության վրա:

[133] ՀՀ կառավարության 1993թ. ապրիլի 7-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի վերագործարկման աշխատանքների մասին» N160 որոշում, ՀՀ կառավարության 1994թ. մարտի 30-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի

ՀԱԷԿ-ը մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց զգալի պարտքեր էր կուտակել[134]: 2003թ.-ին ռուսական Ինտեր «ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ-ն հինգ տարով ստանձնեց ՀԱԷԿ-ի հավատարմագրային կառավարումը, ինչը հետագայում երկարաձգեց մինչև 2013թ.[135]: 2011թ.-ի վերջում հայկական մամուլը պնդում էր, որ Ինտեր «ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ-ն ծրագրում է վաղաժամ դադարեցնել ՀԱԷԿ-ի համաձայնագիրը[136]: 2012թ.-ին ՀՀ կառավարությունը Ինտեր «ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ-ի խնդրանքով իսկապես խզեց հավատարմագրային կառավարման համաձայնագիրը[137]:

Խորհրդային տարիներին կառուցված ռեակտորը պետք է իր գործունեությունը դադարեցներ 2017թ.-ին, ինչին պատրաստվելով՝ ՀՀ կառավարությունը 2006թ.-ին միջոցների կուտակման հատուկ հաշիվ բացեց[138] և դրա կառավարման համար պատասխանատու խորհուրդ ձևավորեց[139]:

2008թ.-ին նախագահ Սարգսյանը հայտարարեց, որ «առաջիկա ամիսների ընթացքում Հայաստանը սկսում է նոր ատոմակայան կառուցել»[140]: 2008-2009թթ.-ին ՀՀ կառավարությունը այդ հարցով քննարկումներ նախաձեռնեց, ավստրալիական Ուորլի Պարսոնս ընկերությանն ընտրեց 5 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ 1000-1200 ՄՎտ հզորությամբ ատոմակայանի կառուցման կառավարիչ[141] և 404 հազար ԱՄՆ դոլար հատկացրեց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը կառավարման ծառայությունների դիմաց վճարելու համար[142]:

Սակայն 2014թ.-ին ՀՀ կառավարությունը որոշեց[143] և Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ ՀԱԷԿ-ի երկրորդ ռեակտորի գործունեության ժամկետը

վերագործարկման աշխատաքների հետ կապված աշխատողների աշխատանքի վարձատրության համակարգի և սոցիալական ապահովության հարցերի մասին» N142 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5429, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, http://www.minenergy.am/structures/view/structure/119:

[134] «ՀԱԷԿ-ի կառավարումը կստանձնի Հայաստանը», 6 դեկտեմբերի 2011թ., https://www.panorama.am/am/news/2011/12/06/armen-movsisyan/845102:

[135] ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 4-ի «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» N1411-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48830:

[136] «Ո՞ւմ կանցնի Մեծամորի ատոմակայանի կառավարումը», 24 նոյեմբերի 2011թ., https://www.panorama.am/am/news/2011/11/24/commersant/851465:

[137] ՀՀ կառավարության 2012թ. մարտի 1-ի ««Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրի վաղաժամկետ լուծման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի N1694-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N227-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74396:

[138] ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 12-ի «Միջուկային տեղակայանքը՝ հայկական ատոմային էլեկտրակայանը, շահագործումից հանելու համար ֆինանսական միջոցների հատուկ հաշիվ բացելու մասին» N1637-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=54929:

[139] ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 3-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանը շահագործումից հանելու համար ֆինանսական միջոցների հատուկ հաշվի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին» N532-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=55299:

[140] «Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը ժողովրդին և Ազգային ժողովին», 2 հոկտեմբերի 2008թ., https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/10/02/news-21:

[141] "Worley Parsons to manage Armenia's $5bn nuclear plant project", 20 May 2009, https://www.power-eng.com/2009/05/20/worley-parsons-to-manage-armenias-5bn-nuclear-plant-project/#gref:

[142] ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի գումարներն ավելացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N1573-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գումար հատկացնելու մասին» N789-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=52855:

[143] ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի

երկարացնելու համար համագործակցության վերաբերյալ համաձայնագիր ստորագրեց[144]: 2018թ.-ին ՀՀ կառավարությունը հաստատեց ՀԱԷԿ-ի գործունեության երկարաձգման համար անհրաժեշտ ներդրումների[145] և գործողությունների[146] ծրագրերը:

Հարկ է հավելել, որ վառելիքի մատակարարման առումով ՀԱԷԿ-ը կախված է Ռուսաստանից:

4.2.2 Հեռահաղորդակցություն

Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտում գործում են երեք խոշոր և մի քանի փոքր ընկերություններ:

4.2.2.1 «Արմենտել»

1998թ.-ին հունական OTE ընկերությունը ձեռք բերեց Հայաստանի կապի օպերատորի (այսուհետ՝ Արմենթել) 90 տոկոս բաժնեմասը[147]: 2000-ականների սկզբում Արմենտելը Հայաստանի միակ բջջային օպերատորն էր և, համաձայն №60 լիցենզիայի, մենաշնորհային իրավունք ուներ բջջային և ինտերնետային կապի ծառայությունների ոլորտում: OTE-ն և ՀՀ կառավարությունը մի շարք վեճեր ունեցան, որոնք երկար տարիներ բացասական ազդեցություն ունեցան Հայաստանի ներդրումային միջավայրի վրա: 2004թ. հուլիսին կողմերը հաշտեցման բանակցություններ սկսեցին, որոնց արդյունքում ՀՀ կառավարությունը փոփոխեց և հրապարակեց վերանայված՝ այսպես կոչված «նոր» №60 լիցենզիան[148]: Ձեռք բերվեց համաձայնություն Արմենթելի մենաշնորհը վերացնելու վերաբերյալ, սակայն, միևնույն ժամանակ, ՀՀ կառավարությունը համաձայնվեց, որ երկրորդ օպերատորի լիցենզիան չի կարող ավելի բարենպաստ լինել, քան նոր №60 լիցենզիան (1), մինչև 2009թ.-ի հունվարի 1-ը երրորդ լիցենզիա չի տրամադրվի (2), և

երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» N1311-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94115:

[144] «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագիրը ստորագրվել է Մոսկվայում, 2014թ. դեկտեմբերի 20-ին, http://www.irtek.am/views/act.aspx?aid=80407:

[145] ՀՀ կառավարության 2018թ. մայիսի 3-ի «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետ երկարաձգման ներդրումային պլանին հավանություն տալու և դրանից բխող միջոցառումների իրականացման մասին» N548-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122318:

[146] ՀՀ կառավարության 2018թ. մայիսի 3-ի «Ռուսաստանի Դաշնության աջակցությամբ իրականացվող «Հայկական ատոմային էլեկտրակային 2–րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացում» ծրագրի շրջանակներում հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագիրը հաստատելու մասին» N542-Ա որոշում, https://www.e-gov.am/gov-decrees/item/30311:

[147] 1994թ. ենթադրաբար ամերիկյան Trans World Telecom (TWT) ընկերությունը ձեռք էր բերել Հայաստանի հեռահաղորդակցության պետական օպերատորի՝ Արմենտելի 49% բաժնեմասը: Մնացած 51% բաժնեմասի սեփականատերը ՀՀ կառավարությունն էր: Լիլիթ Ավագյան, «Դատ, որը միշտ մեզ հետ է», Առավոտ, 27 հուլիսի 1999թ., https://www.aravot.am/1999/07/27/786955 և Edited by Ronald Deibert et al., "Access Controlled: The Shaping of Power, Rights, and Rule in Cyberspace", Massachusets Institute of Technology, 2010, https://library.oapen.org/bitstream/id/983c1e21-331d-4693-8ab4-04fa665a903f/1004009.pdf:

[148] ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության, Հելենիք Թելեքոմունիքեյշնզ օրգանիզեյշն Ս.Ա (OTE) կազմակերպության և «Արմենթել» ՀՁ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված հաշտության համաձյնությանը հավանություն տալու մասին» N1570-Ա որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=27503 և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007թ. օգոստոսի 24-ի ««Արմենտել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված թիվ 60 լիցենզիայի փոփոխված տարբերակը հաստատելու մասին» N341-Ն որոշում, https://www.arlis.am/documentView.aspx?docid=81372:

ընդունված օրենքները չեն հակասի Արմենթելին տրամադրված լիցենզիայի պայմաններին (3):

2006թ.-ի հունիսին OTE-ն բաց մրցույթ հայտարարեց իր բաժնեմասի համար և այն վաճառեց ռուսական Վիմպելկոմին, որը Հայաստանում գործում էր Բիլայն ապրանքանիշի ներքո: ՀՀ կառավարությունը հայտարարեց, որ եթե Վիմպելկոմը հրաժարվի ինտերնետային կապի բնագավառում մենաշնորհային իրավունքից, ինքը վերջինիս կվաճառի նաև իրեն պատկանող բաժնետոմսերի 10 տոկոսը[149]: 2007թ.-ին ՀՀ կառավարությունը Արմենթելի բաժնետոմսերի իրեն պատկանող վերջին 10 տոկոսը վաճառեց Վիմպելկոմին, որը հետագայում վերանվանվեց «Վեոն Արմենիա»-ի: 2020թ.-ի սկզբում հրապարակումներ եղան, որ Յուքոմը պատրաստվում է ձեռք բերել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ն:

2020թ.-ի հուլիսին Յուքոմի հիմնադիր Եսայան եղբայրների ստեղծած «Թիմ» ՍՊԸ-ն ձեռք բերեց «Վեոն Արմենիա» ընկերության բաժնետոմսերը[150]:

4.2.2.2 «Վիվասել»

«**Վիվասել**»-ը Հայաստան մուտք գործած երկրորդ բջջային օպերատորն էր: Այն լիբանանցի գործարար Պյեռ Ֆատուշի կողմից 2004թ.-ին հիմնադրված «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ի ապրանքանիշն էր և Հայաստանում սկսել է գործել 2005թ.-ից[151]: «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ի 100 տոկոսի բաժնետերն էր Լիբանանում գրանցված «ԿՏ (Հոլդինգ) ՍԱԼ» ՓԲԸ-ն, որի հիմնական բաժնետերն, իր հերթին, Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված International Cell Holding Ltd-ն էր: 2007թ.-ին ռուսական մասնավոր «Mobile TeleSystem» («MTS» կամ ՄՏՍ) ընկերությունը ձեռք բերեց «Ղ-տելեկոմ» ՓԲԸ-ի սեփականատեր International Cell Holding Ltd-ի բաժնետոմսերի 80 տոկոսը:

ՄՏՍ-ի 51.5 տոկոս սեփականատեր հանդիսացող «Սիստեմա» բաժնետիրական ֆինանսական կորպորացիայի (այսուհետ՝ ԲՖԿ) տնօրենների խորհրդի անդամ և 0.0052 տոկոսի բաժնետեր է հանդիսանում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ընդ որում, առկա չէ տեղեկություն, թե ինչպե՞ս և ե՞րբ է նա դարձել ՄՏՍ-ի բաժնետեր[152]: «Սիստեմա» ԲՖԿ-ի 64 տոկոսի բաժնետերը և տնօրենների խորհրդի նախագահը ռուսաստանցի գործարար Վլադիմիր Եվտուշենկովն էր, ով 2014թ.-ին Ռուսաստանի Դաշնության քննչական կոմիտեի կողմից մեղադրվում էր փողերի լվացման մեջ:

---

[149] Emil Danielyan, “Government Sells Minority Share in ArmenTel”, Radio Liberty, 22 March 2007, https://www.azatutyun.am/a/1587349.html:

[150] «Հանձնաժողովը համաձայնություն տվեց «Վեոն Արմենիա» ընկերության բաժնետոմսերը «Թիմ» ՍՊԸ-ին օտարելուն», 10 հուլիսի 2020թ., http://www.psrc.am/news/topic/10928:

[151] Քրիստինե Աղալարյան և Էդիկ Բաղդասարյան, «Հայաստանի ինտերնետի սեփականատերերը», Հետք, 6 հոկտեմբերի 2015թ., https://hetq.am/hy/article/62887: Հոդվածի համաձայն՝ International Cell Holding Ltd-ին էր պատկանում «ԿՏ (Հոլդինգ) ՍԱԼ» ՓԲԸ-ն 29998 բաժնետոմս, մեկական բաժնետոմս տնօրինում էին ռուսաստանյան ՄՏՍ-ի երկու պաշտոնյաներ՝ Արտյոմ Վալիլևն ու Պավել Մաշարովը:

[152] Նույն տեղում:

4.2.2.3 Օրանժ-Յուբոմ

2009թ.-ին Հայաստանի հեռահաղորդակցության շուկա մուտք գործեց ֆրանսիական **Օրանժ ընկերությունը**, սակայն 2015թ.-ին այն որոշեց լքել այն և իր բաժնետոմսերը վաճառեց Յուբոմին: Վերջինս պատկանում էր մի խումբ մարդկանց, որոնց մի մասը կապեր ուներ բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ[153]: Յուբոմի բաժնեմասերի 49 տոկոսը պատկանում էր Կիպրոսում գրանցված «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ ընկերությանը, որի 100 տոկոս բաժնետերը բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված Darison Management Ltd-ն էր: Բաժնեմասերի 41 տոկոսը պատկանում էր ՀՀ ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանի հորեղբոր որդուն՝ Արամ Սուրենի Խաչատրյանին: Յուբոմի հիմնադիրներ՝ Եսայան երկու եղբայրները հանդիսանում էին Յուբոմի 5-ական տոկոս բաժնեմասերի սեփականատեր:

2020թ.-ի սկզբում տեղի ունեցավ բաժնետերերի փոփոխություն, և ռուսական «Ֆորա բանկը», որը կապված է Տաշիր գրուպի հետ, դարձավ Յուբոմի 10.5 տոկոսի բաժնետեր[154]: 2020թ.-ի փետրվարին ՀԾԿՀ-ն հայտարարեց, որ Վեոնը և Յուբոմը «Վեոն Հայաստանի» 100 տոկոս բաժնետոմսերը «Յուբոմ»-ին վաճառելու հայտ են ներկայացրել[155]:

2020թ.-ի ապրիլին, երբ Եսայան եղբայրների մասնաբաժինը Յուբոմում նվազել էր մինչև 5.94 տոկոս, նրանք Յուբոմի մնացած բաժնետերերին առաջարկել էին 22 մլրդ դրամով իրենց վաճառել ընկերության մնացած 94.06 տոկոսը[156]: Կարճ ժամանակ անց Եսայանները լքեցին Յուբոմը[157], իսկ 2020թ.-ի հուլիսին ՀԾԿՀ-ն համաձայնվեց, որպեսզի Եսայանների ստեղծած «Թիմ» ՍՊԸ-ն[158] ձեռք բերի «Վեոն Արմենիա» ընկերության բաժնետոմսերը[159]: Գործընթացը հարուցեց մի շարք կասկածներ հանրության շրջանում[160]:

4.2.2.4 «ՋիԷնՍի-ԱԼՖԱ»

Հեռահաղորդակցության ոլորտի փոքր ընկերություններից է **«ՋիԷնՍի-ԱԼՖԱ»**-ն, որը «Ռոստելեկոմ» ապրանքանիշի ներքո ֆիքսված հեռախոսակապի, ինտերնետ հասանելիության և նոր սերնդի հեռուստատեսության ծառայություններ է մատուցում Հայաստանում: Հայաստանում «Ռոստելեկոմ»-ի անուղղակի սեփականատերը բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված Rostelecom International Ltd–ն է, որի 100

---

[153] Նույն տեղում:

[154] Քրիստինե Աղալարյան, «Հայաստանի կապի և հեռահաղորդակցության ոլորտի սեփականատերերը փոխվում են», Հետք, 21 հունվարի 2020թ., https://hetq.am/hy/article/112363, Фора-банк, "Список лиц, под контролем, либо значительным влиянием которых находится кредитная организация", Москва, 14 декабря 2018г., https://www.forabank.ru/bank-info/rukovodstvo, Сайт Фора-банк, https://www.forabank.ru/bank-info/rukovodstvo:

[155] «Պարզաբանում «ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ-ի կողմից «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 տոկոս բաժնետոմսերի հնարավոր գնման և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից շարժական կապի շուկա ենթադրյալ 4-րդ օպերատորի մուտքի խոչընդոտման վերաբերյալ», 11 փետրվարի 2020թ., http://www.psrc.am/news/topic/10773:

[156] «Եսայան եղբայրները «Յուբոմ»-ի մյուս սեփականատերերին առաջարկել են իրենց վաճառել մնացած 94 տոկոս բաժնետոմսերը», Ազատություն ռադիոկայան, 10 ապրիլի 2020թ., https://www.azatutyun.am/a/30546723.html:

[157] Նարինե Ղալեչյան, «Յուբոմ»-ի նոր տնօրենը վերստին միավորվելու կոչ է անում ընկերությունը լքած 800-ից ավելի աշխատակիցներին», Ազատություն ռադիոկայան, 23 ապրիլի 2020թ., https://www.azatutyun.am/a/30571629.html:

[158] «Թիմ» ՍՊԸ, https://www.e-register.am/am/companies/1275478:

[159] «Հանձնաժողովը համաձայնություն տվեց «Վեոն Արմենիա» ընկերության բաժնետոմսերը «Թիմ» ՍՊԸ-ին օտարելուն», 10 հուլիսի 2020թ., http://www.psrc.am/news/topic/10928:

[160] Յուբոմի փոշիացման գործընթացը շարունակվում է, Հրապարակ, 14 հուլիսի 2020թ., https://hraparak.am/post/5aa9a340d687c0985f954940e09f789f, «Ով չի համաձայնվում վաճառել Յուբոմի բաժնեմասերը. մանրամասներ բանակցություններից», «Ժողովուրդ», 14 ապրիլի 2020թ., https://armlur.am/989022:

տոկոսը պատկանում է ռուսական «Ռոստելեկոմ»-ին: «Հետք»-ի հրապարակման համաձայն, ռուսաստանյան «Ռոստելեկոմ» ՓԲԸ-ի մեծ բաժնետերը ՌԴ կառավարությունն է[161]՝ ի դեմս «Ռոսիմուշեստվո» պետական գործակալության (43 տոկոս), «Վնեշէկոնոմբանկ»-ի (3.8 տոկոս), ներդրումային հիմնադրամի (1 տոկոս) և ՌԴ դեպոզիտարիայի (42 տոկոս):

4.2.2.5 «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի»

2006թ.-ին հիմնադրված և լայնաշերտ ինտերնետ ծառայություններ մատուցող հայ-նորվեգական **«Արմենիան Դեյթաքոմ Քամփնի»** ընկերության (այսուհետ՝ ADC) հետ են կապվում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդու՝ Սեդրակ Քոչարյանի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվան Զախարյանի որդու՝ նախկին դատավոր Արտակ Զախարյանի և անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի նախկին տեղակալ Խաժակ Կարայանի անունները: ADC բաժնետերերն են Կիպրոսում գրանցված Cupizinco Holdings C. LTD –ն՝ 37.65 տոկոս, հայկական «Երևան Տելեկոմ» ՓԲԸ-ն՝ 23.21 տոկոս, նորվեգական Telesto Norge AS-ը՝ 3.01 տոկոս: Cupizinco Holding C.LTD-ի բաժնետերերը օֆշորներում գրանցված ընկերություններ են: Վերջնական՝ Amicorp Netherlands Holdings B.V.-ն ընկերությունների խումբը մասնագիտացած է հենց օֆշորների անանուն և գաղտնի կառավարման մեջ: Այս խմբի ղեկավարած ընկերությունները հայտնվել են փողերի լվացման և հարկերից խուսափելու գործերում:

2014թ.-ի նոյեմբերին «ՎՏԲ-Հայաստան բանկի» հայցի հիման վրա ADC-ն սնանկ է ճանաչվել[162]: Ներկայում ընկերությունը փորձում է իրականացնել առողջացման ծրագիր:

4.2.3 Ֆինանսական ոլորտ

Օտարերկրյալ ներդրումներ առկա են բանկային համակարգում և ապահովագրական ընկերություններում:

4.2.3.1 «Հայխնայբանկ»

«Հայխնայբանկ» ՓԲԸ-ն ստեղծվել է 1993թ.-ին[163]: Դրա մասնավորեցումը նախատեսվում էր «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» օրենքով[164]: 2000թ.-ին ՀՀ կառավարությունը որոշել էր, որ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն մասնավորեցվելու է նախապես որակավորված ռազմավարական ներդրողին, ընդ որում, մասնավորեցման առաջին փուլն իրականացվելու է հայտարարված բաժնետոմսերի

[161] Քրիստինե Աղալարյան և Էդիկ Բաղդասարյան, «Հայաստանի ինտերնետի սեփականատերերը», Հետք, 6 հոկտեմբերի 2015թ., https://hetq.am/hy/article/62887:
[162] Նույն տեղում:
[163] ՀՀ կառավարության 1993թ. հուլիսի 5-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի Հայկական Հանրապետական բանկը Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված խնայողական բանկի վերակազմավորման մասին» N345 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=5296:
[164] ՀՀ օրենքը «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին», https://www.arlis.am/documentview.aspx?docid=78059:

շրջանակներում նոր բաժնետոմսերի թողարկմամբ»[165]: Նոր բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեին մրցույթով՝ այնպես, որ պետական սեփականություն չհանդիսացող բաժնետոմսերի քանակը լիներ 51 տոկոսից ավելի: Ստեղծվել էր «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի նոր բաժնետոմսերի տեղաբաշխման մրցույթի հանձնաժողով, որը նախագահում էր ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը, և որի կազմում ընդգրկվել էին ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (համաձայնությամբ), ՀՀ արդարադատության և ՀՀ պետական գույքի կառավարման նախարարը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության իրավաբանական գլխավոր վարչության պետը, որը հանդիսանում էր «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ[166]:

«Հայխնայբանկ» ՓԲԸ-ի նոր բաժնետոմսերի տեղաբաշխմանը մասնակցելու համար նախնական որակավորման հնարավոր թեկնածուների ցանկում ընդգրկվել էին Ռուսաստանի խնայբանկը, ՎՁԵԲ-ը, ուզբեկական «UN Group Uzbekistan-Netherlands» ընկերությունը, լիբանանյան «Bank of Beirut s.a.l.», բրիտանական «SK. ALIKAWO Group»-ը, բրիտանացի Սատիա Փալ Մանգլան, ամերիկյան «Caucasus Advisors»-ը, հայկական «Հայներարտբանկ» ՓԲԸ-ն և «Արդշինբանկ» ԲԲԸ-ն:

Համաձայն մամուլի հրապարակումների, մինչև նախաորակավորման հայտի ներկայացման ժամկետը ՀՀ կառավարության 2001թ. №88 որոշմամբ հաստատված ցանկի 9 ընկերություններից 7-ը գրավոր հրաժարվել են մասնակցությունից[167]: «SK. ALIKAWO Group»-ի դիմումը մերժվել է Կենտրոնական բանկի կողմից, իսկ «Հայներարտբանկը» չի ներկայացրել նախաորակավորման հայտը, ինչի արդյունքում մրցույթը չի կայացել: 2001թ.-ի մարտին ՀՀ կառավարությունը «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի մասնավորեցման ավարտի ժամկետ է սահմանել 2001թ.-ի օգոստոսը[168]:

Սկզբում «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն գնելու ցանկություն է հայտնել «Պրոմեթևս բանկ» ՍՊԸ-ն, սակայն հետագայում հրաժարվել է այդ գաղափարից: Դրանից հետո ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն օտարելու վերաբերյալ պայմանագիր է կնքել մոսկովյան «Ֆորա» բանկի հետ: Սակայն 2001թ.-ի հուլիսին «հանկարծակիորեն» «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն գնելու ցանկություն է հայտնել Միխայիլ Բաղդասարովի գլխավորած «Միկա Արմենիա Տրեդինգ» և Բահամյան կղզիներում գրանցված «Արջ Լիմիթեդ» կոնսորցիումը, Հայաստանի Կենտրոնական բանկը «մերժել է արդեն նախնական պայմանագիր կնքած «Ֆորա» բանկի դիմումը» և հավանություն է տվել կոնսորցիումի կողմից ներկայացված առաջարկին, որի համաձայն «Միկա Արմենիան» «Ֆորա» բանկից կես միլիոն դոլարով պակաս գումար է վճարել:

---

[165] ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 13-ի «Հայխնայբանկ» պետական փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների մասին» N550 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=8035 և https://www.gov.am/am/news/item/1139:

[166] ՀՀ կառավարության 2001թ. փետրվարի 7-ի «Հայխնայբանկ» պետական փակ բաժնետիրական ընկերության նոր բաժնետոմսերի փակ տեղաբաշխմամբ մասնավորեցնելու մասին» N88 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=8339:

[167] Գառնիկ Գևորգյան, ««Հայխնայբանկը» վաճառել Բաղդասարովին. Այս խնդիրն է լուծել կառավարությունը», Հայկական ժամանակ, 25 օգոստոսի 2001թ., https://armtimes.com/hy/article/53185:

[168] ՀՀ կառավարության 2001թ. մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N167 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=43531:

2001թ.-ի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը փակ տեղաբաշխմամբ մասնավորեցրել է «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի ոչ միայն նախապես հայտարարված նոր թողարկվող բաժնետոմսերը[169], այլև ուղղակի վաճառքի ձևով գնորդին է փոխանցել նաև պետական սեփականություն հանդիսացող մնացած բոլոր բաժնետոմսերը[170]:

Փաստորեն, ՀՀ կառավարության 2000թ.-ի №550 որոշմամբ սահմանված «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն «ռազմավարական ներդրողի» օտարելու փոխարեն այն վաճառվել է բենզինի և ալյուրի բիզնեսով զբաղվող ընկերությանը: «Հայկական ժամանակ» օրաթերթի կարծիքով երկրի ֆինանսական հոսքերի նկատմամբ վերահսկողություն սահմանելու (այդ տարիներին «Հայխնայբանկ»-ի միջոցով էին կատարվում էլեկտրաէներգիայի և այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների մի զգալի մասը), ինչպես նաև ընտրությունների ժամանակ Հայաստանի ցանկացած բնակավայրում գործող կառույց ունենալու հեռանկարով:

2004թ.-ին «Վնեշտորգբանկ» ԲԲԸ-ն «Mika Armenia Trading»-ից ձեռք է բերել «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 70.002%-ը: Գործարքը հնարավոր էր դարձել երկու երկրների ամենաբարձր ղեկավարների հավանությամբ[171]: «Վնեշտորգբանկ» ԲԲԸ-ի վարչության նախագահ Անդրեյ Կոստինի և «Միկա Լիմիթեդ» ընկերության նախագահ Միխայիլ Բաղդասարովի միջև բաժնետոմսերի փոխանցման պայմանագրի ստորագրման արարողությանը ներկա էր նաև ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի գնումը «Վնեշտորգբանկ» ԲԲԸ-ի կողմից նման առաջին գործարքն էր նախկին Խորհրդային Միության տարածքում: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2006թ.-ի հունիսի 20-ի որոշմամբ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ն վերանվանվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ի[172]:

«Հայխնայբանկ» ՓԲԸ-ի մասնավորեցումը մեկն էր այն դեպքերից, երբ ընկերությունը նախ մասնավորեցվում էր միջնորդ կազմակերպությանը, որի հետևում կանգնած էին ՀՀ իշխանության բարձրագույն վերնախավին մոտ կանգնած մարդիկ (այս դեպքում՝ Միխայիլ Բաղդասարովը), ապա ավելի բարձր գնով վաճառվում էր վերջնական ռուս գնորդին:

2008թ.-ին ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը նշել էր, որ «Հայխնայբանկ»-ի մասնավորեցման ժամանակ գործել են կոռուպցիոն սխեմաներ[173]: «Հայխնայբանկ»-ի օտարման ժամանակ տեղ գտած խախտումների վերաբերյալ իր հայտարարությունների համար Հ. Բագրատյանը դատական հետապնդման ենթարկվեց ՀՀ վարչապետ, ՀՀ

[169] ՀՀ կառավարության 2001թ. սեպտեմբերի 8-ի «Հայխնայբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը մասնավորեցնելու մասին» N835 որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=14290:
[170] ՀՀ օրենքը «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի կատարման 2001 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1116:
[171] Ատոմ Մարգարյան, ««Հայխնայբանկը»-ը դարձավ Ռուսաստանի խոշոր պետական բանկերից մեկի սեփականությունը», 24 մարտի 2004թ., https://www.azatutyun.am/a/1573352.html:
[172] «Հայխնայբանկը» վերանվանվել է «ՎՏԲ-Հայաստան բանկ»-ի, 31 հուլիսի 2006թ., https://banks.am/am/news/newsfeed/970:
[173] «Որոշումները պետք է վերանայվեն», Առավոտ, 2 փետրվարի 2008թ., համառոտագրությունը՝ https://transparency.am/hy/cases/view/3089:

կենտրոնական բանկի նախկին նախագահ Տիգրան Սարգսյանի կողմից և հսկայական տուգանք վճարեց[174]:

Հարկ է նշել, որ ՎՏԲ-Հայաստանը ֆինանսավորում էր ԷյՍիՓի-ին (Armenian Copper Project), որը շահագործում էր խնդրահարույց եղանակներով թույլտվություն ստացած Թեղուտի հանքավայրը Հայաստանի հյուսիսում: 2018թ.-ին ԷյՍիՓի ընկերության պարտքերի դիմաց Թեղուտի հանքավայրի կառավարումն ամբողջությամբ անցավ ՎՏԲ-Հայաստան բանկին[175]: Հանքավայրը 380 մլն ԱՄՆ դոլարի ժամկետանց վարկային պարտավորություններ ուներ ՎՏԲ բանկի նկատմամբ, ինչը բավականին խոշոր գումար է Հայաստանի տնտեսության համար:

4.2.3.2 Այլ բանկեր

Հայաստանի ֆինանսական համակարգում առանցքային տեղ զբաղեցնող բանկերի զգալի մասը՝ 17-ից 7-ն աշխատում են ռուսական կապիտալով: Ի լրումն ՎՏԲ-Հայաստանի՝ դրանք են Ամերիաբանկը, Արդշինբանկը, Յունիբանկը, Էվոկաբանկը, Հայբիզնեսբանկը և ԱյԴի Բանկը:

Մնացած բանկերում առկա է ֆրանսիական (ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ), լիբանանյան (Բիբլոս), բրիտանական (Էյչ-Էս-Բի-Սի), շվեյցարական (ԱրմՍվիսԲանկ), արգենտինյան (Կոնվերս) և իրանական (Մելլաթ) կապիտալ:

4.2.3.3 Ապահովագրական ընկերություններ

2020թ.-ի սկզբի դրությամբ՝ Հայաստանում գործող 7 ապահովագրական ընկերություններից չորսն ունեն ռուսական կապիտալ:

«Ինգոսստրախը» հանդիսանում է «Ինգո Արմենիա» ՓԲԸ-ի 75 տոկոսի բաժնետերը, իսկ մնացած 25 տոկոսը պատկանում է անհատների: «Ավոդոկա Հոլդինգս Լիմիթեդ» ՍՊԸ-ն «Ռոսգոսստրախ Արմենիա» ՓԲԸ-ի միակ բաժնետերն է[176]: «Պոլիգրաֆիա» ՓԲԸ-ն և «ՍիԱյԷս էքուիթի փարթնրզ լիմիտեդ» ՍՊԸ-ն ("CIS Equity Partners Limited" Ltd) հանդիսանում են 2008թ.-ին հիմնադրված «Ռեսո» ՓԲԸ-ի 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր[177]: «Արմենիա Ինշուրանս» ՍՊԸ-ի նշանակալից մասնակիցներն են «Ռեգիոն» ֆինանսական արդյունաբերական կորպորացիա» ՓԲԸ-ն (95.035%) և

[174] «Տ. Սարգսյան – Հ. Բագրատյան բանավեճ», Առավոտ, 26 հուլիսի 2008թ., https://www.aravot.am/2008/07/26/331629 և «ՀԱԿ-ը պահանջում է դադարեցնել Հրանտ Բագրատյանի նկատմամբ իրականացվող ֆինանսական ահաբեկչությունը», Հետք, 13 հուլիսի 2011թ., https://hetq.am/hy/article/2907:

[175] Կարինե Սիմոնյան, «Թեղուտի հանքավայրի կառավարումն ամբողջությամբ անցել է ՎՏԲ բանկին», Ազատություն ռադիոկայան, 1 հոկտեմբերի 2018թ., https://www.azatutyun.am/a/29519681.html:

[176] «Ռոսգոսստրախ-Արմենիա» ՓԲԸ-ն ստեղծվել է 2008թ.-ին: Վասիլեիոս Մումուլիդիսը և Գագիկ Գրիգորյանը անուղղակի էական մասնակցություն ունեն «Ռոսգոսստրախ-Արմենիա» ՓԲԸ-ում, «Ռոսգոսստրախ-Արմենիա» բաժնետերեր և ներդնողներ, 12 մայիսի 2020թ., https://www.rgs.am/hy/about-company/96/shareholders-and-investors:

[177] Սերգեյ Սարկիսովը և «Մաքսիմուս Օվերսիս» ներդրումային ընկերությունը, «Ռուսո 1» ինվեստմնթը «CIS Equity Partners Limited» ՍՊԸ-ի միջոցով ունեն անուղղակի էական մասնակցություն, իսկ Գագիկ Զաքարյանը և Անահիտ Դանիելյանն անուղղակի էական մասնակցություն ունեն «Պոլիգրաֆիկա» ՓԲԸ-ի միջոցով, Ռեզո Ինշուրանս, 26 հոկտեմբերի 2015թ., http://reso.am/arm/100/free.html:

«Արդշինբանկ» ՓԲԸ-ն[178]: «Ռեգիոն» ֆինանսական արդյունաբերական կորպորացիա» ՓԲԸ-ի միակ բաժնետերն է հանդիսանում «Արդշինբանկ» ՓԲԸ վերջնական շահառու և խորհրդի նախագահ անձը[179]:

Մյուս ապահովագրական ընկերություններից, «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ընկերության բաժնեմասի 40 տոկոսը պատկանում է ՀՀ երկրորդ նախագահի որդուն՝ Լևոն Քոչարյանին, իսկ 40 տոկոսը՝ Վահագն Խաչատրյանին[180]:

4.2.4 Հանքարդյունաբերություն

Հայաստանում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն ունի 26, իսկ երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ 13 ընկերություն:

Ընդերքօգտագործող ընկերությունների իրական սեփականատերերի հիմնական մասը հանդիսանում են Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիները, թեև կան նաև Գերմանիայի, Շվեդիայի Միացյալ Թագավորության, Կանադայի և Ավստրիայի քաղաքացիներ: Ֆոնդային բորսաներում ցուցակված բաժնետոմսերով միջանկյալ իրավաբանական և անուղղակի մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց թվում նշվում են Կիպրոսում, Լյուքսեմբուրգում, Բրիտանական Վիրջինյան կղզիներում, Նիդեռլանդների Թագավորությունում, Մեն կղզում (ՄԹ) և Բերմուդյան կղզիներում գրանցված ընկերություններ (Աղյուսակ 3): 2020թ.-ին կատարված ուսումնասիրության արդյունքում «Հետք»-ի լրագրողը եզրակացրել էր, որ մետաղական հանքերից՝ պղնձից և մոլիբդենից ստացվող շահույթի առյուծի բաժինը հոսում է դրանց սեփականատեր հանդիսացող ռուս գործարարների գրպանը[181]:

Աղյուսակ 3. Հայաստանում մետաղական հանքեր շահագործող սեփականատերերի, ցուցակված բաժնետոմսերով միջանկյալ իրավաբանական անձանց և անուղղակի մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց ցանկ

		Սեփականատեր	Քաղաքացիություն
1	**«Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ**		
		Վարդան Մարգարյան	Հայաստան
2	**«Պարամաունտ Գոլդ Մայնինգ» ՓԲԸ**		
		Սիման Պովարենկին	Ռուսաստան
		Տիգրան Արզաքանցյան	Հայաստան
		Սմբատ Նասիբյան	Հայաստան

[178] «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ նշանակալից մասնակիցներ, Արմենիա Ինշուրանս, 28 փետրվարի 2020թ., http://armeniainsurance.am/about/qualifying-holders:

[179] «Առեքսիմբանկ-Գազպրոմբանկ խումբ» ՓԲԸ-ն կմիանա «Արդշինբանկ»-ին, Թերթ.am, 11 հոկտեմբերի 2016թ., https://www.tert.am/am/news/2016/10/11/bank/2159947:

[180] «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ նշանակալից մասնակիցներ, Նաիրի Ինշուրանս, https://www.nairi-insurance.am/index.php?m=pages&p=41:

[181] Քրիստինե Աղալարյան, «Մետաղական հանքերի սեփականատերերը. Հայկական պղնձի և մոլիբդենի առյուծի բաժնից շահույթ են ստանում ռուս գործարարները», Հետք, 6 հունիսի 2020թ., https://hetq.am/hy/article/117849:

		Արտյոմ Պետրոսյան	Հայաստան
		Ջեիզեր Ասսեթ Հոլդինգս ԼԹԴ (Բի Վի Այ)	Վիրջինյան կղզիներ
		Գեոպրոմայնին Ինվեստմենտ (ՍԻՓ) Լիմիթեդ	Կիպրոս
		Կառլոու Բ.Վ.	Նիդեռլանդներ
		ՋԻ ՓԻ ԷՄ Արմենիա Բի.Վի.	Նիդեռլանդներ
		ԷՅ ԷՄ ՋԻ ԷՄ Ս.ա.ր.լ.	Լյուքսեմբուրգ
		Նակիլեպ Օվերսիզ Լիմիտեդ (Կիպրոս)	Կիպրոս
3	**«Սագամար» ՓԲԸ**		
		Սամվել Չոբանյան	Հայաստան
		Դմիտրի Կորժև	Ռուսաստան
		Դմիտրի Տրոիցկի	Ռուսաստան
		Գլոբալ Մեթալզ (Արմ) Լիմիթեդ	Կիպրոս
		Ֆուլաքոն Լիմիթեդ	Մեն կղզի, ՄԹ
4	**«Լեռ-էքս» ՍՊԸ**		
		Թոմաս Պետեր Հայլ	Գերմանիա
		Միխայիլ Զուրաբով	Ռուսաստան
		Միեր Պոլոսկով	Ռուսաստան
		Նարեկ Ամբարյան	Հայաստան
		Կարեն Հակոբյան	Հայաստան
		Սուրեն Ոսկանյան	Հայաստան
		«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ	Հայաստան
		«Սի 2 Քափիթալ» ՍՊԸ	Գերմանիա
		«ԱՄՓ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	Հայաստան
		«Զանգեզուր մայնինգ» ՍՊԸ	Հայաստան
		«Սթար Դասթ» ՓԲԸ	Հայաստան
		«Մուն մեթալս» ՓԲԸ	Հայաստան
		«Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդ»	Կիպրոս
5	**«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ**		
		Վահե Հակոբյան	Հայաստան
		Սամվել Խաչատրյան	Հայաստան
		«Մասկո մայն» ՓԲԸ	Հայաստան
6	**«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ՝**	**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՉԷ**	
		Նավասարդյան Սուսամբա (դադարեցված է)	
		Գինոսյան Մարիամ (դադարեցված է)	Հայաստան
7	**«Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ**		
		Սամվել Չոբանյան	Հայաստան
		Դմիտրի Կորժև	Ռուսաստան
		Դմիտրի Տրոիցկիի	Ռուսաստան
		Գլոբալ Մեթալզ (Արմ) Լիմիթեդ	Կիպրոս
		Էուլաքոն Լիմիթեդ	Մեն կղզի, ՄԹ

8	**«Չաարատ Կապան» ՓԲԸ**		
		Մարտին Անդերսոն	Շվեդիա
		Դավիթ Թովմասյան	Հայաստան
		Սերգեյ Ժուկով	Հայաստան
		Դարին Քուփեր	ՄԹ
		«Չաարաթ գոլդ հոլդինգս» ՍՊԸ	Վիրջինյան կղզիներ
		Չաարաթ գոլդ ինթերնեյշնլ լիմիթեդ	Կիպրոս
		Լաբրո Ինվեսթմենթս Լիմիթեդ	Բերմուդյան կղզիներ
9	**«ԳեոՊրոՄայնին Գոլդ» ՍՊԸ**		
		Սիման Պովարենկին	Ռուսաստան
		Ռոման Տրոցենկո	Ռուսաստան
		Ռոման Խուդոլի	Ռուսաստան
		Անատոլի Գոգոտին	Ռուսաստան
		Օլեգ Բելյաև	Ռուսաստան
		Ջերզեր Ասսեթ Հոլդինգս ԼԹԴ (ԲիՎիԱյ)	Վիրջինյան կղզիներ
		Գեոպրոմայնին Ինվեստմենտ (ՍԻՓ) Լիմիթեդ	Կիպրոս
		Կառլոու Բ.Վ.	Նիդեռլանդներ
		Նակիլեպ Օվերսիզ Լիմիտեդ (Կիպրոս)	Կիպրոս
10	**«Մուլտի Գրուպ» Կոնցեռն ՍՊԸ**		
		Գագիկ Ծառուկյան	Հայաստան
		Սամվել Ծառուկյան	Հայաստան
		Սեդրակ Առուստամյան	Հայաստան
11	**«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ**		
		Թոմաս Պետեր Հայլ	Գերմանիա
		Միխայիլ Զուրաբով	Ռուսաստան
		Միեր Պոլոսկով	Ռուսաստան
		Նարեկ Ամբարյան	Հայաստան
		Կարեն Հակոբյան	Հայաստան
		Վահե Հակոբյան	Հայաստան
		Պարագ Յոհաննես Բհատ	Գերմանիա
		Մորից Ջհոնաթան Հիերոնիմուս Հիլլ	Գերմանիա
12	**«Վարդանի զարթոնքը» ՍՊԸ**		
		Հրաչյա Հովհաննիսյան	Հայաստան
		Արտաշես Կակոյան	Հայաստան
		Սուրեն Այվազյան	Հայաստան
13	**«Լիդիան Արմենիա» ՓԲԸ**		
		Հայկ Ալոյան	Հայաստան
14	**«Լիճքվազ» ՓԲԸ**		
		Սասուն Ավետիսյան	Հայաստան
		ԷյՋիԱրՍի ՍՊԸ	Հայաստան
15	**«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ**		
		Սիման Պովարենկին	Ռուսաստան

		Ռոման Տրոցենկո	Ռուսաստան
		Ռոման Խուդոլի	Ռուսաստան
		Անդրեյ Սինյակով	Ռուսաստան
		Անդրեյ Կիշկինսկի	Ռուսաստան
		Ջեիզեր Ասսեթ Հոլդինգս ԼԹԴ (Բի Վի Այ)	Վիրջինյան կղզիներ
		Գեոպրոմայնին Ինվեստմենտ (ՍԻՓ) Լիմիթեդ	Կիպրոս
		Կառլոու Բ.Վ.	Նիդեռլանդներ
		Նակիլեպ Օվերսիզ Լիմիթեդ (Կիպրոս)	Կիպրոս
16	**«Ասսաթ» ՍՊԸ**		
		Արամ Օսիկյան	Հայաստան
		Գևորգ Օսիկյան	Հայաստան
17	**«Թեղուտ» ՓԲԸ**		
		Նորիկ Պետրոսյան	Հայաստան
		Պավել Կորիչնև	Ռուսաստան
		Sunarto LTD	Կիպրոս
		Թեղուտ Ինվեստմենտս Լիմիթեդ	Կիպրոս
		«Վեստրոկ Դեվելոփմընթ» ՍՊԸ	Կիպրոս
		«Նաիրի Ինֆրասթրակչըր Կապիտալ Լիմիթեդ (Կիպրոս)»	Կիպրոս
		«Ա. Տ. Ս. Նոմինիս Լիմիթեդ (Կիպրոս)»	Կիպրոս
		«ՎՏԲ Կապիտալ ՊԵ Ինվեսթմընթ Հոլդինգ (Կիպրոս) Լիմիթիդ (Կիպրոս)»	Կիպրոս
		«ՎՏԲ Կապիտալ Փրայվիթ Էքուիթի Հոլդինգ ԱԳ (Շվեյցարիա)»	Կիպրոս
		«Բիզնես Ֆինանս» ՍՊԸ (Ռուսաստան)	Կիպրոս
		«ՎՏԲ Բանկ ՓԲԸ (Ռուսաստան)»	Կիպրոս
18	**«Ակտիվ լեռնագործ» ՍՊԸ**		
		Վարդան Մարգարյան	Հայաստան
19	**«Թաթսթոուն» ՍՊԸ**		
		Արամ Սաֆարյան	Հայաստան
		Միխայիլ Մոգիլևսկի	Ավստրիա
		Լևոն Պողոսյան	Հայաստան
		«ՌԵԴ ՄԵԹԱԼ» ՓԲԸ	Հայաստան
		«ԼԻՆՆԵ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ	Հայաստան
		«ՍԻ.ԱՅ.ԱՅ. ՔԼԵՅ ԻՆԴԱՍՏՐԻԶ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ	Կիպրոս
		«ԱՎԱՆԴԵՐ ՀՈԼԴԻՆԳ ԼԻՄԻԹԵԴ» ՍՊԸ	Կիպրոս
20	**«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ**		
		Կարեն Հովսեփյան	Հայաստան
		Համլետ Հովսեփյան	Հայաստան
		Վարդան Հովսեփյան	Հայաստան
		Սերգեյ Մուլին	Ռուսաստան

		«ԱՎԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ռուսաստան
		Գեննադի Մուլին	Ռուսաստան
		«ԱՎԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱՄ ՓԲԸ	Ռուսաստան
		Պավել Խանչին	Ռուսաստան
		Սերգեյ Արոնով	Ռուսաստան
		Ռոստիսլավ Պրեսնով	Ռուսաստան
21	**«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՉԷ**		
		Վարթանյան Ազատ Պետրոսի (դադարեցված է)	Կանադա
22	**«ԳԵՂԻ ԳՕԼԴ» ՍՊԸ**		
		Սուրիկ Խաչատրյան	Հայաստան
23	**«ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ» ՓԲԸ**		
		Լևոն Ղազազյան	Հայաստան
		Արմենուշ Գալստյան	Հայաստան
		Ռոլանդ Ղոնյան	Հայաստան
		Ռաֆայել Հայրապետյան	Ռուսաստան
24	**«Մեգո Գոլդ» ՍՊԸ՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՉԷ**		
		Թովմասյան Հրայր (դադարեցված է)	Հայաստան
25	**«Վայք Գոլդ» ՍՊԸ՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՉԷ**		
		Վարդան Այվազյան (դադարեցված է)	Հայաստան
		Աշոտ Հովհաննիսյան (դադարեցված է)	Հայաստան
26	**«ՄԱՐԶԱՆ ՄԱՅՆԻՆԳ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ ՝ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ ՉԷ**		
		«Գլոբալ գոլդ մայնինգ» ՍՊԸ	

4.2.4.1 «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն Հայաստանի խոշորագույն ընդերքօգտագործող ընկերությունն է, որը տեղակայված է Հայաստանի հարավում՝ Ողջի գետի հովտում: Այն հիմնադրվել է 1951թ.-ին որպես պետական ընկերություն, իսկ 2004թ.-ին մասնավորեցվել է[182]:

Կոմբինատի մասնավորեցման մրցույթին մասնակցել են մի շարք ընկերություններ, այդ թվում՝ Ազարակի լեռնահարստացման ֆաբրիկայի սեփականատեր, ամերիկյան «Քոմսափ Քըմոդիթի», ինչպես նաև ռուսական «Սոյուզմետալ» ընկերությունները: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետերեր դարձան գերմանական «Քրոնիմեդ» ընկերությունը (կոմբինատի բաժնետոմսերի 60 տոկոս), Երևանի «Մաքուր երկաթ» գործարանը (15 տոկոս), «Արմենիան Մոլիբդենիում Փրոդակշն» և «Զանգեզուր Մայնինգ»

[182] Սկզբում ներառվել է «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման 1998-2000 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքում, սակայն չի մասնավորեցվել: Այնուհետև ներառվել է «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքում https://www.arlis.am/documentview.aspx?docid=78059): ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի ««Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» N1677-Ա որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=27691:

ՓԲԸ-ները (12,5-ական տոկոս)[183]: ՀՀ տնտեսության համար կարևոր էր, որպեսզի Հայաստանից արտահանվի ոչ թե կոնցենտրատ, այլ վերամշակված արտադրանք: 2004թ.-ին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը հայտարարեց. «2005 թվականի հունվարի 1-ից Հայաստանը այլևս մոլիբդենի կոնցենտրատ որպես այդպիսին չի արտահանելու: Այն ամբողջությամբ վերամշակվելու է Հայաստանում»[184]: Առկա չեն տեղեկություններ այն մասին, որ Հայաստանում արդյունահանվող մոլիբդենի ամբողջ կոնցենտրատը արտահանումից առաջ վերամշակվում է:

2014թ.-ին «Մաքուր երկաթ»-ի տնօրեն Գենիկ Կարապետյանը և նրա որդին՝ Դավիթ Կարապետյանը, իրենց բաժնեմասերը վաճառել են «Քրոնիմետ հոլդինգ» ՍՊԸ-ին: 2017թ.-ին «Զանգեզուր Մայնինգ»-ի բաժնեմասն անցել է «Մուն մեթալս» ՓԲԸ-ին, որը կապված է Կիպրոսում գրանցված «Վոլնըրթ ֆայնենս լիմիթեդ» (Walnort Finance Limiter) ընկերության հետ, որի բաժնետերերից մեկին՝ Արմեն Անտիկյանին հայկական մամուլը կապում է Սերժ Սարգսյանի փեսայի՝ Միքայել Մինասյանի բիզնեսների հետ: Ա.Անտիկյանը նաև «Ձորագետ հիդրո» ընկերության բաժնետերերից մեկն է: «Արմենիան Մոլիբդենիում Փրոդակշն»-ի, կամ հետագայում «ԱՄՓ հոլդինգ»-ի փաստաթղթերի համաձայն, բաժնեմասն անցել է «Սթար դասթ» ՓԲԸ-ին, որի բաժնետերերից մեկը աշխատել է Սերժ Սարգսյանի փեսա Միքայել Մինասյանի անվան հետ կապվող «Ձազզվե» սրճարանում որպես մենեջեր և «Դիսթրիմէքս» ընկերությունում[185]:

4.2.4.2 «Լիդիան Արմենիա»

Վերջին տարիներին Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում կատարվող խոշոր ներդրումը **«Լիդիան Արմենիա»** ընկերության կողմից Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ծրագիրն է: Համաձայն «Լիդիան Արմենիա» ընկերության ինտերնետային կայքի, բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Տորոնտոյի բորսայում ցուցակված ամերիկյան «Լիդիան Ինթերնեյշնլ» ԲԲԸ-ին[186]: Ծրագրին մասնակցում է նաև ՎՁԵԲ-ը: Ամուլսարի ծրագրում մասնակցություն ուներ նաև Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (այսուհետ՝ ՄՖԿ կամ IFC), որը 2017թ.-ին հրաժարվեց ծրագրի ֆինանսավորումից[187]:

ՀՀ արդարադատության նախարարի հրամանի համաձայն, իրական սեփականատեր է համարվում առանձին կամ փոխկապակցված անձի հետ ընկերության կանոնադրական

---

[183] «Արմենիան Մոլիբդեն Փրոդակշն» ՍՊԸ, ՀՀ կենտրոնական բանկ, հունիս 2013թ., https://www.cba.am/Storage/AM/downloads/stat_data_arm/AMP.pdf:

[184] Ատոմ Մարգարյան, «Ստորագրվեց Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վաճառքի պայմանագիրը», 14 դեկտեմբերի 2004թ., https://www.azatutyun.am/a/1575060.html:

[185] Մկրտիչ Կարապետյան, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ», Սիվիլնեթ, 1 նոյեմբերի 2019թ., https://www.civilnet.am/news/2019/11/01/Զանգեզուրի-պղնձամոլիբդենային-Մաքսիմ-Հակոբյանի-ու-նրա-որդու-փոխարեն-նոր-բաժնետերեր-Ժնևից-և-Աջափնյակից/369792:

[186] Ընկերության մասին, Լիդիան Արմենիա, https://www.lydianarmenia.am/index.php?m=pages&lang=arm&p=67:

[187] «Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) հրաժարվեց «Lydian Internatinal» ընկերության Ամուլսարի ծրագրի ֆինանսավորումից», ԷկոԼուր, 14 սեպտեմբերի 2017թ., https://www.ecolur.org/hy/news/mining/-ifc--lydian-internartional--/9492:

կապիտալի առնվազն 10 տոկոսի նկատմամբ վերահսկողություն ունեցող անձը[188]: «ԷկոԼուր»-ի համաձայն, որպես «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի իրական սեփականատեր է բացահայտվել միայն ՀՀ քաղաքացի, ընկերության գործադիր տնօրեն Հայկ Ալոյանը[189]: Ըստ «ԷկոԼուր»-ի վարկածի, ընկերության բաժնետոմսերը 10 տոկոսից պակաս չափով մասնատված են բազմաթիվ անձանց/կազմակերպությունների միջև, ինչը իրական սեփականատերերին թաքցնելու միջոց է:

2019թ.-ին տրված հարցազրույցում «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ Ալոյանը հայտարարել էր, որ անցած 14 տարիների ընթացքում ընկերությունը մոտավորապես 500 ԱՄՆ դոլարի ներդրումներ է կատարել[190]: Գագիկ Ծառուկյանը, ում պատկանող ընկերությունն, ըստ «Հետք»-ի և «ԷկոԼուր»-ի, ներգրավված է եղել Լոռու մարզի Մղարթ համայնքի մոտ ոսկու հանքավայրի շահագործմանը[191], կարծիք էր հայտնել, որ «Լիդիան Արմենիա» ընկերության ներդրումները կարող են կազմել ոչ թե 400 միլիոն ԱՄՆ դոլար, ինչպես նշել է «Լիդիան»-ը, այլ մոտավորապես 30 միլիոն[192]:

Մոսկվայի Քարնեգի կենտրոնի աշխատակից Գագիկ Ավագյանի կարծիքով, հանքերը Հայաստանի համար միայն խնդիրներ են հարուցել, դրանց հետ կապված գործունեությունը կոռումպացված է, և դրանից շահում են միայն կառավարող շրջանակները:

Դեռևս 2014թ.-ին «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնությունը նշել էր[193], որ լրջագույն ռիսկեր կան ռազմավարական ջրային պաշարների հետ, քանի որ հանքավայրի բոլորը ենթակառուցվածքները տեղաբաշխված են Արփա և Որոտան գետերի ջրահավաք ավազանում, Կեչուտ և Սպանդարյան ջրամբարների մոտակայքում, որոնք մտնում եմ Սևանա լճի ավազանի մեջ[194]: Հանքավայրի շահագործման արդյունքում Որոտան-Արփա թունել կարող են լցվել թունավոր մետաղների միացություններով հագեցած ջրեր, որոնք Կեչուտի ջրամբարի, Արփա-Սևան թունելի միջոցով կհոսեն Սևանա լիճ՝ վտանգելով խմելու ջրի տարածաշրջանային կարևոր պաշարները: Հանքավայրի շահագործումը կվտանգի նաև դրանից 8 կմ հեռավորության վրա գտնվող Ջերմուկ առողջարանային քաղաքի գոյությունը:

---

[188] ՀՀ արդարադատության նախարարի 2020թ. փետրվարի 5-ի «Իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը հաստատելու մասին» N36 հրաման, https://www.eiti.am/hy/Նորություններ/2020/02/11/BO-register/81:

[189] «Հայաստանի մետաղական հանքերը շահագործող ընկերությունների իրական սեփականատերերը. մաս 2՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ», ԷկոԼուր, 11 մայիսի 2020թ., https://www.ecolur.org/hy/news/amulsar/--2--/12380:

[190] Glenn Ellis, "Mining vs the environment: The battle over Armenia's Amulsar gold mine: Why are Armenians fighting over the controversial Amulsar gold mining project and how does it affect the country's new government?", Al Jazeera, 31 January 2019, https://www.aljazeera.com/blogs/europe/2019/01/mining-environment-battle-armenia-amulsar-gold-190130135537637.html:

[191] Էդիկ Բաղդասարյան, «Ո՞վ է շահագործել Մղարթի ոսկու հանքը», Հետք, 2 ապրիլի 2008թ., https://www.ecolur.org/hy/news/mining/-/69 և Քրիստինե Աղալարյան, «Հայկական ոսկու գինը. Աղքատ համայնքներ և լքված պոչամբարներ», Հետք, 19 հունիսի 2019թ., https://hetq.am/hy/article/104582:

[192] Ռուզաննա Ստեփանյան, «Ամուլսարի հարցում «մենք ժողովրդի կողքին ենք լինելու». Ծառուկյան», Ազատություն ռադիոկայան, 9 սեպտեմբերի 2019թ., https://www.azatutyun.am/a/30154277.html:

[193] Հայկական բնապահպանական ճակատ, «Ինչո՞ւ չի կարելի շահագործել Ամուլսարը», Ազատություն ռադիոկայան, 7 նոյեմբերի 2014թ., https://www.armecofront.net/lrahos/inchu-chi-kareli-shahagorcel-amulsary:

[194] «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, ընդունվել է 2001թ. մայիսի 15-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=891:

2020թ.-ի հունվարին Տորոնտոյի ֆոնդային բորսան հայտարարեց փետրվարի 5-ից «Լիդիան Ինթերնեյշնլ»-ի բաժնետոմսերը բորսայի ցուցակից հանելու մասին[195]:

4.2.4.3 «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ»

«**ԳեոՊրոՄայնինգ Գոլդ**» ՍՊԸ-ն հանքարդյունաբերական ընկերություն է, որը գործունեություն է ծավալում Ռուսաստանում և Հայաստանում: «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ»-ին է պատկանում Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ»-ը շահագործում է Սոթքի հանքավայրը: «Հետք»-ի 2017թ.-ի հետաքննության համաձայն, «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն Հայաստանում գրանցված ընկերություն է, որի բաժնետերը Նիդերլանդներում գրանցված «Դիեզե Բի. Վի» ընկերությունն է, որի ճյուղերն անցնում են Կիպրոսով, բրիտանական Վիրջինյան կղզիներով և հասնում են Ռուսաստանի Դաշնություն[196]: «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի 31.5 տոկոսի սեփականատերը Sberbank Kapital Ltd-ն է: «Հետք» հետաքննող լրագրողների կարծիքով, այս ընկերության անվանումը հուշում է, որ այն ռուսական «Սբերբանկ»-ի դուստրն է: «Սբերբանկում» «50 տոկոս + մեկ» ձայնի իրավունքը պատկանում է Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկին:

2010թ.-ին Վերահսկիչ պալատը կառավարությանն առաջարկել էր քննարկել ընկերության հանքային իրավունքների դադարեցման հարցը, քանի որ ընկերությունը 2004թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2008թ.-ի փետրվարի 29-ը Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրերը շահագործել է առանց ուժի մեջ մտած լիցենզիայի առկայության, սակայն ոչինչ տեղի չունեցավ: Ո՛չ ՀՀ կառավարությունը և ո՛չ էլ դատախազությունը միջոցներ չձեռնարկեցին այդ ուղղությամբ[197]:

4.2.4.4 «Չաարատ գոլդ հոլդինգ»

2016թ.-ին ռուսական «Պոլիմետալ Ինթերնեշնլ»-ը (Polymetal International plc) կանադական «Դանդի Փրեշս Մեթալս»-ից (Dundee Precious Metals) ձեռք բերեց Կապանի ոսկու հանքը: 2019թ.-ի հունվարին «Պոլիմետալ Ինթերնեշնլ»-ը Կապանի ոսկու հանքը 55 միլիոն ԱՄՆ դոլարով վաճառեց **«Չաարատ գոլդ հոլդինգ»** ընկերությանը (“Chaarat Gold Holding” Limited). «Չաարատ գոլդ հոլդինգ»-ը գրանցված է Բրիտանական Վիրջինյան կղզիներում[198]: Ըստ ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Վոլինեցի, «Այս ձեռքբերումը «Չաարատի» պորտֆելի հիանալի համալրում է և կխթանի մեր ռազմավարական նպատակը՝ կառուցել ոսկի արդյունահանող առաջատար, զարգացող ընկերություն»[199]:

---

[195] TSX Delisting Review – Lydian International Limited (LYD), 7 January 2020 https://www.tsx.com/news/reviews-and-suspensions?id=584&fbclid=IwAR28Mt3mmLj-V21cWP4vPKrYS7zxg45wTpOeausXopKnAywVm9EBcJMUjpo:

[196] Քրիստինե Աղալարյան, «Հայկական ոսկու տերերը. Երեք օֆշորների և Ռուսաստանի արանքում», Հետք, 29 հունիսի 2017թ., https://hetq.am/hy/article/80135:

[197] Էդիկ Բաղդասարյան, «Վերահսկիչ պալատն առաջարկում է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ»-ին զրկել լիցենզիայից», Հետք, 5 նոյեմբերի 2010թ., https://hetq.am/hy/article/48403:

[198] Մարինե Մարտիրոսյան, «Կապանի լեռնահարստացման կոմբինատը 55 միլիոն դոլարով վաճառվել է օֆշորային ընկերության», 31 հոկտեմբերի 2018թ., https://hetq.am/hy/article/97681:

[199] “Chaarat Gold Buys Polymetal's Kapan Mine In Armenia For USD55 Million”, Morning Star, 30 October 2018, https://www.morningstar.co.uk/uk/news/AN_1540888936925687400/chaarat-gold-buys-polymetals-kapan-mine-in-armenia-for-usd55-million.aspx:

4.2.4.5 Թեղուտ

Թեղուտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքի ստացման փուլում դրա բաժնետոմսերի 81 տոկոսը պատկանում էր Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վալերի Մեժլումյանին, իսկ 19 տոկոսը՝ «Վալլեքս» ՓԲԸ-ին, որը գրանցված է օֆշորային գոտում: Ինչպես արդեն նշվել է, վարկային պարտավորությունների չկատարման պատճառով 2018թ.-ին Թեղուտի հանքը փոխանցվել է «ՎՏԲ-Հայաստան բանկին»:

4.2.5 Տրանսպորտ

Տրանսպորտային ենթակառուցվածքներից գլխավորն են երկաթուղին և օդային փոխադրամիջոցները:

4.2.5.1 «Հարավկովկասյան երկաթուղի»

2008թ.-ից ի վեր Հայաստանի երկաթուղային համակարգը կառավարում է **«Հարավկովկասյան երկաթուղի»** ՓԲԸ-ն, որն ստեղծվել է «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի կողմից: «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ն 57 միլիոն ԱՄՆ դոլարի երաշխիք էր տրամադրել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի պարտավորությունների դիմաց:

Ըստ կոնցեսիոն համաձայնագրի, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն հաշվեկշռային արժեքով ձեռք է բերել երկաթուղու շարժակազմը (վագոնները)[200]: ՀՀ կառավարությունը պարտավորություն է ստանձնել 2009-2038թթ.-ի ընթացքում սուբսիդավորել (մասնակի փոխհատուցել) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների տարեկան վնասը: Դրա համար կոնցեսիոները պետք է ներկայացներ անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկները: Տարեկան սուբսիդիայի գումարը չի կարող գերազանցել կամ հավասար լինել տվյալ տարվա համար հայտարարագրված կոնցեսիոն փոփոխական տարեկան վճարի գումարին: Կոնցեսիոն վճարը սահմանվել է կոնցեսիոների համախառն հասույթի երկու տոկոսի չափով:

Ըստ «Հետքի» հետաքննության, առանձին տարիների սուբսիդիայի գումարի մեծությունը գերազանցել է կոնցեսիոն վճարի մեծությունը (Աղյուսակ 4)[201]: Համաձայն կոնցեսիոն համաձայնագրի, սուբսիդիան ենթակա էր վճարման մինչև մայիսի 1-ը կոնցեսիոների կողմից անկախ աուդիտորի կողմից վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Սակայն տարիների ընթացքում ՀՀ կառավարությունը չի ներկայացրել որևէ վկայություն, որ ստացել է աուդիտի ենթարկված վնասների հաստատված հաշվարկներ:

---

[200] ՀՀ կառավարության 2008թ. փետրվարի 7-ի «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին կոնցեսիոն պայմանագրի նախագծին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին լիազորություն վերապահելու մասին» N83-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=42065:

[201] Հովհաննես Ավետիսյան, «Հայկական երկաթուղին. Հարկատուների հաշվին հատուցվող վնասներ և քրեական գործ», Հետք, 27 մայիսի 2019թ., https://hetq.am/hy/article/104059:

Աղյուսակ 4. «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հիմնական ֆինանսական ցուցանիշները (մլն ՀՀ դրամ)

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Հասույթ*	10,337	10,188	11,258	13,492	15,009	15,404	15,082	13,346	13,726	14,536	15,433
ԱԱՀ	2,067	2,038	2,252	2,698	3,002	3,081	3,016	2,669	2,745	2,907	3,087
Կոնցեսիոն վճար											
ՏՀՆ**		248	245	270	324	360	370	362	320	329	349
ՏՀՆ ***		141	251	280	329	362	352	344	313	302	347
ՖՆ****		141	80	280	329	362	351	344	313	302	347
Սուբսիդիա				167	155	329	497	535	313	302	347

Աղբյուր. Հետք. https://hetq.am/hy/article/104059, ՀՀ ֆինանսների նախարարություն
Ծանոթություն.
** Բեռնափոխադրումներից հասույթ*
*** ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության տրամադրած տվյալների հիման վրա հաշվարկված կոնցեսիոն վճար*
**** Կոնցեսիոն վճարն ըստ ՀՀ տրանսպորտի և հեռահաղորդակցության նախարարության*
**** Կոնցեսիոն վճարն ըստ ՀՀ ֆինանսների նախարարության*

2014թ.-ին ՀՀ կառավարությունն ինքն էր գումար հատկացրել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ում աուդիտի իրականացման համար[202]: Կոնցեսիոն համաձայնագիրը չէր նշում, որ աուդիտի համար պետք է վճարի ՀՀ կառավարությունը:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի գործունեությունը թափանցիկ չէր և 2018թ.-ին քննության առարկա դարձավ: ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված՝ 2009-2018թթ.-ի ընթացքում «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից կատարված վճարները մոտավորապես հավասար էին տարեկան 327 միլիոն ՀՀ դրամի: 2014-2015թթ.-ին ՀՀ պետական բյուջեից փոխանցված սուբսիդիան 336 միլիոն ՀՀ դրամով գերազանցել է կոնցեսիոն վճարի մեծությունը, այն դեպքում, երբ սուբսիդիայի գումարը պետք է սահմանափակված լիներ դրանով:

4.2.5.2 Հայկական ավիաուղիներ

Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանը չունի արտաքին աշխարհի հետ կայուն և հուսալի կապ ապահովող տեղական ավիաընկերություն: Արտաքին աշխարհի հետ օդային կանոնավոր կապն ապահովում են ռուսական, ուկրաինական, լեհական, ավստրիական, ֆրանսիական, չեխական, ռումինական և այլ երկրների ավիաընկերությունները: Նախկինում համեմատաբար կայուն գործունեություն ծավալած երկու հայկական

[202] ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 21-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N414-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և հայաստանի հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N861-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=92269:

ավիաընկերությունները՝ «Հայկական ավիաուղիներ» և «Արմավիա» ընկերությունները սնանկ են ճանաչվել համապատասխանաբար 2004 և 2014 թվականներին[203]:

«Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ն պետական ընկերություն էր, որը ստեղծվել էր 1991թ.[204]: Մինչև 1997թ.-ը այն շահույթով աշխատող ընկերություն էր: Արդեն 1998թ.-ին ՀՀ կառավարությունը սկսեց մասնավորեցման նախապատրաստական աշխատանքները[205]:

1998թ.-ի հուլիսին վարձակալված «Airbus A310-222»-ի ապահերմետիզացիայի և շարժիչների խափանումների միջադեպերը (մինչև այդ վարձակալական պայմանագրի ավարտը՝ 2002թ.-ի մարտ ամիսը) մեծ ֆինանսական վնասների պատճառ դարձան: 2000թ.-ին ՀՀ կառավարությունը բյուջետային վարկ տրամադրեց «Հայկական ավիաուղիներ»-ին, սակայն այն չբարելավեց իրավիճակը[206]: ՀՀ կառավարությունը ծրագրում էր 2001թ.-ի մայիսին հայտարարել «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի մասնավորեցման մասին[207]: Սակայն վերը նշված միջոցառումները հաջողություն չբերեցին: 2002թ.-ին ՀՀ կառավարությունը փորձեց կարգավորել պետական երկու ՓԲԸ-ների՝ «Հայկական ավիաուղիներ» և «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ընկերությունների միջև պարտքերի հարցը, սակայն ապարդյուն[208]:

2003թ.-ին ՀՀ կառավարության որոշ գործողություններ բարենպաստ չէին «Հայկական ավիաուղիներ»-ի համար: 2003թ.-ին «Հայկական ավիաուղիներ»-ից անջատվեց նրա շահութաբեր ստորաբաժանումներից մեկը՝ «Ավիասնունդ» ՓԲԸ-ն, և ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվեց Գագիկ Ծառուկյանին պատկանող «Մուլտի էյր» ՍՊԸ-ին[209]:

Հարկ է արձանագրել, որ սնանկ ճանաչվելուց որոշ ժամանակ առաջ Երևանի կառուցապատման նախապատրաստվող Դալմայի այգիների առանձին տարածքներ առանց մրցույթի տրամադրվեցին մի շարք ընկերությունների, այդ թվում՝ «Հայկական ավիաուղիներ»-ին[210]:

---

[203] Վահե Սարուխանյան, «Սնանկության հայկական բանաձևը», Հետք, 20 հունվարի 2016թ., https://hetq.am/hy/article/65128:

[204] ՀՀ նախարարների խորհրդի 1991թ. հոկտեմբերի 29-ի «ԽՍՀՄ քաղաքացիական ավիացիայի նախարարության «Հայկական ավիաուղիներ» ավիաընկերությունը Հայաստանի պետական ավիաընկերության վերակազմավորելու մասին» N623 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=5062:

[205] ՀՀ կառավարության 1998թ. փետրվարի 23-ի ««Հայկական ավիաուղիներ» պետական փակ բաժնետիրական ընկերության մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների մասին» N102 որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=3994:

[206] ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության «Հայկական ավիաուղիներ» պետական փակ բաժնետիրական ընկերությանը բյուջետային վարկ տրամադրելու մասին» N603 որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=11206:

[207] ՀՀ կառավարության 2001թ. մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N167 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=43538:

[208] ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 19-ի ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության և «Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերության միջև առևտրային գործարքներից առաջացած պարտքերի դուրսգրման կարգը հաստատելու մասին» N2053-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122832:

[209] ՀՀ կառավարության պաշտոնական լրահոս, 27 մարտի 2003թ., https://www.gov.am/am/news/item/729, ՀՀ կառավարության 2003թ. հոկտեմբերի 30-ի ««Ավիասնունդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» N1407-Ա որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=22804:

[210] Ատոմ Մարգարյան, «Դալմայի այգիներում պայմանագրով հողատարածքներ ունեցողների պայմանագրերը կերկարաձգվեն», Ազատություն ռադիոկայան, 21 հոկտեմբերի 2004թ., https://www.azatutyun.am/a/1574657.html, «Ոչնչանում են Դալմայի այգիները», A1պլյուս, 9 փետրվարի 2004թ., https://a1plus.am/hy/article/4830:

2003թ.-ին ՀՀ կառավարությունը «Հայկական ավիաուղիներ»-ի և «Էրեբունի» օդանավակայանի գույքն օտարեց ՀՀ պաշտպանության նախարարությանը[211]:

2002-2003թթ.-ին զուգահեռաբար սկսեց թափ հավաքել Վերսանդիկ և Հրայր Հակոբյանների, Լևոն Բաղդասարյանի և Գագիկ Ծառուկյանի հիմնադրած «Հայկական միջազգային ավիաուղիներ»-ը և Միխայիլ Բաղդասարովի և ռուսական «Սիբիր» ավիաուղիների համատեղ «Արմավիա» ավիաընկերությունը[212]: 2004թ.-ի մարտի 26-ին «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ն սնանկ ճանաչվեց «Երևանի «Զվարթնոց» օդանավակայան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա: Սնանկ ճանաչված «Հայկական ավիաուղիներ»-ի գույքի մի մասը երկար տարիներ չի հաջողվել իրացնել, և դեռ 2016թ.-ի սեպտեմբերին www.azdarar.am հարթակում հայտարարություն էր հրապարակվել Սևան քաղաքում 11.7 հեկտար հողատարածքը աճուրդային եղանակով վաճառելու վերաբերյալ[213]:

«Հայկական ավիաուղիներ»-ի աղետալի վիճակը վատ կառավարման հետևանք էր[214]: Չի բացառվում, որ մինչ 1997թ.-ը շահութաբեր «Հայկական ավիաուղիներ»-ի սնանկացումը պետական կառույցների կողմից կանխամտածված գործողություն էր՝ այդ շահութաբեր բիզնեսի ֆինանսական արդյունքները սեփականը դարձնելու ձգտումով: Մասնագետների կարծիքով, 1998թ.-ից սկսած «Հայկական ավիաուղիներ»-ը սկսեցին մտածված կործանման տանել մի քանի «գործարարների» համար կանաչ ճանապարհ բացելու նպատակով[215]: ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության նախկին պետ Շահեն Պետրոսյանը 2013թ.-ին հայտարարում էր. «10 մլն դոլար ապահովող ընկերությունը, որի ուղևորների և բեռների թիվն ավելանում է տարեցտարի, կամային ձևով տրվում է այսինչ անձնավորությանը («особо приближенный к его императорскому величеству»)... Դրա համար պետք էր Հայկական ավիաուղիները սնանկացնել, որպեսզի մեկ ուրիշը գա և տիրանա դրան: Խնդիրը սա է, և քանի որ նորմալ մենեջմենթ չի իրականացվել, պարզ էր, որ պետք է սնանկանար»[216]:

Սնանկացման արդյունքում Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապող ավիափոխադրումների շուկայի մի զգալի հատվածը երկար ժամանակ հայտնվեց ռուսական ընկերությունների ազդեցության ներքո, որոնք Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող հիմնական ծառայությունն էին մատուցում: Միայն վերջին տարիներին, Հայաստանի ուղևորատար ավիափոխադրումների շուկա Արևելյան Եվրոպայի որոշ ավիաընկերությունների մուտք գործելուց հետո, հնարավոր եղավ դիվերսիֆիկացնել սպառողներին ծառայություններ մատուցող ընկերությունների շրջանակը:

---

[211] ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի ««Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերության բյուջետային վարկի պարտքի դիմաց գույք ընդունելու մասին» N1726-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=47448:

[212] Վահե Սարուխանյան, «Սնանկության հայկական բանաձևը», Հետք, 20 հունվարի 2016թ., https://hetq.am/hy/article/65128:

[213] «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ աճուրդի կազմակերպման և անցկացման մասին», 26 սեպտեմբերի 2016թ., https://www.azdarar.am/announcments/cat/46/00204364:

[214] Կարինե Քալանթարյան, «Հայկական ավիաուղիներ»-ը կարող է շուտով սնանկ ճանաչվել», Ազատություն ռադիոկայան, 21 օգոստոսի 2002թ., https://www.azatutyun.am/a/1570027.html:

[215] Վահե Սարուխանյան, «Սնանկության հայկական բանաձևը», 20 հունվարի 2016թ., https://hetq.am/hy/article/65128 և «Հայկական ավիաուղիներ»-ի հնարավոր սնանկացման և հնարավոր սեփականաշնորհման մասին», Առավոտ, 10 հուլիսի 1998թ., https://www.aravot.am/1998/07/10/783042:

[216] Արամ Սարգսյան, «Շահեն Պետրոսյան. Պետք էր Հայկական ավիաուղիները սնանկացնել, որպեսզի մեկ ուրիշը գա և տիրանա դրան», 10 ապրիլի 2013թ., https://168.am/2013/04/10/208436.html:

4.2.6 Արդյունաբերական ձեռնարկություններ

Հայկական խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունները ռուսական ընկերությունների սեփականություն են:

«Ռուսալ Արմենալ» ՓԲԸ-ն հանդիսանում է ռուսաստանցի գործարար Օլեգ Դերիպասկային պատկանող ընկերության սեփականությունը:

«Մարս» ՓԲԸ-ն գործարանը հիմնվել է 1988թ. եվրոպական առաջատար ընկերությունների մասնակցությամբ և հագեցած էր այն ժամանակ ամերիկյան և եվրոպական ընկերությունների մատակարարած սարքավորումներով: Այն Ռուսաստանի Դաշնությանն է փոխանցվել «գույք՝ պարտքի դիմաց» գործարքի շրջանակներում և վերանվանվել է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ:

4.2.7 Կրթական և գիտահետազոտական հաստատություններ

Ռուսաստանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Հայաստանի գիտական և կրթական համակարգի հանդեպ:

«Գույք՝ պարտքի դիմաց» գործարքի շրջանակներում 2002թ.-ին Ռուսաստանին փոխանցված 5 ձեռնարկություններից 3-ը գիտահետազոտական ինստիտուտներ էին (ՓԲԸ-ներ). **«Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ»**, **«Երևանի նյութագիտության գիտահետազոտական ինստիտուտ»** և **«Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտ»**:

Կենսաբանական անվտանգության համագործակցության շրջանակներում ԱՄՆ ֆինանսավորել է ՀՀ կենսաբանական լաբորատորիաների վերազինումը և հայտարարել, որ խնդիր չի տեսնում, որ այդ լաբորատորիաներ մուտք գործեն ՌԴ պետական մարմինների ներկայացուցիչներ ու մասնագետներ: Ըստ ամերիկյան կողմի, դրանք հայկական լաբորատորիաներ են, վերահսկվում են ՀՀ իշխանությունների կողմից, որտեղ աշխատում են հայ մասնագետներ[217]:

Հայ-սլավոնական համալսարանը Հայաստանի առաջատար համալսարաններից մեկն է: Միաժամանակ, գործում են Ֆրանսիական համալսարանը և Հայաստանի ամերիկյան համալսարանը, որոնք լուրջ մրցակցություն են ստեղծել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում:

[217] Արշալույս Մղդեսյան, «ԱՄՆ-ը դեմ չէ, որ ռուս փորձագետները մուտք ունենան լաբորատորիաներ. Դեսպան Թրեյսի», Սիվիլնեթ, 14 նոյեմբերի, 2019թ., https://www.civilnet.am/news/2019/11/14/ԱՄՆ-ը-դեմ-չէ-որ-ռուս-փորձագետները-մուտք-ունենան-լաբորատորիաներ.-դեսպան-Թրեյսի/370579:

4.2.8 Տուրիստական ընկերություններ

Տուրիզմը վեր է ածվում Հայաստանի տնտեսության կարևոր ճյուղերից մեկը: Առավել մեծամասշտաբ են Ռուսաստանի քաղաքացիների այցելությունները, քանի որ նրանք կարող են ճամփորդել Հայաստան ներքին փաստաթղթերով: 2019թ.-ի առաջին կիսամյակում Հայաստանի սահմանը հատած անձանց ամենամեծ՝ 27.8 տոկոսն ունեցել է Ռուսաստանի քաղաքացիություն[218]:

Հայաստանի տուրիստական գործակալությունների մեծ մասը վաճառում են ռուսական գործակալությունների կողմից (օրինակ՝ Տեզ տուր) առաջարկվող այլ երկրների տուրիստական փաթեթներ: Այս ոլորտում ռուսական կապիտալի դերի մասին հրապարակային տեղեկատվություն առկա չէ: Ռուսական առաջատար ավիաընկերությունների ներկայացուցչությունները հայաստանյան 1000 խոշոր հարկատուների թվում են:

4.2.9 Սպորտ

Սպորտում, մասնավորապես՝ ֆուտբոլում, վերջին տարիներին ներդրումներ են կատարում հայկական ծագում ունեցող Ռուսաստանի քաղաքացիները: Այսպես՝ **Ֆյունիկ**[219] և **Ուրարտու**[220] ֆուտբոլային ակումբները պատկանում են ծագումով հայ ռուսաստանցիների:

4.2.10 Տեղեկատվական դաշտ

Ռուսական հիմնական հանրային հեռուստաալիքները՝ **Ռուսաստանի հանրային հեռուստաընկերությունը (ՕՐԹ)** և **«Россия»**-ն ազատ հեռարձակվում են Հայաստանում:

Հայաստանում ազատ սփռվում են նաև ամերիկյան **CNN** հեռուստաընկերության հաղորդումները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի բնակչության ավագ սերունդը չի տիրապետում կամ լավ չի տիրապետում անգլերենին, CNN-ի կողմից տարածվող լուրերն ընկալելի են միայն նոր սերնդի մի մասի համար:

---

[218] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, «Հետարքրքրաշարժ վիճակագրություն», Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-հունիսին, https://www.armstat.am/file/article/sv_06_19a_6200.pdf:

[219] 2017թ. Արթուր Սողոմոնյանը հայտարարեց «Ֆյունիկ» ֆուտբոլային ակումբը ձեռք բերելու մասին, https://fcpyunik.am/hy/person/180: Սողոմոնյանը ռուսական «ФомЛайн» (ֆոմլայն) ընկերության հիմնական սեփականատերն է:

[220] Ձևան Չելոյանցը՝ http://whoiswho.dp.ru/cart/person/1933319 և https://neftegaz.ru/persons/332717-cheloyants-dzhevan, «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի սեփականատերն է, http://www.fcurartu.am/am/club-owner: 1993-2011թթ. Չելոյանցը Լուկոյլի փոխնախագահն էր: Նախկինում նա եղել է «Բանանց» ֆուտբոլային ակումբի համասեփականատեր: Մինչև 2015թ. նոյեմբեր Չելոյանցը Մոսկվայի «Սպարտակ» ֆուտբոլային ակումբի բաժնետերն ու տնօրենների խորհրդի անդամ էր:

Որոշ ռուսական (НТВ, Звезда, СТС, ТНТ, Охота и рыбалка, այլ) և արևմտյան հեռուստաալիքները (Animal Planet, National Geographic, TLC, Discovery, History, այլ) ռուսերեն թարգմանությամբ Հայաստանում հեռարձակվում են մասնավոր կաբելային ընկերությունների միջոցով:

5 ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում վերլուծության են ենթարկվել վերը նկարագրված մասնավորեցման և ներդրումների գործընթացներում բացահայտված՝ պետական կառավարմանն առնչվող համակարգային խնդիրները: Ներկայացվել են իրավասու պետական մարմինների գործունեությանն առնչվող հիմնահարցերը՝ դրանց լիազորությունների և պարտականությունների լույսի ներքո: Առանձին ներկայացվել է Հայաստանի տնտեսության մեջ գլխավոր դերակատարում ունեցող երկրի՝ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցությունը:

5.1 Պետական կառավարման համակարգի բացերը

Հայաստանի Հանրապետությունում հանրային գույքի մասնավորեցման և կառավարման պատմություններում ակնհայտ է կառավարման պրակտիկայի ընդհանուր միտումը, փիլիսոփայությունը և առկա բազմաթիվ խնդիրների աղբյուրը: Պարբերաբար կեղծվող ընտրությունների[221] և քաղաքական հակառակորդների հետապնդումների[222] միջոցով իշխանությունը զավթած անձանց խումբը ավտորիտար կառավարման միջոցով աստիճանաբար իրականացրել է նաև «պետության զավթում»՝ հանրային ինստիտուտները ծառայեցնելով մասնավոր շահի ու հարստություն կուտակելուն, սեփական իշխանությունը պահպանելուն ու պարբերաբար վերարտադրելուն: Հայաստանում ավտորիտար ռեժիմի տարիները մշտապես լի են եղել քաղաքական ու քաղաքացիական ընդվզումներով, ներառյալ՝ համարյա բոլոր նախագահական ու խորհրդարանական ընտրություններին հաջորդող բողոքի ցույցերը: Ընդվզման միտումները սաստկացել, ընդլայնվել և ներգրավել են հասարակության առավել լայն շրջանակներ հատկապես 2008 թվականի մարտի 1-2-ի դեպքերից հետո: Դրա օրինակ էին առավել հայտնի Թեղուտի պաշտպանության[223], «Մենք

[221] Organization for Security and Cooperation in Europe (OSCE) Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), "Republic of Armenia: Presidential Election: 16 and 30 March 1998: Final Report. 9 April 1998", https://www.osce.org/files/f/documents/0/a/14192.pdf, OSCE ODIHR, "Republic of Armenia: Presidential Election: 19 February and 5 March 2003: Final Report. 28 April 2003", https://www.osce.org/files/f/documents/8/7/14054.pdf, OSCE ODIHR "Republic of Armenia: Parliamentary Elections: 25 May 2003: Final Report. 31 July 2003", https://www.osce.org/files/f/documents/1/2/42370.pdf, OSCE ODIHR "Republic of Armenia: Parliamentary Elections: 19 February 2008: Final Report. 30 May 2008", https://www.osce.org/files/f/documents/5/b/32114.pdf:

[222] Parliamentary Assembly of the Council of Europe (PACE), The implementation by Armenia of Assembly Resolutions 1609 (2008) and 1620 (2008), 18 December 2008, http://assembly.coe.int/nw/xml/News/FeaturesManager-View-EN.asp?ID=831, OSCE ODIHR "Continued Political Repression and Persecution in Armenia", HDIM.NGO/491/08, 9 October 2008, https://www.osce.org/odihr/34352?download=true:

[223] Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն, «Թեղուտ օրենքից դուրս. Մաս 1», 16 հուլիսի 2015թ, https://www.youtube.com/watch?v=66Ztk2M6WTQ:

ենք այս քաղաքի տերը»[224], «Վճարում ենք 100 դրամ»[225] և «Էլեկտրիկ Երևան»[226] քաղաքացիական նախաձեռնությունները, ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի զինված գրավումը[227], իսկ սոցիալական շարժումների գագաթնակետը դարձավ 2018 թվականի գարնանը տեղի ունեցած ժողովրդական հեղափոխությունը՝ ի վերջո հանգեցնելով ռեժիմի հեռանալուն:

Թափանցիկություն

Ընդհանուր առմամբ, 1991թ.-ից ի վեր իրականացվող՝ խորհրդային անցյալից ժառանգություն ստացած գույքի մասնավորեցման գործընթացներում Հայաստանի կառավարությունները դրսևորել են ոչ թափանցիկ և ոչ հաշվետու գործելաոճ, ինչը, հատկապես խնդրահարույց է եղել երկրի տնտեսության համար առավել կարևոր գույքի ու զգայուն միավորների մասնավորեցման պարագայում: Սրա օրինակ են Սևան-Հրազդան կասկադի, գազատրանսպորտային ցանցի, այլ ակտիվների մասնավորեցումը, ընդ որում՝ դրանց առնչվող քողարկված ու մութ գործարքները և ոչ բավարար հրապարակայնությունը փորձագիտական հանրությանը թույլ չեն տվել գնահատել փոխանցվող ակտիվների իրական շուկայական արժեքը կամ Ռուսաստանից ստացած էներգետիկ ռեսուրսների ծավալը (գազը՝ խորանարդ մետրերով, և այլ ռեսուրսները):

Հարկ է նշել, որ նույնիսկ ներկայում, արդեն 2018 թվականի հեղափոխությունից հետո, գույքի առքուվաճառքի վերաբերյալ պատշաճ տեղեկություններ չեն տրամադրվում հանրությանը: Այսպես, օրինակ, Որոտան կասկադի վաճառքի մասին ՀՀ կառավարության 2013թ. №1496-Ա որոշման հավելվածը www.arlis.am և www.e-gov.am կայքերում հասանելի չէ: www.e-gov.am կայքն առաջարկում է «Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն»[228]: Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի՝ ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի 1496-Ա որոշման հավելվածը տրամադրելու վերաբերյալ դիմումին 2020թ.-ի հունվարի 21-ին ՀՀ վարչապետի աշխատակազմը պատասխանել է, որ «պահանջվող տեղեկատվությունն ունի գաղտնիության դրոշմագիր, հետևաբար այն չի կարող տրամադրվել»: Պետք է արձանագրել, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը սահմանում է պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկությունները, սակայն պետական գույքի մասնավորեցման կամ օտարման մասին պայմանագրերը և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը դրանց թվին չեն դասվում[229]:

---

[224] Մենք ենք այս քաղաքի տերը նախաձեռնություն, «Մաշտոցի պուրակ» էջ, https://www.facebook.com/mashtots.park, վերջին թարմացում՝ 27 մայիսի 2014թ.:

[225] «Վճարում ենք 100 դրամ» նախաձեռնություն, Մամուլի ասուլիս, 22 հոկտեմբերի 2013թ., Իլուր, https://www.youtube.com/watch?v=a6xF6YP0BdY:

[226] «Էլեկտրիկ Երևան. Մեկ տարի անց», Սիվիլնեթ, 23 հունիսի 2016թ., https://www.civilnet.am/news/2016/06/23/Էլեկտրիկ-երևան-մեկ-տարի-անց/295547:

[227] ««ՊՊԾ գնդի գրավումը». Ֆիլմ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ», Պարա TV, 17 հուլիսի 2017թ., https://www.youtube.com/watch?v=nGpoKeaqSNY:

[228] ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 21-ի ««Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության գույքի առուվաճառքի պայմանագրին հավանություն տալու մասին» N1496-Ա որոշման հավելվածի մասին նշվում է https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2013/11/%D5%B4%D5%A1%D6%801496.pdf էջում:

[229] Հայաստանի Հանրապետության օրենքը «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին», ընդունված 1996թ.-ի դեկտեմբերի 3-ին, https://www.arlis.am/documentView.aspx?docid=26193:

Սովորաբար, ՀՀ կառավարության www.e-draft.am ինտերնետային կայքի կառավարության նիստի օրակարգ բաժնում ներկայացվում են տվյալ օրը կառավարության նիստի քննարկման առարկա հանդիսացող որոշումների նախագծերը և դրանց հիմնավորումները: Սակայն ՀՀ կառավարության 2013թ.-ի նոյեմբերի 28-ի նիստի օրակարգում, որում ՀՀ կառավարությունը իր №1349-Ա որոշմամբ, հավանություն է տվել[230] Ռուսաստանի Դաշնության կառավարության հետ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի վերաբերյալ համաձայնագրին[231], այդպիսի որոշման նախագիծ առկա չէ, դրա հիմնավորումները և նախարարությունների ու գերատեսչությունների դիտողությունների ու առաջարկությունների ամփոփաթերթը ներկայացված չեն: Այդ որոշման մասին չի հիշատակում նաև ՀՀ կառավարության պաշտոնական լրահոսը[232]:

Առհասարակ, անհասկանալի է, թե ինչպես է թարմացվում և փոփոխվում իրավական ակտերի շտեմարանը և որքանով են արձանագրվում մուտք գործող պատասխանատուների և նրանց գործողությունների վերաբերյալ տվյալները՝ հաշվի առնելով, որ մասամբ նրանց է վստահված Հայաստանի նորագույն պատմության արձանագրման պատասխանատվությունը[233]:

Ընդհանուր առմամբ, ներդրողների վերաբերյալ տեղեկատվությունը բավականաչափ թափանցիկ չի: Եթե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ՝ ՍՊԸ) հիմնադիրների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է www.e-register.am-ում՝ գոնե վճարովի կամ անվճար՝ լրագրողների համար, փակ բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ ՓԲԸ) սեփականատերերի մասին տեղեկատվությունը, որը պահվում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում, օրենքով հասանելի չէ[234]: Հայաստանում ներդրումներ կատարող ընկերություններից շատերը գրանցված են Լյուքսեմբուրգում, Կիպրոսում, Վիրգինյան կղզիներում և այլ օֆշորային գոտիներում, ուստիև դրանց իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է: Ի դեպ, հարկ է նկատել, որ, ըստ հետազոտության արդյունքների, օֆշորային գոտիներից հոսող ներդրումների զգալի մասը կա՛մ ծագել է Ռուսաստանում, կա՛մ պատկանում է Հայաստանի նախկին իշխանությունների առանձին կոռումպացված ներկայացուցիչների:

---

[230] ՀՀ կառավարության 2013թ. նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «Հայռուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» N1349-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88231:

[231] ՀՀ կառավարության 2013թ.-ի նոյեմբերի 28-ի նիստի օրակարգ. https://www.e-gov.am/sessions_old/archive/2013/11/28: Նիստի օրակարգում նշվում է երկու հարց, որոնք վերաբերում են հայ ռուսական հարաբերություններին, սակայն դրանցից ոչ մեկը չի վերաբերում «Հայռուսգազարդ»-ին: Նիստի օրակարգի 23-րդ կետով ՀՀ կառավարության քննարկման էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Հայ-ռուսական համալսարանի գործունեության պայմանների մասին» կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին հարցը, իսկ նիստի օրակարգի լրացուցիչ 30-րդ հարցը վերաբերում էր 2013թ.-ի դեկտեմբերի 2-3-ը կայանալիք հայ-ռուսական 3-րդ միջտարածաշրջանային ֆորումի կազմակերպման նպատակով «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի արդյունաբերության զարգացման հիմնադրամից հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործելուն:

[232] ՀՀ կառավարության պաշտոնական լրահոս, 28 նոյեմբերի 2013թ., https://www.gov.am/am/news/item/10878:

[233] Արտակ Քյուրումյան, «Ով, ինչ իրավական ակտի համաձայն և ինչու է փոփոխություններ կատարում ՀՀ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում», Ասպարեզ, 9 հունվարի 2020թ., https://www.asparez.am/gov-shtemaran-hh-hy/#.XwbTIG0zaM8:

[234] Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, https://cda.am/am:

Ընդերքօգտագործման պարագայում՝ չնայած Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն անդամակցելն ու առնչվող պարտավորությունների իրականացումն էականորեն բարելավել են հանքարդյունաբերական ընկերությունների գործունեության թափանցիկությունը, դրանց բաժնետերերի վերաբերյալ տեղեկատվությունը, հաճախ՝ վերոնշյալ պատճառներով, բավարար հասանելի չէ[235]:

Թափանցիկ չեն խոշոր տնտեսվարողների և տնտեսական խմբավորումների ներկայացուցիչների հետ ՀՀ իշխանությունների, մասնավորապես, քաղաքական պաշտոնյաների հարաբերությունները և բանակցությունները:

Կառավարման որակ և արդյունավետություն

Մասնավորեցման մի շարք դեպքերում պետական մարմիններն ընդունել են ակնհայտորեն անարդյունավետ և անփույթ որոշումներ: Օրինակ՝ ՀԷՑ-ի և Հայխնայբանկի մասնավորեցման դեպքում ընկերությունները վաճառվել են տվյալ ոլորտում գործունեության փորձ չունեցող ընկերությունների: Որոտանի կասկադի վաճառքի դեպքում պայմանագրում թույլ է տրվել ակնհայտ սխալ, և կասկադի հետ միասին վաճառվել են ռազմավարական նշանակություն համարվող ջրամբարները: Հետագայում սխալն ուղղվել է, և ջրամբարները 99 տարով են հանձնվել «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին[236]:

Գազային համաձայնագրերի և դրա շուրջ բանակցությունների վերաբերյալ որևէ տեղեկատվության բացակայության պատճառով հնարավոր չէ պարզել, թե ինչու է, օրինակ, Գազպրոմին արտոնություն տրվել մինչև 2043թ. վերջը, այլ ոչ օրինակ 2023թ. վերջը, ինչը համահունչ կլիներ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» 1997թ. օգոստոսի 29-ի ստորագրված պայմանագրի հետ, որն ուժի մեջ է մտել 1998թ. նոյեմբերի 5-ին և գործում է 25 տարի ժամկետով: Ռուսաստանյան մենաշնորհատեր ընկերությանը Հայաստանի Հանրապետությունում նման երկար ժամկետով արտոնյալ կարգավիճակի տրամադրումը հակասում է հենց այդ համաձայնագրի նախաբանի այն ձևակերպմանը, որ էներգետիկ շուկաների և գազափոխադրման ենթակառուցվածքների զարգացումը կարևոր, իսկ գազամատակարարման հուսալիության ապահովումն անհրաժեշտ է: Պայմանագրի ձևակերպումները թույլ չեն տալիս զարգացման նպատակով համագործակցել որևէ երրորդ կողմի հետ, իսկ «գազամատակարարման հուսալիության ապահովման» գաղափարի տակ ռուսական կողմն ակնհայտորեն նկատի է ունեցել բուն մատակարարումը, մինչդեռ գազամատակարարման «հուսալիությունը» պետք է ենթադրի նաև երկարաժամկետ հեռանկարում գների կայունություն:

ՀՀ կառավարության ցածր արդյունավետության մասին է վկայում այն հանգամանքը, որ կառավարությունը «Հայռուսգազարդ»-ի կապիտալում իր վերջին 20 տոկոս

[235] Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության քաղաքացիական հասարակության խմբակցություն, «Առաջարկություններ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացում արձանագրված որոշ խնդիրների լուծման ուղղությամբ, 12 հունիսի 2020թ., https://transparency.am/files/publications/1592836076-0-588593.pdf?v=4:

[236] ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանի 2015թ. սեպտեմբերի 4-ի N01/19.1/4753-15 գրությունը «Չորրորդ իշխանություն» թերթի թղթակից Արման Գալոյանին:

բաժնետոմսերով վճարեց 80%-ով «Գազպրոմ»-ի սեփականություն հանդիսացող ընկերության պարտքը «Գազպրոմ»-ի սեփականությունը հանդիսացող մեկ այլ ընկերության հանդեպ:

Կառավարման ոչ պատշաճ որակի մեկ այլ վկայություն է պետական բաժնեմաս ունեցող «Հայռուսգազարդ»-ի («Գազպրոմ Արմենիա») ֆինանսական ցուցանիշները: Այսպես, 2005-2018թթ.-ի ընթացքում «Հայռուսգազարդ»-ի հասույթը քառապատկվել է (Պատկեր 5): Երկար տարիներ «Գազպրոմ»-ը գազը Հայաստանին է վաճառել ցածր գներով, սակայն Հայաստանի ներքին գները եղել են համեմատաբար բարձր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև 2014թ.-ը «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն վնասներ էր կրում կամ շատ փոքր շահույթ էր ունենում, կարել է եզրակացնել, որ գազի ներկրման ցածր և սպառողներին մատակարարվող համեմատաբար բարձր գնի տարբերությունն օգտագործվում էր անարդյունավետ կառավարման հետ կապված ծախսերը հատուցելու նպատակով:

Պատկեր 5. «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի շահույթը 2005-2018թթ.-ին (հետագայում «Գազպրոմ Արմենիա», մլրդ դրամ)



Աղբյուր. «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններ

Ինչպես երևում է պատկերից, 2014թ. սկսած «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համախառն շահույթը, հասույթի և վաճառքի ինքնարժեքի տարբերությունը շեշտակի կերպով ավելացել է: Եթե 2005-2013թթ.-ի ընթացքում ընկերությունն ունեցել է 31.9 մլրդ դրամի համախառն գումարային վնաս, ապա 2014-2018թթ.-ին ունեցել է 111.7 մլրդ դրամի համախառն գումարային շահույթ: Առանձին տարիներին համախառն շահույթի և շահույթի միջև զգալի տարբերությունը պայմանավորված է ընդհանուր և՛ վարչական, և՛ ֆինանսական ծախսերի մեծությամբ:

Հայաստանում հանրային ծառայությունների կարգավորման որակը մշտապես եղել է ոչ բավարար: Առանձին դեպքերում, ինչպես օրինակ ՁորաՀԷԿ-ից ձեռք բերվող էլեկտրաէներգիայի սակագների փոփոխության դեպքում, պետական կարգավորումները նպատակաուղղված են եղել առանձին տնտեսավարողների գործունեության համար ավելի բարենպաստ իրավիճակի ստեղծմանը: Պետական սեփականություն հանդիսացող էներգետիկ ընկերությունների (ՀԱԷԿ, Երևանի ՋԷԿ, Երևանի ՀՑԷ և ԲԷՑ) վատ կառավարումը և ՀԷՑ-ի կողմից իր մատակարարներին ունեցած հսկայական պարտքերը ևս վկայում են կառավարման ցածր որակի մասին:

Կառավարության անարդյունավետության մեկ այլ ցուցիչ է այն, որ էներգետիկ քաղաքականության հետ որևէ առնչություն չունեցող պետական մարմինները ներգրավված էին էներգետիկ ակտիվների հետ կատարվող գործարքներում: Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2006թ.-ին ներգրավված էր Հրազդանի 5-րդ էներգաբլոկը «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին վաճառելու գործարքում և առանձին ժամանակահատվածներում հանդիսացել է «Հեր-Հեր» և «ՁորաՀԷԿ» հիդրոէլեկտրակայանների սեփականատեր[237]:

Առհասարակ՝ ընդունված է համարել, որ պետությունը վատ տնտեսավարող է, և անհրաժեշտ է խթանել ազատ շուկայական հարաբերություններն ու տնտեսական մրցակցությունը: Սակայն առանձին պետական ընկերությունների ձախողումների ուսումնասիրության արդյունքում տպավորություն է ստեղծվում, որ այդ ձախողումները եղել են ծրագրավորված, ինչի արդյունքում նախկինում շահութաբեր գործունեություն ծավալող ընկերությունները, ինչպես, օրինակ, «Հայկական ավիաուղիները»՝ մինչև 1998թ., կա՛մ դուրս են մղվել շուկայից՝ տեղ բացելով տեղական մասնավոր ընկերությունների համար, կա՛մ վաճառվել են օտարերկրյա ներդրողների: Կոնկրետ «Հայկական ավիաուղիների» հետ կապված զարգացումները հանգեցրին նրան, որ Հայաստանը ներկայում չունի սեփական ավիաընկերություն, և, արդյունքում, եթե ճգնաժամային իրավիճակներում օտարերկրյա ավիաընկերությունները դադարեցնեն թռիչքները դեպի Հայաստան, երկիրը կարող է հայտնվել մեկուսացման վիճակում:

Օրինականություն

Օտարերկրյա հնարավոր ներդրողների մի զգալի մասը, ինչպես նաև տեղական տնտեսավարողները, թերահավատ են եղել ՀՀ կառավարության՝ օրենքի գերակայության սկզբունքներին հավատարմությանը, և կամ զերծ են մնացել Հայաստանում խոշոր ներդրումներ կատարելուց, ինչպես, օրինակ, ՀԷՑ-ի մասնավորեցման մրցույթի պայմանների փոփոխության դեպքում վարվեցին արևմտյան ընկերությունները: Մյուս կողմից, ամենայն հավանականությամբ, տեղ են գտել չարձանագրված պայմանավորվածություններ:

[237] ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 6-ի «Պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին» N449-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=50658, ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 4-ի «Գույք օտարելու թույլտվություն տալու մասին» N835-Ա որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107880 և ՀՀ կառավարության 2001թ. մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական Համայնքի միջև ՏԱՍԻՍ-ի 1999թ.-ի ծրագրի ֆինանսավորման մասին հուշագիրը վավերացնելու մասին» N185 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3943:

ՀԷՑ-ի սեփականաշնորհումից ի վեր ՀՀ իշխանությունները հայտարարում էին, որ իրենց գործողությունները համապատասխանում են «օրենքի տառին»: Անհրաժեշտության դեպքում, օգտվելով Ազգային ժողովի կրավորական կեցվածքից, օրենսդրությունը հարմարեցնում էին իրենց կարիքներին: Օրենքի տառին, սակայն՝ ոչ ոգուն, համահունչ գործելակերպը երկու տասնամյակ շարունակ դարձել էր ՀՀ իշխանությունների բազմաթիվ գործողությունների հիմնավորումը: Հետագա տարիներին եղան մի շարք դեպքեր, երբ կարևորագույն որոշումների կայացման կամ գործողությունների կատարման ժամանակ իշխանությունները հողում կատարեցին «օրենքի տառին» կամ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությանը:

2011-2013թթ.-ին գազի գնի գաղտնի թանկացման դեպքում, ՀԾԿՀ-ին և «Հայռուսգազարդ»-ին ուղղված իր գրությամբ, ըստ էության, ՀՀ վարչապետը Հայաստանի Հանրապետության անունից ֆինանսական պարտավորություն է ստանձնել, ինչը խնդրահարույց է, քանի որ, ՀՀ օրենսդրության համաձայն, ՀՀ կառավարությունը կարող է ֆինանսական պարտավորություն ստանձնել Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի կամ կառավարության որոշման համաձայն[238]:

Հարկ է նշել, որ, Global Financial Integrity հաշվետվությունների համաձայն, վերջին երկու տասնամյակների ընթացքում ավելի քան 10 մլրդ դոլար անօրինական կերպով դուրս է բերվել Հայաստանից, թեև Հայաստանի հանրությանը հայտնի չէ իրավապահների կողմից Հայաստանից ֆինանսական միջոցների ապօրինի դուրսբերման որևէ էական դեպքի բացահայտման մասին: Հանրությունը տեղյակ չէ նաև օֆշորային գոտիներից կատարվող ներդրումների վերջնական շահառուների ինքնության մասին: Որոշ դեպքերում, ըստ էության, հնարավոր չէ բացահայտել իրական սեփականատերերին (վերջնական շահառուներին), որպեսզի կասեցվի փողերի լվացումը և կապիտալի հակաօրինական արտահանումը: Հետաքննող լրագրողներին հաջողվել է հայտնաբերել և բացահայտել առանձին կասկածելի դեպքեր, երբ այդպիսի ներդրումներում ներգրավված են եղել բարձրաստիճան պետական պաշտոնյաներ կամ նրանց հարազատներ[239]:

5.2 ՀՀ պետական մարմինների դերակատարումը և ձախողումները

Մասնավորեցման, սակագների հաստատման, լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման գործընթացներն իրականացվել են բազմաթիվ խախտումներով, որտեղ կարևոր դերակատարում են ունեցել, մասնավորապես՝

[238] ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի երաշխավորագրերի տրամադրման կարգը հաստատելու մասին» N380 որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80390:

[239] Քրիստինե Աղալարյան և Էդիկ Բաղդասարյան, «Հայաստանի ինտերնետի սեփականատերերը», Հետք, 6 հոկտեմբերի 2015թ., https://hetq.am/hy/article/62887, Տիրայր Մուրադյան, «Պաշտոնյաները Ծաղկաձորում 50 հեկտար անտառ են սեփականաշնորհել», Հետք, 28 սեպտեմբեր 2018թ., https://hetq.am/hy/article/93475, Քրիստինե Աղալարյան, «Մետաղական հանքերի սեփականատերերը. Հայկական պղնձի և մոլիբդենի առյուծի բաժնից շահույթ են ստանում ռուս գործարարները», Հետք, 6 հունիսի 2020թ., https://hetq.am/hy/article/117849, Ամալյա Մարգարյան և Տրդատ Մուշեղյան, «Բարձաստիճան պաշտոնյաներից՝ մինչև քրեական դեմքեր. ովքեր են «տիրացել» Օղակաձև զբոսայգուն», Հետք, 9 մարտի 2020թ., https://hetq.am/hy/article/114040:

- ՀՀ ազգային ժողովը և վերահսկիչ պալատը
- ՀՀ կառավարությունը
- ՀԾԿՀ-ն
- Պաշտպանության նախարարությունը

ՀՀ Ազգային ժողով

Մասնավորեցման գործընթացում կարևորագույն վերահսկողական գործառույթ է վերապահված ՀՀ Ազգային ժողովին, որը, մի կողմից, պետք է երաշխավորի Հայաստանի տնտեսական շահերը և ներդրողների պաշտպանությունը, մրցակցությունը և հավասար հնարավորություններ ապահովող օրենսդրական դաշտի ձևավորումը, մյուս կողմից, իրականացնի դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը: Ի լրումն՝ մինչև 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները Ազգային ժողովի ներքո գործել է Վերահսկիչ պալատը (ներկայում՝ վերափոխվել է անկախ Հաշվեքննիչ պալատի), որն, ի թիվս այլ պարտականությունների, մինչև 2018թ.-y հսկողություն էր իրականացնում նաև մասնավորեցման ծրագրի կատարման, արտաբյուջետային միջոցների օգտագործման, պետական ու համայնքային սեփականության կառավարման, օգտագործման՝ օտարման, մասնավորեցման, վարձակալության և անհատույց օգտագործման, հավատարմագրային կառավարման գործարքների նկատմամբ: Վերահսկիչ պալատի գործունեության տարեկան ծրագիրը հաստատում էր Ազգային ժողովը, դրա կատարման վերաբերյալ հաշվետվությունը քննարկվում էր Ազգային ժողովում:

ՀՀ Ազգային ժողովը չի կատարել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված վերահսկողական գործառույթները, դրա իրականացումը կրել է ձևական բնույթ, ինչից օգտվելով գործադիր իշխանությունը գնացել է խիստ կասկածելի գործարքների՝ առանց հաշվետու լինելու ո՛չ հանրությանը, և ո՛չ էլ խորհրդարանին: Այսպես՝

- Որոտան կասկադի մասնավորեցման դեպքում ՀՀ Ազգային ժողովը չի վերահսկել, թե ինչ հիմքով են կարևորագույն, «ռազմավարական» համարվող միավորները հանվել օրենքով մասնավորեցման ենթակա օբյեկտների ցանկից և սեփականաշնորհվել ՀՀ կառավարության որոշումներով, ինչպես է առանց մրցույթի որոշվել կոնկրետ ներդրողը, որին ուղղակի կերպով վաճառվել է գույքը:
- Հայռուսգազարդի կլանման դեպքում ԱԺ-ն պետական գույքի օգտագործման և գոյացող պարտքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու փոխարեն *պոստ ֆակտում* ընդունվել է օրենք՝ ՀՀ կառավարության գործողություններին օրինականություն հաղորդելու համար, իսկ ՀՀ գազամատակարարման համակարգի գործունեությունն ուսումնասիրող Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովն էլ, իր հերթին, ՀՀ կառավարությանը պատկանող «Հայռուսգազարդ»-ի բաժնետոմսերի վերջին 20 տոկոսի գործարքին է հաղորդել օրինական բնույթ[240]:

[240] ««Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2013թ դեկտեմբերի 23-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87762:

Իր լիազորություններն իշխանության գործադիր մարմնին փոխանցելը և գործադիրի նկատմամբ խորհրդարանի վերահսկողության թուլացումը խախտել է իշխանության ճյուղերի հավասարակշռվածությունը: Չի կարելի բացառել, որ Ազգային ժողովը տարիներ շարունակ պարզապես «դակում» ու վավերացնում էր գործադիրի որոշումները և, ի վերջո, զերծ էր մնում Սահմանադրությամբ նախատեսված իր վերահսկողական գործառույթն իրականացնելուց, քանի որ այն սերտաճած էր բիզնեսի հետ, և իշխող ուժը ներկայացնող պատգամավորների զգալի մասը ապօրինի կերպով ներգրավված էր ձեռնարկատիրական գործունեության տարբեր ձևերում: Գործադիրի նկատմամբ վերահսկողական գործառույթի փաստացի կիրարկումը կարող էր սպառնալիք ստեղծել սեփական բիզնեսի համար:

Ընդհանուր առմամբ՝ կարելի է պնդել, որ ՀՀ Ազգային ժողովն ամբողջությամբ ձախողել է պետական սեփականության և պետական բյուջեի նկատմամբ վերահսկողությունը: Միաժամանակ, հարկ է նկատել, որ նման անպատասխանատվությունը զարմանալի չէ շարունակաբար կեղծված ընտրությունների միջոցով իշխանության լծակներին տիրացած և, միաժամանակ, կառավարվող ու խեղված քաղաքական դաշտում գործող խորհրդարանի համար:

ՀՀ կառավարություն

ՀՀ կառավարությունն Ազգային ժողովի կողմից լիակատար թողտվության և անվերահսկելիության պայմաններում հանրային գույքը մասնավորեցնելիս և ներդրումներ ներգրավելիս գնացել է բազմաթիվ մութ և կասկածելի գործարքների: Ընդ որում, ՀՀ բարձրաստիճան պետական պաշտոնյաները պատասխանատվություն չեն կրել օրինախախտումների, անհիմն ու չփաստարկված որոշումների, իրականությանը չհամապատասխանող իրենց տարբեր հայտարարությունների համար և բացարձակապես հաշվետու չեն եղել երկրի քաղաքացիների առջև:

ՀՀ կառավարությունը «Հայռուսգազարդ»-ին է փոխանցել միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակներում և հաճախ նրանց միջոցներով ստեղծված գույքը: Լրացուցիչ հետազոտությունն է հարկավոր իրականացնել՝ պարզելու, թե ինչքանով են այդ գործարքները համապատասխանել այդ կառույցների հետ ստորագրված փաստաթղթերին:

Կառավարությունը նաև չի ապահովել, որպեսզի մասնավորեցման որոշ գործարքներից ստացվող մուտքերը վերահսկելի լինեն, օրինակ, Ազգային ժողովի կամ հանրության կողմից: Այսպես՝ «Հրազդան 5-րդ էներգաբլոկ»-ին առնչվող գործարքի գումարը չի արտացոլվել բյուջեում, այլ նախատեսվել է ՊՆ արտաբյուջետային հաշվին ուղղելուն: «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի վաճառքի դեպքում ՀՀ 2015թ.-ի պետական բյուջեի կատարման հաշվետվության դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրների թվում 19,593,800 հազար դրամն արտացոլվել է որպես «Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության իրացումից մուտքեր», սակայն 2014, 2016 և 2017 թվականների բյուջեի կատարման հաշվետվություններում վաճառքից ստացված միջոցների վերաբերյալ տեղեկատվություն չկա:

Հարկ է նկատել, որ նախագահական (1995-2005) կամ կիսանախագահական (2005-2015) հանրապետությունում գործադիր իշխանության գլուխը նախագահն է: Թեև խնդրահարույց գործընթացներում նախագահի պաշտոնը տվյալ պահին զբաղեցնող անձի անմիջական ներգրավմամբ էական դրվագները, հատկապես՝ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման տարիներին, քիչ են, ավելորդ է նշել, որ պետության խոշոր ռազմավարական միավորների մասնավորեցումները և դրանց ուղեկցող երևույթները չէին կարող տեղի ունենալ առանց նրանց գիտության և հովանավորության:

Հաշվեքննիչ պալատ

Հաշվեքննիչ պալատը, որը մի քանի անգամ փոխել է իր անվանումը և լիազորությունները, որքանով որ հայտնի է հանրությանը, սեփականաշնորհման կասկածելի գործարքները չի դարձրել ուսումնասիրության առարկա: Չեն եղել նաև իրավապահ մարմինների կողմից հանրությանը հայտնի հետաքննությունների դեպքեր և հրապարակված պաշտոնական հաշվետվություններ:

Ընդհանուր առմամբ, ակնհայտ էր, որ ՀՀ բարձրագույն քաղաքական ղեկավարությունը անթաքույց ճնշում է գործադրել Վերահսկիչ պալատի վրա: Երբ Վերահսկիչ պալատի նորանշանակ նախագահ Իշխան Զաքարյանը պալատի 2012թ.-ի տարեկան հաշվետվության ներկայացման ժամանակ հայտարարեց, որ «պետական բյուջեի ծախսային մասի 70%-ը, որը վերաբերում է «գնումներ և շինարարություն» ոլորտին, որ այս պահին կրում է խիստ ռիսկային, կոռումպացված բնույթ»[241], մի քանի օր հետո՝ 2013թ. հունիսի 29-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն իր մոտ տեղի ունեցած քննարկման ժամանակ խիստ հանդիմանեց վերջինիս՝ նրա հայտարարությունն անվանելով «սխալ և անհեռատես», իսկ ՀՀ գլխավոր դատախազին անուղղակիորեն հանձնարարեց «անցնել այդ հաշվետվությամբ և հայտարարությամբ հանդես գալ, ասել՝ ՀՀ հարգելի՛ քաղաքացիներ, ՎՊ-ի հաշվետվության մեջ ընդամենը 200 կամ 300 մլն դրամի հափշտակման կասկածանքի դեպքեր կան, մնացած բոլորը հեքիաթներ են»[242]:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

ՀԾԿՀ-ն 2003թ.-ի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով սահմանված իր նպատակների համաձայն պետք է հավասարակշռի սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, նպաստի մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

ՀԾԿՀ-ի մոտեցումները սովորաբար եղել են ձևական և պաշտպանել են բիզնեսի դիրքերը: Հանրության լայն շրջանակներ չեն հավատացել հանրության շահերը պաշտպանելու՝ տվյալ

[241] ՀՀ Ազգային ժողովի հինգերորդ գումարման երրորդ նստաշրջան, սղագրություն N27, 13 հունիսի 2013թ., http://parliament.am/transcript.php?AgendaID=2472&day=13&month=06&year=2013&lang=arm#13.06.2013:

[242] «Նախագահի մոտ տեղի է ունեցել քննարկում բյուջետային միջոցների արդյունավետ կառավարման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված հարցերի շուրջ», Մամուլի հաղորդագրություն, 29 հունիսի 2013թ. https://www.president.am/hy/press-release/item/2013/06/29/President-Serzh-Sargsyan-had-a-meeting:

կառույցի ցանկությանն ու կարողությանը[243]: Մի շարք դեպքերում ՀԾԿՀ-ն չի եղել անկախ, այլ կատարել է կառավարության հրահանգները:

ՀԾԿՀ-ի կախյալ լինելու, նրա կողմից գործադիրին սպասարկելու և/կամ բիզնեսին ծառայելու դրսևորումներից են՝

- 2011թ.-ին փոքր ՀԷԿ-երի շեմի սահմանումը, ինչի արդյունքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի փեսայի սեփականություն հանդիսացող ՁորաՀԷԿ-ը դասակարգվել է «փոքր» ՀԷԿ-երի թվում և հնարավորություն ստացել իր արտադրած էլեկտրաէներգիան բաշխիչ համակարգին վաճառել ավելի թանկ գնով,
- 2013թ.-ին ՀԾԿՀ սակագնային քաղաքականության վարչության պետ Գարեգին Բաղրամյանի հայտարարությունը, որով հղում է կատարվում ՀՀ վարչապետի գրությանը և ասվում, որ գազի սակագնի ավելացումը հիմնավորված է, մինչդեռ գազի սակագնում փաստացի ներառվել էին մեծ կորուստներով պայմանավորված ծախսեր, շահագործման և պահպանման մեծ ծախսեր և մեծ շահույթ, ինչի համար վերջնական արդյունքում պետք է վճարեր հայաստանյան սպառողը[244],
- 2020թ.-ին հեռահաղորդակցության ոլորտի մրցակցության խաթարումը, երբ, օրինակ, ՀԾԿՀ-ն թույլ չի տվել չորրորդ օպերատորին մուտք գործել բջջային ծառայությունների շուկա՝ պատճառաբանելով տվյալ դիրքորոշումը նորմատիվ իրավական հիմք չունեցող «շարժական կապի շուկայի կառուցվածքով»:

ՀՀ Ազգային ժողովի ապրիլի 18-ի նիստում, որտեղ քննարկվում էր ՀԾԿՀ նախագահի թեկնածությունը, պատասխանելով պատգամավոր Արման Բաբաջանյանի հարցին Գ. Բաղրամյանը նշում էր, որ «Բոլոր այն լիցենզիաները, որոնք տրվել են, համենայն դեպս, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, իրենք իրենց տակ ունեցել են բոլոր այն փաստաթղթերը, անկախ նրանից՝ դրանց սեփականատերերը նախկին պաշտոնյաներ են եղել, թե բարձրաստիճան զինվորականներ, բոլոր լիցենզիաների տակ, ես ձեզ հավաստիացնում եմ, կան բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը[245]: Այսինքն՝ բոլոր այն հողհատկացումները, հողի նշանակության փոփոխությունները, որոնք պահանջվում են լիցենզիա տրամադրելու համար, այդ բոլոր փաստաթղթերն առկա են այդ լիցենզիաների տակ»: Սա հերթական դրսևորումն է այնպիսի լեգալիստական մոտեցման, երբ պաշտոնյաներն իրենց որոշումները, գործողությունները կամ անգործությունը հիմնավորել են «բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի» առկայությամբ և «օրենքի տառին» համապատասխանությամբ:

---

[243] Արմեն Ռուստամյան, «Այսօր հասարակության շահը ստորադասվում է մենաշնորհ ունեցող ընկերություններին», Երկիր, 2 հուլիսի 2014թ., http://www.yerkir.am/news/view/70073.html, «ՀԾԿՀ-ն իր հիմնական գործառույթը չի կատարում. Պետք է զսպել «Վեոլիա Ջրի» ախորժակը», Նյուսինֆո, 17 սեպտեմբերի 2017թ., https://www.newsinfo.am/arm/article/view/EJWODlbvq7, Սիրանույշ Պապյան, «Պետք է հասկանալ ՀԾԿՀ-ն ում շահերին է ծառայում՝ Հայաստանի՞, թե մաֆիայի ու Ռուսաստանի», Լրագիր, 29 ապրիլի 2020թ., https://www.lragir.am/2020/04/29/542094:

[244] Սոնա Ավագյան, «Հիմնավորված է, որ գազի գինը 132 դրամից դառնա 156 դրամ. ՀԾԿՀ վարչության պետ», 23 մայիսի 2013թ., https://hetq.am/hy/article/26762:

[245] ՀԾԿՀ նախագահի պաշտոնի համար Գ. Բաղրամյանի թեկնածության քննարկում, ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման երկրորդ նստաշրջանի 2019թ. ապրիլի 18-ի նիստ, N14 սղագրություն, http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3621&day=18&month=04&year=2019&lang=arm#18.04.2019:

ՀԾԿՀ-ն ձախողել է Հայաստանի սպառողների և տնտեսական շահերի պատշաճ պաշտպանությունը: Դրա հետևանքով՝ սակագների ավելացման միջոցով իշխանությունները ծառայությունների մատուցման և իրենց անորակ գործունեությամբ պայմանավորված անարդյունավետությունների բեռը փոխանցել են բնակչությանը: Դա հանգեցրել է սոցիալական խնդիրների, ինչի արդյունքում ձևավորվել են «Ո՛չ թալանին», «Ոտքի՛ Հայաստան», «Էլեկտրիկ Երևան» քաղաքացիական նախաձեռնությունները[246]:

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ պաշտպանության նախարարության նպատակն է «Անվտանգության խորհրդի կողմից սահմանված պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում մշակել և իրականացնել պաշտպանության, Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության, պետական սահմանի անձեռնմխելիության ու անվտանգության պաշտպանության ապահովման, օրենքով սահմանված կարգով ռազմաքաղաքական իրադրության, տարածքային իրավիճակի, Հայաստանի Հանրապետության ռազմավարական և ռազմական շահերին առնչվող հիմնախնդիրների ու գործընթացների, ռազմական սպառնալիքների և վտանգների, պաշտպանվածության աստիճանի ուսումնասիրման, գնահատման ու անհրաժեշտ միջոցառումների իրականացման ապահովման ոլորտներում քաղաքականությունը (1), միջազգային ռազմաքաղաքական, ռազմական և ռազմատեխնիկական հարաբերությունների իրականացման ու հավաքական պաշտպանության մեխանիզմների զարգացման, զինված ուժերի միջազգային ներգրավման, զինված ուժերի համակողմանի ապահովման, զինվորական անձնակազմի պատրաստության, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև զինծառայողներին հավասարեցված անձանց սոցիալական պաշտպանության ապահովման, Հայաստանի Հանրապետության և նրա պաշտպանական համակարգի դեմ ուղղված տեղեկատվական քարոզչության կանխարգելման ու հակաքարոզչական միջոցառումների իրականացման ապահովման ոլորտներում քաղաքականությունը (2)»[247]:

Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում և երկու հարևան պետությունների կողմից թշնամական տրամադրությունների մշտական առկայության պայմաններում Հայաստանի պաշտպանության նախարարությունն ու զինված ուժերը կարևորագույն առաքելություն ունեն, և Հայաստանի Հանրապետության պաշտպանության հետ կապ չունեցող

---

[246] Karena Avetisyan, "The power of Electric Yerevan", Open Democracy, 6 July 2015, https://www.opendemocracy.net/en/odr/electrified-yerevan, Marianna Grigoryan, "Armenia: Evaluating Electric Yerevan's Impact", EurasiaNet, 7 July 2015, https://eurasianet.org/armenia-evaluating-electric-yerevans-impact:

[247] ՀՀ կառավարության 2019թ. հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N992-Լ որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=133892: ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» N1554-Ն որոշմամբ (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75956) հաստատված կանոնադրության համաձայն «Նախարարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ապահովման, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման և մարտական պատրաստականության համար»:

գործառույթներ նրան վերապահելը նախարարության մարդկային ռեսուրսների ոչ նպատակային օգտագործում է: Այդ առումով՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներգրավվածությունը չառնչվող ձեռնարկատիրական գործունեության մեջ, մասնավորապես՝ էներգետիկ ակտիվների վաճառքի գործարքներում, և առանձին կառույցներ ՀՀ պաշտպանության նախարարությանը փոխանցելը անհասկանալի և խնդրահարույց է: Նման գործառույթների մասին չի նշվում ոչ միայն նախարարության նպատակների, այլ նաև վերջինիս առաջ սահմանված խնդիրների թվում: Նախարարությունը չունի էներգետիկ ենթակառուցվածքների կառավարման և դրանց մասնավորեցման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ենթադրել, որ ՀՀ պաշտպանության նախարարությանը հանձնված էներգետիկ ենթակառուցվածքների կառավարմամբ և դրանց մասնավորեցմամբ զբաղվել է անձամբ նախարարը, ինչը նշանակում է, որ նախարարի ժամանակի մի մասը, որը պետք է հատկացվեր երկրի պաշտպանունակության և զինված ուժերի ամրապնդմանը՝ օգտագործվել է այլ նպատակներով, ինչն անթույլատրելի է փաստացի պատերազմական իրավիճակում գտնվող երկրի համար:

Պաշտպանության նախարարության ներգրավմամբ գործարքները ներառել են հետևյալը.

- 2002թ.-ին Հայաստանի և Ռուսաստանի միջև «գույք՝ պարտքի դիմաց» գործարքը ստորագրել են ոչ թե կողմերի ֆինանսների նախարարները՝ որպես պետական պարտքի կառավարման համար պատասխանատու պետական մարմնի ղեկավարներ, կամ պետական գույքի կառավարման համար պատասխանատու պետական մարմինների ղեկավարները, այլ հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահները, որը հայկական կողմից երկար տարիներ հանդիսանում էր ՀՀ պաշտպանության նախարարը[248]:
- 2002թ.-ի հունվարի 15-ին ՀՀ կառավարությունը «ՁորաՀԷԿ» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունները վերապահել է ՀՀ պաշտպանության նախարարությանը[249], որը 2006-2010թթ.-ի ընթացքում ստացել է համապատասխան շահաբաժիններ[250]: Հետագայում, 2010թ.-ին ՀՀ կառավարությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը «թույլատրել է» որպեսզի այն հավանություն տա՝ «ՁորաՀԷԿ» ՓԲԸ-ի կողմից խոշոր գործարքի կնքմամբ գույքը օտարի «Ձորագետ Հիդրո» ՍՊԸ-ին[251]:
- 2002թ.-ին ՀՀ կառավարությունը «ՁորաՀԷԿ» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունները

[248] Ատոմ Մարգարյան, «Ստորագրվեց «Գույք՝ պարտքի դիմաց» համաձայնագիրը», Ազատություն ռադիոկայան, 17 հուլիսի 2002թ., https://www.azatutyun.am/a/1569925.html:
[249] ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 15-ի ««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարմանը հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 14-ի N 185 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N36 որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=15555:
[250] Արման Գալոյան և Լուսինե Մինասյան, ««ՁորաՀԷԿ»-ի մասնավորեցումը Սերժ և Տիգրան Սարգսյանների օրոք», Ժողովուրդ, 10 մայիսի 2019թ., https://armlur.am/899422:
[251] ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի ««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից գույքի օտարման խոշոր գործարք կնքելուն հավանություն տալու մասին» N1660-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64122:

վերապահել է ՀՀ պաշտպանության նախարարությանը[252], որը 2006-2010թթ.-ի ընթացքում ստացել է համապատասխան շահաբաժիններ[253]:

- 2006թ.-ի ապրիլի 6-ի ՀՀ կառավարության №449-Ն որոշմամբ[254] ՀՀ պաշտպանության նախարարությանը հանձնվել է «Հրազդան 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրը՝ «Գազպրոմ» ԲԲԸ-ի առաջարկած՝ նրա կողմից հիմնադրած մեկ այլ անձի վաճառելու նպատակով:
- 2016թ.-ի օգոստոսի 4-ին ՀՀ կառավարության №835-Ա որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարին հանձնարարվել է, որպեսզի նա՝ որպես «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի և «Արմ-Աէրո» ՓԲԸ-ի միակ բաժնետեր, ընդունի որոշում և Որոտանին պատկանող «Հեր-Հեր» ՀԷԿ-ը վաճառի «Արմ-Աէրո» ՓԲԸ-ին:

«Արմ-Աէրո» ՓԲԸ-ի հիմնադիրը ՀՀ կառավարությունն էր[255], իսկ դրա 100 տոկոս բաժնետոմսերի և գույքի կառավարման լիազորությունը վերապահվել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը[256]: Մասնավորապես՝ ՊՆ-ն իրականացնում էր «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառվող գույքի զգալի մասը (ուղղաթիռներ, ուղղաթիռների շարժիչներ, պահեստամասեր և այլն) արդյունավետ կառավարելու, ռազմաօդային պաշտպանության բնագավառում իրականացվող գործունեությունը կոմերցիոն հիմունքներով ավիացիոն ծառայությունների մատուցման բնագավառում իրականացվող գործունեությունից հստակորեն տարանջատելու գործառույթը:

5.2 Ռուսական կապիտալը և ազդեցությունը Հայաստանում

Հայաստանում հանրային գույքի մասնավորեցման և ներդրումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1997թ.-ից ի վեր ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերում՝ էներգետիկա, բանկային համակարգ, հեռահաղորդակցություն, տրանսպորտային կապուղիներ, հանքարդյունաբերություն և այլն, ծանրակշիռ ու գլխավոր դերակատարում է ստանձնել Ռուսաստանը՝ ինչպե՛ս պետական, այնպե՛ս էլ մասնավոր ընկերությունների մասնակցությամբ, հաճախ բավականին խնդրահարույց գործընթացների արդյունքում: Նման անհավասարակշիռ կառավարման պրակտիկան Հայաստանի տնտեսությունը ծայրահեղ կախման մեջ է դրել Ռուսաստանից: Էներգետիկայի ոլորտում՝ Ռուսաստանից վառելիքի մատակարարումների մեծ ծավալն ու որևէ այլընտրանքի բացակայությունը, հեռահաղորդակցության ոլորտում՝ բջջային կապի ծառայություններ մատուցող

[252] ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 15-ի ««ՁորաՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարմանը հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 14-ի N185 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N36 որոշում, http://www.irtek.am/views/act.aspx?aid=15555:

[253] Արման Գալոյան և Լուսինե Մինասյան, ««ՁորաՀԷԿ»-ի մասնավորեցումը Սերժ և Տիգրան Սարգսյանների օրոք», Ժողովուրդ, 10 մայիսի 2019թ., https://armlur.am/899422:

[254] ՀՀ կառավարության 2006թ.-ի ապրիլի 6-ի «Պետական գույքի օտարման և բնական գազի սակագնի մեղմացման միջոցառումների մասին» N 449-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=50658:

[255] ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 11-ի ««Հայկական ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերության բյուջետային վարկի պարտքի դիմաց գույք ընդունելու մասին» N 1726-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=47448:

[256] ՀՀ կառավարություն, Պաշտոնական լրահոս, 6 մայիսի 2004թ., https://www.gov.am/am/news/item/1241:

օպերատորների սակավությունը և ռուսական սեփականություն հանդիսացող ընկերությունների գերիշխանությունը, ֆինանսական ոլորտում՝ ռուսական կապիտալի զգալի ծավալը և Ռուսաստանի ֆինանսական շուկայում ցնցումների հավանականությունը մեծապես խոցելի են դարձրել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը և երկրի կայունությունը:

5.3.1 Գույքի ձեռքբերումը և քաղաքական ազդեցությունը

Հայաստանում գույքի անարդյունավետ և ոչ թափանցիկ կառավարումը, հաշվետվողականության բացերը, օրենքի գերակայության և կարգավորման բնագավառում առկա թերությունները, կուտակված պարտքերը, ինչպես նաև լայնածավալ կոռուպցիան օգտագործելով՝ ռուսական պետական ընկերությունները տարբեր ժամանակներում տարբեր մարտավարություններ են կիրառել Հայաստանի բազմաթիվ, բայց գլխավորապես էներգետիկ ռեսուրսներին տիրանալու համար::

ՀԷՑ-ի մասնավորեցումը՝ էներգակիրների գրեթե մեկ տասնամյակ տևող վայրիվերումներից հետո աճող գների հաշվին կուտակվող ֆինանսական ռեսուրսների օգնությամբ իր ռազմաքաղաքական կարողությունները բարելավող Ռուսաստանի կողմից Արևմուտքին նետված առաջին ձեռնոցներից մեկն էր, և, պետք է արձանագրել, որ Ռուսաստանն ու ռուսական ընկերությունները «հաղթեցին» այս պայքարում: Հայաստանի համար ՀԷՑ-ի մասնավորեցման գործարքը պյուռոսյան հաղթանակ էր, որն ամրապնդեց Հայաստանում «Հայռուսգազարդ»-ի ստեղծմամբ արդեն իսկ ձևավորված էներգետիկ ոլորտի «ռուսիֆիկացիայի» ծրագիրը՝ հետագա տարիներին լրացնելով Ռուսաստանի ձեռքբերած կապիտալը մի շարք այլ էներգետիկ կառույցներով ու ենթակառուցվածքներով:

Հայաստանը նաև յուրահատուկ փորձադաշտ և մեկնարկային կետ դարձավ մի շարք ռուսական ընկերությունների ընդարձակման համար: Հետագայում արձանագրվեցին դեպքեր, երբ ռուսական ընկերությունները նախկին ԽՍՀՄ տարածքում իրենց ընդլայնումը սկսում էին Հայաստանից: Օրինակ, Սևան-Հրազդան կասկադը «ՌԱՕ ԵԷՍ»-ի առաջին արտադրող ընկերությունն էր, իսկ «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի գնումը «Վնեշտորգբանկ» ԲԲԸ-ի առաջին ձեռքբերումն էր նախկին խորհրդային տարածքում:

Պետք է նկատել, որ Ռուսաստանի Դաշնությունն իր ընկերությունների հետ կնքված համաձայնագրերն օգտագործել է որպես գործիք, որպեսզի խոչընդոտի մրցակցությունը և Հայաստանի իշխանություններին պարտադրի հրաժարվել արևմտյան գործընկերների հետ համագործակցությունից: Այսպես՝ ՀԷՑ-ի սեփականաշնորհման ժամանակ Ռուսաստանի դեսպանը հայտարարում էր, որ մրցույթին ռուսական ընկերությունների մասնակցության արգելքը հակասում է տնտեսական համագործակցության խորացման ռուս-հայկական համաձայնագրի դրույթներին, մինչդեռ «Իտերա»-ն դուրս էր մնացել մրցույթից, քանի որ չէր ներկայացրել իր ֆինանսական բարվոք վիճակը հավաստող միջազգային աուդիտորական ընկերության եզրակացություն:

Ռուսական պետական էներգետիկ ընկերություններն արել են ամեն հնարավորը, որպեսզի Հայաստանին թույլ չտան դիվերսիֆիկացնել իր էներգետիկ կարողությունները,

միջպետական համաձայնագրերով խոչընդոտներ են ստեղծել գազի մատակարարման այլընտրանքային աղբյուրների և խողովակների համար: Օրինակ՝ Գազպրոմը ԲԷՑ-ից ձեռք է բերել Իրանից եկող գազատարի մի հատվածը, որը կառուցվում էր Հայաստանին գազի մատակարարման այլընտրանքային խողովակ ապահովելու համար: Ընդ որում, կառավարության ներկայացուցիչները երբևէ չեն բացատրել, թե ինչու են համաձայնվել, որպեսզի ԲԷՑ-ը, որը պետական ընկերություն է, Իրանից եկող գազատարը վաճառի «Հայռուսգազարդ»-ին:

Ռուսաստանը, օգտվելով իր կողմից մատակարարվող գազից Հայաստանի կախվածությունից, ՀԷՑ-ի սեփականաշնորհման ամենավճռորոշ պահին ռուսական Գազպրոմի միջոցով գործի է դրել գազի մատակարարման դադարեցման սպառնալիքը, որպես ճնշման միջոց: Վառելիքի մատակարարումների առումով ՀԱԷԿ-ը ևս կախված է Ռուսաստանից, ինչը լրացուցիչ գործիք է:

Հարկ է նշել, որ ռուս-հայկական համագործակցության հղումները ռուս պաշտոնյաներն օգտագործել են նաև Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացվող միջոցառումներից ռուսական ընկերություններին պաշտպանելու համար: Այսպես, 2020թ.-ին Ռուսաստանը դաշնակցային հարաբերություններին հղում էր կատարում, որպեսզի ռուսական ընկերություններին պաշտպանի Հայաստանում, կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ընթացող իրավական գործընթացներից[257]:

5.3.2 Ռուսաստանի դերը Հայաստանի տնտեսության մեջ

Ներկայումս ռուսական ընկերությունները ձևավորում են Հայաստանում ստեղծվող արդյունքի զգալի մասը: Վերջիններիս սեփականություն հանդիսացող, նրանց կառավարման ներքո գտնվող և մատակարարումների առումով Ռուսաստանից զգալի կախվածություն ունեցող հայկական ընկերությունների կողմից վճարվող հարկերի ուսումնասիրության արդյունքում կարել է եզրակացնել, որ բավական երկար ժամանակ այդ ընկերությունները ձևավորել են Հայաստանի տնտեսությունում ստեղծվող արդյունքի 15 տոկոսը, որը 2018թ.-ին նվազել է մինչև ոչ պակաս, քան 13 տոկոս (Պատկեր 6):

[257] Հեղինե Բունիաթյան, «Սերգեյ Լավրովն արձագանքել է Հայաստանի համար գազի գինը նվազեցնելու հնարավորությանը», Ազատություն ռադիոկայան, 21 ապրիլի 2020թ. https://www.azatutyun.am/a/30567982.html:

Պատկեր 6. Ռուսական ընկերությունների սեփականություն հանդիսացող և կառավարման ու մատակարարումների առումով կախվածություն ունեցող հայկական ընկերությունների կողմից վճարվող հարկերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկերում



Աղբյուր. ՊԵԿ և ընկերությունների հաշվետվություններ

Չնայած Հայաստանը փորձել է ներդրումներ ներգրավել աշխարհի տարբեր երկրներից, պաշտոնական վիճակագրության համաձայն Ռուսաստանը երկար տարիներ հիմնական ներդրողն է (Պատկեր 9): Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ ներդրումների մի մասը եղել է ոչ թե ֆինանսական, այլ ոչ ֆինանսական ներդրման՝ ռուսական ընկերությունների կողմից գազի կամ ՀԱԷԿ-ին վառելիքի մատակարարման տեսքով:

Պատկեր 9. Ռուսաստանից Հայաստան ուղղակի օտարերկրյա ուղղակի ներդրումները (միլիոն ԱՄՆ դոլար և տոկոս)



Աղբյուր. Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Այդուհանդերձ, Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալները վկայում են, որ 2013-2017թթ.-ին Հայաստանում Ռուսաստանի ներդրումներն իրականում եղել են բացասական, ինչի պատճառով օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ պաշարը 2,530 մլրդ դրամից նվազել է մինչև 843 մլրդ դրամի: Մյուս կողմից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռուսական ներդրումների մի մասը հոսում է այլ երկրների միջոցով, ինչպես օրինակ Կիպրոսի, Լյուքսեմբուրգի և այլն, Հայաստանում Ռուսաստանի ներդրումները կարող են նաև էականորեն թերագնահատված լինել:

Ինչպես մի շարք այլ երկրներում, Ռուսաստանի նկատմամբ միջազգային սանկցիաներից հետո Հայաստանում նույնպես նկատվել է ռուսական ընկերությունների ակտիվության որոշ անկում[258]:

Ռուսաստանը նաև Հայաստանի հիմնական առևտրային գործընկերն է: Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ) միանալուց հետո ռուսական շուկան ավելի գրավիչ դարձավ հայկական բազմաթիվ ապրանքների արտահանման համար, քանի որ դրանք ազատվեցին որոշ հարկերից և տուրքերից: Ներկայում, Հայաստանը Ռուսաստան է արտահանում հիմնականում գյուղատնտեսական արտադրանք ու մշակված սնունդ և ներմուծում է հիմնականում գազ: Պատկեր 7-ը ներկայացնում է Ռուսաստանի հետ առևտրային պակասուրդի տվյալները:

Պատկեր 7. Ռուսաստանի հետ առևտրային պակասուրդի մեծությունը



Աղբյուր. Հայաստանի վիճակագրական կոմիտե

Ռուսաստանը եղել և մնում է Հայաստանի խոշորագույն երկկողմ վարկատուն: Հայաստանը Ռուսաստանից պարտք է վերցրել ՀԱԷԿ-ի վերագործարկման և վառելիքի ձեռքբերման համար: 2003թ.-ին Ռուսաստանի Դաշնությանը մի քանի շատ կարևոր

[258] Center for the Study of Democracy, "Assessing Russian Economic Footprint in the Western Balkans: Corruption and State Capture Risks", Sofia, 2018, http://old.csd.bg/artShow.php?id=18131:

ձեռնարկությունների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը բավականին հակասական ընդունվեց Հայաստանի քաղաքացիների կողմից: Շատերը հուսալքված էին՝ տեսնելով, որ ռազմավարական գործընկեր Ռուսաստանը 94 մլն ԱՄՆ դոլար պարտքի դիմաց վերցնում է էներգետիկ և պաշտպանական ոլորտի կարևոր ձեռնարկությունները, այն դեպքում, երբ ինքը՝ Ռուսաստանն ավելի լավ վերաբերմունքի էր արժանացել իր միջազգային վարկատուների կողմից և, իր հերթին, այլ երկրների ներել էր շատ ավելի մեծ պարտք: Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպումների ժամանակ նախագահ Պուտինը հայտարարել է, որ «գույք՝ պարտքի դիմաց» գործարքը նախաձեռնել էին Հայաստանի իշխանությունները[259]:

Հայաստանի տնտեսության բոլոր հիմնական ճյուղերում ռուսական ընկերությունների լայն ներկայացվածության և էներգետիկ կախվածության բերումով Հայաստանը խիստ խոցելի է ռուսական տնտեսության և ֆինանսական շուկաների ցնցումների նկատմամբ, այդ թվում՝ նրա նկատմամբ պատժամիջոցների պատճառով: Չնայած վերջին տասնամյակում Հայաստանում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումներում Ռուսաստանի տեսակարար կշիռը նվազել է ՀՆԱ-ի 18-19 տոկոսից մինչև 10.5 տոկոս՝ Հայաստանի տնտեսությունը շարունակում է մնալ զգայուն գազի և այլ ռեսուրսների գների տատանումների նկատմամբ: Ռուսաստանի հետ առևտրի ՀՆԱ 5-8 տոկոսի չափով պակասորդը և Ռուսաստանի հանդեպ ՀՆԱ 2.5 տոկոսը կազմող պետական պարտքը Հայաստանի տնտեսությունն ավելի խոցելի են դարձնում ռուսական տնտեսությունում ցնցումներից:

5.3.3 Ռուսաստանի ազդեցությունը խթանող այլ գործոնները

Հարկ է նշել, որ Ռուսաստանի տնտեսական ազդեցությունը Հայաստանում բազմապատկվում է՝ պայմանավորված մի շարք այլ գործոններով: Մասնավորապես, աշխարհաքաղաքական և տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, հակամարտությունները, տնտեսական դժվարությունները և պատմական կապերը Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության վրա ազդելու բազմաթիվ գործիքներ են տալիս Ռուսաստանին:

Արցախի Հանրապետության ինքնորոշման իրավունքի համար պայքարը և 1988թ.-ի Սումգայիթի, ապա 1990թ.-ի Բաքվի ջարդերից հետո փախստականների ընդունումը այն գլխավոր գործոններն են, որոնք էապես ձևավորել են հետխորհրդային Հայաստանի քաղաքական և տնտեսական հարաբերությունները: Ռուսաստանը, ԱՄՆ և Ֆրանսիայի հետ համատեղ, հանդիսանում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության

[259] 2003թ. հունվարի 17-ին Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ համատեղ ասուլիսում լրատվամիջոցների համար արված հայտարարությունները և հարցերի պատասխանները, http://kremlin.ru/events/president/transcripts/21837, Ռուսաստանի և Հայաստանի նախագահների 2003թ. հունվարի 17-ի համատեղ հայտարարությունը, http://kremlin.ru/supplement/3648, Կրեմլում կայացել են ռուս-հայկական բարձր մակարդակի բանակցություններ, 17 հունվարի 2003թ., http://kremlin.ru/events/president/news/27997: Կրեմլում կայացել են Ռուսաստանի և Հայաստանի նախագահների հանդիպումը, 14 մայիսի 2002թ., http://kremlin.ru/events/president/news/27073:

կազմակերպության (այսուհետ՝ ԵԱՀԿ) Մինսկի խմբի համանախագահ, որը գլխավորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանն ուղղված միջազգային ջանքերը[260]:

Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական գործընկերն է անկախության առաջին իսկ տարիներից[261]: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը ստորագրվել է 1997թ.-ին[262]: Պայմանագիրը կնքվել է 25 տարի ժամկետով և ինքնաբերաբար պետք է երկարաձգվի տասը տարով, եթե կողմերից ոչ մեկը, ոչ ուշ, քան դրա գործողության համապատասխան ժամանակաշրջանը լրանալուց մեկ տարի առաջ, գրավոր չծանուցի մյուս կողմին պայմանագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Արցախի հայ ազգաբնակչության գոյությանը շարունակական սպառնալիքի և Թուրքիայի կողմից Հայաստանի անվտանգությանը սպառնալիքի զգացողության պատճառով Հայաստանը ստիպված է արտաքին օժանդակություն և դաշնակիցներ որոնել: Ռուսաստանի հետ տնտեսական, քաղաքական և հասարակական համագործակցությունը լրացվում է նաև ռազմականով: 1992թ.-ի օգոստոսի 21-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին» պայմանագիրը[263], իսկ 1992թ.-ի սեպտեմբերի 30-ին՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց կենսագործունեության պայմանների մասին» պայմանագիրը[264]: 2012թ.-ին ստորագրվել է Հայաստանի և Ռուսաստանի միջև մինչև 2020թ.-ը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը[265]:

1992 թվականի մայիսի 15-ից Հայաստանը Ռուսաստանի առաջնորդությամբ գործող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ ՀԱՊԿ) անդամ է, և այն եզակի երկրներից, որտեղ Ռուսաստանն ունի ռազմական բազա, ընդ որում, Հայաստանը ֆինանսավորում է ռազմակայանի պահպանման ծախսերի մի մասը[266]:

---

[260] ԵԱՀԿ Մինսկի խումբ, https://www.osce.org/mg:

[261] ՀՀ արտաքին գործերի նախարարություն, https://www.mfa.am/hy/bilateral-relations/ru:

[262] «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» 1997թ. օգոստոսի 29-ի ստորագրված պայմանագիր, ուժի մեջ է 1998թ. նոյեմբերի 5-ից և գործում է 25 տարի ժամկետով, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532:

[263] Պայմանագիր «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին», ստորագրվել է 1992թ. օգոստոսի 21-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=3446:

[264] Պայմանագիր «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց կենսագործունեության պայմանների մասին», ստորագրվել է 1992թ. սեպտեմբերի 30-ին, https://uic.am/wp-content/uploads/2015/08/Paym-sahmanapah-arm.pdf:

[265] «Հայաստանի և Ռուսաստանի միջև մինչև 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագիրը» ստորագրվել է 2012թ.-ի հոկտեմբերի 12-ին, https://www.gov.am/am/news/item/9962:

[266] Միջազգային կազմակերպություններ. Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն, https://www.mfa.am/hy/international-organisations/1:

2003թ.-ի վարդերի հեղափոխությունից հետո Հայաստանը հյուրընկալել է Վրաստանից վտարված ռուսական զորքը[267]:

Սահմանափակ ֆինանսական միջոցների պատճառով Հայաստանը Ռուսաստանի հետ իր դաշնակցային հարաբերություններն օգտագործում է Ռուսաստանի ներքին գներով ժամանակակից ռազմական տեխնիկա ձեռք բերելու համար, որպեսզի կարողանա հարաբերական հավասարակշռություն հաստատել հնարավոր ախոյանների կարողությունների հետ[268]: Եվ չնայած, որ Ռուսաստանը միաժամանակ ժամանակակից ռազմական տեխնիկա է մատակարարում Հայաստանի հանդեպ թշնամաբար տրամադրված երկրներին, Հայաստանի կախվածությունը նրանից շարունակվում է[269]: Վերջին տարիներին Հայաստանը պարտք է վերցրել Ռուսաստանից՝ 2009թ.-ի տնտեսական դժվարությունները հաղթահարելու, ինչպես նաև իր ռազմական կարողություններն արդիականացնելու և մեծաքանակ զինամթերք և ռազմական տեխնիկա ձեռք բերած հարևան պետության հետ ռազմական հավասարակշռությունը վերականգնելու նպատակով:

Հարկ է հիշել, որ 2009-2013 թվականներին, գրեթե չորս տարի, Հայաստանը Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) հետ բանակցում էր Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ (այսուհետ՝ ԽՀԱԱՀ): Հայաստանում չկային ներքին քննարկումներ Ռուսաստանի շուրջ ձևավորված Մաքսային միությանը միանալու վերաբերյալ, և Հայաստանի հասարակությունը տեղյակ չէր այդ միությանը միանալուն առնչվող որևէ ընթացիկ գործընթացի մասին: ՀՀ վարչապետը ռուս լրագրողին բացատրում էր, որ Հայաստանի դեպքում Մաքսային միությանը միանալն անիմաստ է[270]: Մաքսային միությանը միանալու բանակցությունների մասին տեղյակ չէին նաև իշխող կուսակցության ամենաբարձր ղեկավարները: 2013թ.-ի սեպտեմբերի 3-ին, մաքսային միությանը Հայաստանի միանալու վերաբերյալ Սերժ Սարգսյանի և Վլադիմիր Պուտինի հայտարարությունից մեկ օր առաջ, Ազատություն ռադիոկայանի «հնարավո՞ր է արդյոք, որ Հայաստանի և Ռուսաստանի նախագահների հանդիպումից հետո պարզ դառնա, որ Հայաստանը մտնում է Մաքսային միություն և չի նախաստորագրելու ԵՄ հետ Ասոցացման համաձայնագիրը» հարցին ի պատասխան՝ իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության փոխնախագահ Գալուստ Սահակյանը հայտարարում էր. «Չեմ կարծում, նման բան չի կարող լինել, որովհետև Ասոցացման համաձայնագիրը հայ-ռուսական հարաբերությունների նույնիսկ ենթատեքստում որևէ խանգարիչ հանգամանք չի առաջադրում, և նաև Մաքսային միության քննարկումները այնքան խորացած չեն, որ հենց

[267] "В Кремле состоялись российско-армянские переговоры на высшем уровне", 17 января 2003г., http://kremlin.ru/events/president/news/27997, "Вступительное слово на встрече с Президентом Армении Робертом Кочаряном", 17 января 2003г., http://kremlin.ru/events/president/transcripts/24797:

[268] "Russa Ships $200M in Military Arms to Ally Armenia", The Moscow Times, 23 July 2018, https://www.themoscowtimes.com/2018/07/23/russia-ships-200-million-military-arms-ally-armenia-a62318:

[269] Аршалуйс Мгдесян, "Россия – Армения – Азербайджан: оружейный баланс в условиях политического дисбаланса", Regnum, 14 июля 2014г., https://regnum.ru/news/polit/1825431.html:

[270] Интервью Премьер Министра Армениа Тиграна Саркисяна корреспонденту газеты "Коммерсантъ", "Таможенный союз не имеет для нас смысла", "Коммерсантъ", 4 апреля 2012г., https://www.kommersant.ru/doc/1907602:

կարողանանք այսօր դիրքորոշում արտահայտել, առավել ևս՝ Հայաստանը մաքսային սահման չունի Ռուսաստանի հետ»[271]:

2013թ.-ի սեպտեմբերի 3-ին, մեկ գիշերվա ընթացքում, Հայաստանը փոխեց իր զարգացման ընթացքը: Նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում Պուտինի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը միանում է Ռուսաստանի հետ Մաքսային միությանը: Այդ որոշումը վանեց ԵՄ-ին, խորտակեց ԽՀԱԱՀ-ն ստորագրելու հույսը և Հայաստանի կողմից սեփական քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելու կարողության հետ կապված հարցեր առաջացրեց[272]: Հատկանշական է, որ Մաքսային միությանը միանալու անիմաստության մասին խոսող Տիգրան Սարգսյանը 2016-2020թթ.-ին դարձավ դրա հիման վրա ստեղված Եվրասիական տնտեսական միության մշտապես գործող կարգավորող մարմնի՝ Եվրասիական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ[273]:

Պետք է արձանագրել, որ հայաստանցիներն, ընդհանուր առմամբ, դրականորեն են տրամադրված Ռուսաստանի հանդեպ[274]: 2018թ.-ի հոկտեմբերի 9-ից 29-ը Միջազգային հանրապետական ինստիտուտի պատվերով The Gallup Organization-ի կողմից 1200 քաղաքացու շրջանում իրականացված հարցման արդյունքների համաձայն, հարցման մասնակիցների 92 տոկոսը դրական է համարել Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունները, 93 տոկոսը Վրաստանի և 97 տոկոսը Ֆրանսիայի հետ հարաբերությունները: Հիմնական քաղաքական ուժերը կասկածի տակ չեն դնում Ռուսաստանի հետ սերտ համագործակցության անհրաժեշտությունը: Չնայած Ռուսաստանի կողմից Հայաստանի հանդեպ թշնամաբար տրամադրված երկրներին ժամանակակից զինատեսակների վաճառքին՝ Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցությունն ամուր և կայուն է:

Արդեն երկար տարիներ Հայաստանի Հանրապետությունից դուրս ժամանակավոր աշխատանք փնտրող միգրանտների հիմնական ուղղությունը Ռուսաստանն է: Վերջինս զգալի չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ սոցիալապես առավել խոցելի խավերի ներկայացուցիչների զգալի մասը տիրապետում է ռուսաց լեզվին և խորհրդային համատեղ անցյալի բերումով ծանոթ է ռուսական մշակույթին: Ռուսաստան աշխատանքային միգրացիային նպաստում է նաև առանց վիզա ելումուտի հնարավորությունը: Յուրաքանչյուր տարի Հայաստանի տասնյակ հազարավոր քաղաքացիներ ժամանակավոր աշխատանքի են մեկնում Ռուսաստան, որոնցից շատերը հետագայում հաստատվում են այնտեղ:

---

[271] Ռուզաննա Ստեփանյան, «Գալուստ Սահակյան. «Հայաստանը կնախաստորագրի Ասոցացման համաձայնագիրը», Ազատություն ռադիոկայան, 3 սեպտեմբերի 2013թ., https://www.azatutyun.am/a/25094081.html:

[272] Նաիրա Բուլղադարյան, «Հայաստանի ինքնիշխանության հետ կապված պրոբլեմներ կան», Ազատություն ռադիոկայան, 4 սեպտեմբերի 2013թ., https://www.azatutyun.am/a/25095275.html, Գևորգ Ստամբոլցյան, «Վադիմ Դուբնով, «Սարգսյանն առանձնապես ընտրություն չուներ»», Ազատություն ռադիոկայան, 4 սեպտեմբերի 2013թ., https://www.azatutyun.am/a/25094694.html:

[273] Հրաչ Մելքումյան, «Տիգրան Սարգսյանը կնշանակվի ԵՏՄ տնտեսական հանձնաժողովի նախագահ», Ազատություն ռադիոկայան, 16 հոկտեմբերի 2015թ., https://www.azatutyun.am/a/27310222.html:

[274] Սիրանույշ Գևորգյան և Սարգիս Հարությունյան, «Հարցում. Հայաստանցիների մեծամասնությունը լավատես է երկրի ապագայի և Նիկոլ Փաշինյանի կառավարության նկատմամբ», Ազատություն ռադիոկայան, 27 նոյեմբերի 2018թ., https://www.azatutyun.am/a/29623761.html:

Ֆիզիկական անձանց անունով ՀՀ բանկերի միջոցով արտերկրից դրամական փոխանցումների վերաբերյալ տվյալներն ընդգծում են Ռուսաստանի Դաշնության կարևորությունն ու վերջինից ՀՀ տնտեսության կախվածությունը (Պատկերներ 8 և 9): Ներկայացված տվյալները վկայում են, որ ֆիզիկական անձանց անունով ՀՀ բանկերի միջոցով արտաքին աշխարհից ստացվող դրամական փոխանցումների զուտ մեծությունը գրեթե ամբողջությամբ գալիս է Ռուսաստանից և, ինչ որ առումով, Հայաստանից ուղղվում է արտաքին աշխարհի երկրներ: Եթե 2004-2007թթ.-ին ԱՄՆ-ից ֆիզիկական անձանց ՀՀ բանկերի միջոցով դրամական փոխանցումներն ունեին որոշակի էական ծավալ, ապա 2007թ.-ից հետո այդ փոխանցումների դերը գրեթե զրոյացվել է՝ որոշակի չափով վերականգնվելով միայն 2014թ.-ից հետո, երբ արևմտյան երկրները պատժամիջոցներ կիրառեցին Ռուսաստանի նկատմամբ: Սա ընդգծում է ֆիզիկական անձանց անունով Ռուսաստանից կատարվող դրամական փոխանցումների ծավալից կախված՝ ՀՀ տնտեսության ակնհայտ խոցելիությունը, ինչն արդեն դրսևորվել է 2009թ.-ին և 2015թ.-ին՝ 40 տոկոսը գերազանցող անկումներով: Ռուսաստանի տնտեսության և բյուջեի եկամուտների կախվածությունը ածխաջրածնային վառելանյութերի գներից դրանք դարձնում է խոցելի և ածանցյալ հետևանքներ է ունենում ՀՀ տնտեսության, ՀՀ-ում ներդրումների և ՀՀ ազգային անվտանգության համար ընդհանրապես, իսկ ՀՀ էներգետիկ անվտանգության համար՝ մասնավորապես:

Պատկեր 8. Ֆիզիկական անձանց անունով ՀՀ բանկերի միջոցով արտերկրից զուտ դրամական փոխանցումներ (հազար ԱՄՆ դոլար)



Պատկեր 9. Ֆիզիկական անձանց անունով ՀՀ բանկերի միջոցով արտերկրից դրամական փոխանցումներ (տեսակարար կշիռներն ընդհանուրի մեջ)



Հայաստանի անկախացումից ի վեր Հայաստանում ազատորեն հեռարձակվում են ռուսական հիմնական հանրային հեռուստաալիքները՝ Ռուսաստանի հանրային հեռուստաընկերությունը (ՕՐՏ) և «Россия»-ն: Դրանք, որպես կանոն, առաջ են մղում հակաարևմտյան օրակարգ՝ ԱՄՆ-ն, Եվրոպան և, առհասարակ, ժողովրդավարությունը ներկայացնելով որպես հակադիր ավանդական արժեքներին և սպառնալիք դրանց գոյությանը՝ այդպիսով առաջարկելով հակվել դեպի Ռուսաստանը[275]: «Էլեկտրիկ Երևան»-ի օրերին Հայաստանում սփռվող ռուսական հեռուստաալիքները հաղորդում էին իբր ԱՄՆ-ից աջակցություն ստացող ցույցերի հակառուսական բնույթի մասին[276]: «Ռոսիա 1» հեռուստաալիքը տեղի ունեցող իրադարձությունները համեմատում էր ուկրաինական և վրացական շարժումների հետ և հայտարարում, որ հայաստանյան ցույցերը կրում են հակառուսական բնույթ և հրահրվում են ԱՄՆ կողմից, ցուցարարները եղել են զինված և բռնի ուժ են կիրառել ոստիկանության նկատմամբ, ինչը հետագայում բացահայտվում էր հայկական անկախ մամուլի կողմից[277]: Ընդհանուր առմամբ, կարելի է նկատել, որ Ռուսաստանի կառավարությունը, օգտվելով Հայաստանի աշխարհաքաղաքական խոցելի վիճակից և տնտեսական դժվարություններից, օգտագործել է Հայաստանի լրատվական դաշտում իր ներկայությունը՝ հաստատելու իր տնտեսական, քաղաքական և ռազմական ազդեցությունը: Ի լրումն լրատվամիջոցների՝ նա օգտագործել է ռուսամետ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ռեսուրսը, որոնք, ի դեպ, երբևէ հանդես չեն եկել մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների պաշտպանության դիրքերից:

Հիշատակելով հայկական սփյուռքին՝ հարկ է նկատել, որ վերջին տարիներին Ռուսաստանի հայկական սփյուռքի ներկայացուցիչները ակտիվներ են ձեռք բերել Հայաստանի էներգետիկ

[275] David Sarkisyan, Tracking and Countering Anti-European and Anti-Democratic Propaganda in Armenia, Yerevan, 2017, http://www.osf.am/programs/policy-fellowship-initiative/list-of-completed-projects/?lang=am:

[276] "Протесты в Армении напоминают начало Майдана - СФ", TV Zvezda, 24 Июня 2015г., https://tvzvezda.ru/news/vstrane_i_mire/content/201506241116-yi7q.htm:

[277] Աննա Փամբուխչյան, «Երևանի ցույցերը և ռուսաստանյան սուտը», ՄեդիաԼաբ, 27 հունիսի 2015թ., https://medialab.am/13434:

ոլորտում, առևտրի և զվարճանքի կենտրոններ են կառուցել Երևանում և Հայաստանի Հանրապետության այլ վայրերում: Մինչդեռ, արևմտյան երկրների հայկական համայնքների ներկայացուցիչները մինչև վերջերս Հայաստանում հիմնականում բարեգործական ծրագրեր էին իրականացնում:

5.3.4 ՀՀ իշխանությունների դերակատարումը

Հայաստանում հանրային գույքի մասնավորեցման գործընթացները և դրանց արդյունքներն անմիջականորեն պայմանավորված են եղել իշխող քաղաքական «էլիտայի» արժեքներով, անձնական կապերով ու կախվածություններով: Հայաստանում իրենց շահերն առաջ մղելու նպատակով ռուսական իշխանությունները հենվել են հայաստանյան «էլիտայի» վրա և օգտագործել առանձին պաշտոնյաների հետ ունեցած անձնական կապերը: Տպավորություն կա, որ ակտիվների սահուն փոխանցումը ռուսական ընկերություններին Հայաստանը կախվածության մեջ դնելու կանխամտածված միջոցառումներ էին, ինչի արդյունքում մեծանում էր ռուս գործընկերների հետ «անձնական լավ հարաբերություններ» ունեցող բարձրաստիճան պաշտոնյաների կշիռը: Նման կապերը, թերևս, միշտ կարելի էր հիմնավորել հայ-ռուսական գործընկերության ռազմավարական բնույթով:

Մի շարք դեպքերում ռուսական ընկերություններն այդ գործընկերությունը և անձնական կապերն օգտագործել են խոշոր և կարևոր ակտիվների մասնավորեցումն իրենց օգտին ծառայեցնելու համար: Դա, օրինակ, եղել է 1999-2002թթ.-ին ՀԷՑ-ի սեփականաշնորհման ժամանակ, երբ ՀՀ իշխանություններն արեցին ամեն ինչ, որ ի վերջո աճուրդի արդյունքները բեկեն ռուսական ընկերության կողմը: Ավելի ուշ Գազպրոմն իր լծակներն օգտագործել է Հայաստանը Իրանից գազի մատակարարման այլընտրանքային աղբյուրից զրկելու համար: Ակնհայտ է, որ ՀՀ իշխանավորները ռուսական ընկերությունների հետ կապերն օգտագործել են գաղտնի համաձայնություններ ձեռք բերելու, հանրային գույքը տեղական մեծահարուստներին և հայկական ծագում ունեցող ռուսաստանցիներին վաճառելու և վերավաճառելու համար:

Ընկերությունների՝ հիմնականում կանխամտածված վատ կառավարման միջոցով ծնկի բերելը և հետագայում դրանք էժան գնով վաճառելը, մինչև վերջնական ռուսական տերերին սեփականություն դառնալը հայկական ընկերությունները վստահելի օֆշորային «միջնորդներին» վաճառելը, կեղծ և ոչ թափանցիկ աճուրդներ կազմակերպելը, աճուրդների վերջնական փուլերում դրանց կանոնները փոփոխելը, «գույք՝ պարտքի դիմաց» գործարքն այն մեխանիզմներն էին, որոնք օգտագործվել են ակտիվները ռուսական պետական ընկերություններին փոխանցելու համար: Ի դեպ, ՀԷՑ-ի մասնավորեցման գործարքն ընթացել է մի ժամանակահատվածում, երբ Հայաստանի իշխանությունները գույք պարտքի դիմաց գործարքի շուրջ բանակցություններ էին վարում ՌԴ իշխանությունների հետ: Պարզ չէ, թե ինչքանով էին այս գործարքները փոխլրացնում իրար և հարց է, թե արդյոք ՀՀ պետական մարմիններն ունեին մի քանի ուղղություններով միաժամանակ բանակցություններ վարելու բավարար կարողություն:

Զարմանալի չէ, որ Ռուսաստանի բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ Հայաստանին վերաբերում էին որպես Ռուսաստանի մի մաս և համարում էին իրենց «ֆորպոստը» Հարավային Կովկասում[278], իսկ Հայաստանի իշխանությունները փորձում էին բացատրել, որ այդ ձևակերպումը շահարկելը «թյուրըմբռնման» հետևանք է[279]: Հայաստանի հանրության մի մասի մոտ ձևավորված կարծիք կա, որ էներգետիկ ենթակառուցվածքները և այլ ակտիվները ռուսական ընկերություններին փոխանցելն այն գինն է, որ նախկին իշխանությունները վճարում էին Ռուսաստանի հավանությունը ստանալու և իշխանության ղեկին մնալու համար[280][281]: Որոշ վերլուծաբաններ կարծում էին, որ Ռուսաստանն օգտվում է Հայաստանի աշխարհաքաղաքական խոցելի իրավիճակից[282]:

Պետք է արձանագրել, որ Հայաստանի և Ռուսաստանի կապակցվածությունը բավականին ձեռնտու է եղել ՀՀ նախկին իշխանություններին: Այն սպասարկում էր միաժամանակ մի քանի նպատակ. մի կողմից՝ մեղմում էր սոցիալական դժգոհությունները և տրանսֆերտների շնորհիվ նպաստում երկրի տնտեսության զարգացմանը, մյուս կողմից՝ ապահովում էր քաղաքական էլիտայի կայունությունը: Այսպես, 2011թ.-ի հունիսի 30-ին ի պատասխան «168 ժամ»-ի թղթակցի՝ «Կրիտիկական, դժգոհ զանգվածի մի մասն էլ՝ պահանջելու փոխարեն, այսօր հույսը կտրած՝ արտագաղթում է: Նույնիսկ վիճակագրական տվյալներով՝ արտագաղթողների ծավալները վտանգավոր սահմանի են հասնում» պնդմանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը պատասխանել էր. «Ամեն ինչ անենք, որ մարդիկ չփախնե՞ն, որ մնան ու իրականացնեն հեղափոխությո՞ւն (կատակով ժպտում է): Ինչպե՞ս անենք, որ մարդիկ մնան Հայաստանում, պետք է այնպես անենք, որ կյանքը մեր երկրում լինի ավելի լավ, քան արտերկրում: Եթե դու կյանքը սկսում ես Հայաստանում բարելավել, կրիտիկական զանգվածը նվազում է: Ավելանում է այն զանգվածը, որն աջակցում է իշխանություններին, և դա իշխանությունների հաջողություն է: Իսկ եթե իշխանությունները ունենում են անհաջողություն, ժողովուրդը ավելի հակված է իր ձայները տալ ընդդիմությանը: Ոչ մի իշխանություն, հավատացեք ինձ, այդպիսի ցանկություն չունի, այնպես աշխատել, որ իր հեղինակությունը լինի ավելի ցածր, քան ընդդիմությանը»[283]:

Հարկ է նաև նկատել, որ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցությունն ամրապնդվել է նաև կոնկրետ պաշտոնատար անձանց միջոցով: Մասնավորապես՝ տարբեր տարիների էներգետիկ ոլորտի բազմաթիվ պաշտոնյաներ նախարարի պաշտոն են զբաղեցրել Հայաստանի Հանրապետության կառավարություններում: Այսպես.

- Կարեն Կարապետյանը, 2001-2010թթ.-ին «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենը, Երևանի քաղաքապետն էր 2010-2011թթ.-ին, այնուհետ՝ 2011-2016թթ.-

[278] «Հայաստանը՝ Ռուսաստանի ֆորպոստ», Ա1պլյուս, 15 դեկտեմբերի 2004թ., https://a1plus.am/hy/article/8319:
[279] Շաբե Ավոյան, «Սերժ Սարգսյան. «Հայաստանը Ռուսաստանի ֆորպոստ կոչելը թյուրըմբռման հետևանք է», 11 ապրիլի 2007թ., https://www.azatutyun.am/a/1587743.html:
[280] Նաիրա Մամիկոնյան, հարցազրույց «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սմբատ Այվազյանի հետ, «Քոչարյանը ՌԴ-ին մուծվում է», Առավոտ, 25 մայիսի 2006թ., https://www.aravot.am/2006/05/25/808579 և Սիրանույշ Պապյան, հարցազրույց իրանագետ Արմեն Վարդանյանի հետ, «Քանի դեռ ՀՀ իշխանության ղեկին ռուսական դրածոներ են, այս հարցում բեկում չի լինի», Լրագիր, 18 օգոստոսի 2017թ., https://www.lragir.am/2017/08/18/158837:
[281] Լևոն Գևորգյան, ՀՀ 1993-1995թթ.-ի վարչապետ Հրանտ Բագրատյանի հարցազրույցը, ««Գույք պարտքի դիմաց» գործարքը իշխանությունն ամրապնդելու նպատակ ուներ», 19 ապրիլի 2011թ., https://hraparak.am/post/591fc99de3d84d0d37fe210d:
[282] Ռուզաննա Ստեփանյան, «Փորձագետ. «Հայաստանը շղթայված է ռուսական շղթայով», Ազատություն ռադիոկայան, 17 օգոստոսի 2010թ., https://www.azatutyun.am/a/2129822.html:
[283] «Մամուլի տեսություն», 2011թ. հունիսի 30, Ազատություն ռադիոկայան, https://www.azatutyun.am/a/24250878.html

ին՝ ռուսական «Գազպրոմբանկ» ԲԲԸ-ի առաջին փոխնախագահը, իսկ 2016թ.-ի սեպտեմբերին նշանակվել և մինչև հեղափոխություն պաշտոնավարել է որպես Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ հետագայում վերադառնալով Գազպրոմբանկ, իսկ 2020թ.-ի հուլիսին նշանակվել է նաև ռուսական Ուրալմաշ-Իժորա խմբի «Միացյալ մեքենաշինական գործարաններ» ընկերության տնօրենների խորհրդի նախագահ[284]: Ակնհայտ է, որ Կարապետյանը պաշտոնի բերումով էական դերակատարում է ունեցել Գազպրոմի հետ կապված առանցքային գործարքներում: Չի կարելի բացառել նաև, որ Կարապետյանը, որպես վարչապետ, իր պաշտոնավարման ընթացքում սպասարկել է Ռուսաստանի Դաշնության շահերը: Սրա վկայությունն է օրինակ այն, որ 2017թ.-ին նրա կառավարությունը 2.5 մլն ԱՄՆ դոլար արժեքով գույք է անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ փոխանցել «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը[285]:

- Աշոտ Մանուկյանը 2016-2018թթ.-ին եղել է էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար, 2004-2011թթ.-ին՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն / Հրազջէկ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, 2011-2015թթ.-ին՝ գլխավոր տնօրեն, իսկ 2015-2016թթ.-ին՝ «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն[286]:
- Արմեն Մովսիսյանը 2001-2014թթ.-ին եղել է էներգետիկայի նախարար, 1997-1998թթ.-ին՝ «Սյունիքի մարզային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ի տնօրեն, իսկ 1998-2000թ. «Հարավային էլեկտրացանց» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրեն[287]:
- Վարդան Հարությունյանը 2016-2018 թթ.-ին եղել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ, 2010-2016թթ.-ին՝ Հայռուսգազարդ-Գազպրոմ-Արմենիայի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, վարչության նախագահ - գլխավոր տնօրեն[288]:
- Հայկ Արզումանի Հարությունյանը 2014-2018թթ.-ին եղել է էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ, 2011-2014թթ.-ին՝ «Մեծամորէներգոատոմ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնակատար[289]:
- Հայկ Հմայակի Հարությունյանը 2017-2018թթ.-ին եղել է էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ, իսկ պաշտոնից հեռանալուց հետո նշանակվել է ԲԷՑ-ի տնօրեն[290]:

Ընդհանրապես, բնական է, որ խոշոր ձեռնարկություններն ունեն ֆինանսատնտեսական շահեր, իսկ օտարերկրյա կապիտալով աշխատող ձեռնարկությունները, ի լրումն, կարող են հետամուտ լինել նաև իրենց երկրների քաղաքական նպատակների կենսագործմանը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բավարար չափով չի կարգավորում

---

[284] «Միացյալ մեքենաշինական գործարաններ» ընկերություն, http://www.omz.ru/company/direction/

[285] ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 14-ի ««Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» N1646-Ա որոշում. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118270:

[286] «Ի՞նչ կենսագրություն ունի նախարար Աշոտ Մանուկյանը», Իրավաբան.net, https://iravaban.net/162126.html:

[287] Արմեն Խիկարի Մովսիսյանի կենսագրությունը, https://hy.wikipedia.org/wiki/Արմեն_Մովսիսյան_(քաղաքական_գործիչ)

[288] Վարդան Ռուբենի Հարությունյանի կենսագրությունը՝ «Գազպրոմ-Արմենիա» ընկերության պաշտոնական կայքում, https://armenia-am.gazprom.com/textpage108/?mode=preview:

[289] Հայկ Արզումանի Հարությունյանի կենսագրությունը https://hy.wikipedia.org/wiki/ /Հայկ_Հարությունյան_(պետական_գործիչ):

[290] Հայկ Հմայակի Հարությունյանի կենսագրությունը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ընկերության կայքում. http://www.hven.am/am/%D4%B3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80-%D5%BF%D5%B6%D6%85%D6%80%D5%A5%D5%B6:

խոշոր, հատկապես արտասահմանյան կապիտալով ձեռնարկությունների ղեկավարների, ինչպես նաև խոշոր սեփականատերերի կողմից բարձրաստիճան պետական պաշտոնների ստանձնումը:

6 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում 1998-2017թթ.-ին էներգետիկ, հեռահաղորդակցության, ֆինանսական, հանքահումքային կարևորագույն ենթակառուցվածքների հիմնական մասի քողարկված և կասկածելի գործարքների միջոցով մասնավորեցումն ու կառավարման կամ շահագործման հանձնումը, երբեմն անորոշ ծագումով կամ մութ կապերով ընկերությունների ներդրումները, պետական կառավարման համակարգում տնտեսական շահեր ունեցող գործարարների, ինչպես նաև արտասահմանյան, մասնավորապես՝ ռուսական ընկերությունների ֆինանսատնտեսական շահերը ներկայացնող անձանց ներգրավումը ՀՀ տնտեսությունը դարձնում են խոցելի և սպառնում երկրի ինքնիշխանությանն ու ազգային անվտանգությանը:

Որոշ գործարքների հասցրած վնասները, թերևս, անդառնալի են կամ առնվազն երկարաժամկետ: Սակայն, կարծում ենք, հնարավոր է ձեռնարկել կոնկրետ միջոցառումներ իրավիճակի հնարավորինս շտկման՝ կասկածելի ծագումով կապիտալից տնտեսության կախվածությունը նվազեցնելու, ծառայությունների որակն ու գները բարելավելու, ինչպես նաև ապագայում նմանօրինակ խնդիրներից խուսափելու նպատակով:

Հայաստանի ներդրումային միջավայրը գրավիչ դարձնելու, հանրային գույքի մասնավորեցման, ներդրումներ և առնչվող գործընթացներն ավելի արդյունավետ և թափանցիկ դարձնելու և հանրության վստահությունն ամրապնդելու նպատակով ՀՀ պետական մարմինները պետք է արմատական փոփոխություններ կատարեն օրենսդրության մեջ, ինչպես նաև փոխեն իրավակիրառ պրակտիկան և իրենց գործելակերպը:

Այս առնչությամբ առաջարկվում է՝

ՀՀ Ազգային ժողովին՝

- լիարժեք կերպով իրականացնել հանրային ակտիվներին առնչվող գործարքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված իր վերահսկողական գործառույթը,
- օրենսդրորեն երաշխավորել ՀՀ Սահմանադրությամբ քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց (այդ թվում՝ պատգամավորների) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու քողարկված հնարավորության բացահայտումը և պատասխանատվությունը,
- կանոնակարգել առանձին ոլորտների ներկայացուցիչների (այդ թվում՝ խոշոր ձեռնարկությունների ղեկավարների և խոշոր սեփականատերերի) հետ

քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց հանդիպումների հրապարակայնության վերաբերյալ հարցերը,

- օրենսդրորեն ամրագրել, որ գազատարները, էլեկտրականության հաղորդման ցանցերը չեն կարող լինել մենաշնորհ, և այլ մատակարարների գոյության պարագայում առկա գազատարերի և էլեկտրահաղորդման ցանցերի սեփականատերերը պետք է դրանք որոշակի սակագնով հասանելի դարձնեն այլ մատակարարներին,
- օրենսդրորեն երաշխավորել էներգետիկայի ոլորտում արտադրող, տեղափոխող և բաշխող կարողությունների սեփականատերերի և կառավարիչների տարանջատումը՝ կենտրոնացումը կանխարգելելու, մրցակցությունը խթանելու և էներգետիկ ծառայությունների տնտեսապես արդարացված սակագների և գների ձևավորումը երաշխավորելու համար,
- հստակեցնել պետական և ծառայողական գաղտնիքին վերաբերող օրենսդրությունն ու դրա կատարման նկատմամբ վերահսկողությունը՝ ապահովելու, որ կառավարությունն ու պետական մարմինները իրավասու չլինեն կամայական կերպով փաստաթղթերը ճանաչելու գաղտնի և պետական գույքի մասնավորեցման կամ օտարման մասին փաստաթղթերը չդասակարգվեն պետական և ծառայողական գաղտնիքների թվին,
- «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» և «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքներում ամրագրել, համապատասխանաբար, մասնավորեցման գործընթացի և ներդրումների թափանցիկության և հաշվետվողականության պահանջներ:

ՀՀ կառավարությանը՝

- ստեղծել մեխանիզմներ՝ իրական սեփականատերերի, ներառյալ՝ ՓԲԸ-ների, բաժնետերերի վերաբերյալ լիարժեք և ճշգրիտ տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև այդ տվյալները բոլորին հրապարակայնորեն և անվճար հասանելի դարձնելու համար,
- հզորացնել փողերի լվացման դեմ պայքարի համար պատասխանատու պետական կառույցների կարողությունները և հրապարակել բացահայտված դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը,
- քննության առարկա դարձնել էներգետիկ ակտիվների վաճառքի և դրանց արդյունքում ստացված հասույթի օգտագործման առումով ՀՀ պաշտպանության նախարարության ներգրավվածության հարցը,
- ստեղծել հիմքեր խթանելու գազի մատակարարման և էլեկտրաէներգիայի արտադրության այլընտրանքային աղբյուրները,
- վերանայել «փոքր» ՀԷԿ հասկացությունը սահմանող շեմը և կանխարգելել դրա արհեստական բարձրացումը,
- մշակել և իրականացնել տնտեսության առանձին ոլորտների զարգացմանը և առանձին մրցունակ ընկերությունների ձևավորմանը նպաստող «արդյունաբերական քաղաքականություն», օրինակ՝ ավիացիայի ոլորտում,
- ապահովել ներդրումների պետական տեղեկատվական շտեմարանների հրապարակայնությունը, ներառյալ՝ գործարքների ժամանակագրությունը,

պայմանագրերի տեքստերը, ընկերությունների կողմից ստացվող եկամուտները և ներդրումային ծախսերը, սոցիալական պատասխանատվության ծրագրերը, պետության կողմից ստացվող եկամուտները, վճարվող հարկերը և այլն,

- ապահովել հանրային գույքի մասնավորեցմանը վերաբերող ողջ գույքի փաստաթղթային բազային հրապարակայնությունը,
- երաշխավորել պաշտոնական տեղեկատվական շտեմարաններում պահվող տվյալների որակը և դրանց անձեռնմխելիությունը, հստակ սահմանել տեղեկատվական շտեմարաններ տվյալների մուտքագրման, թարմացման և փոփոխման պայմանները, արձանագրել պատասխանատուների տվյալները,
- սերտորեն աշխատել Եվրոպայի, Ամերիկայի և աշխարհի այլ մասերի սփյուռքահայ գործարարների հետ՝ ավելի մաքուր (կառուցողական) և նորարարությունը խթանող կապիտալ ներգրավելու և հայազգի ներդրողների մուտքը տնտեսություն խրախուսելու նպատակով,
- իրականացնել կրթական ծրագրեր՝ ապահովելու ՀՀ քաղաքացիների մեդիա գրագիտությունը և իրազեկումը ապատեղեկատվական հոսքերի վերաբերյալ:

ՀԾԿՀ-ին՝

- պատշաճ կիրարկել օրենքով սահմանված գործառույթները և ամրապնդել ՀԾԿՀ-ի դերն ու անկախությունն այնպես, որպեսզի ապահովվի մատչելի գներով և մրցակցային միջավայրում տրամադրվող որակյալ հանրային ծառայությունների մատակարարումը,
- հանրային ծառայությունների սակագները սահմանելիս, ապագա ներդրումների համար անհրաժեշտ միջոցների անհրաժեշտության դեպքում, դիտարկել այդ ներդրումների այլընտրանքային սցենարներ (օրինակ՝ գազատար խողովակների կառուցման դեպքում կարելի է դիտարկել համեմատաբար մեծ տարաներով գազի մատակարարումը հեռավոր բնակավայրերին),
- հանրային ծառայությունների սակագները վերանայելիս ուսումնասիրել, թե արդյոք հանրային ծառայություն մատուցող տվյալ ընկերությունը կատարել է իր ներդրումային այն պարտավորությունները, որոնք նախկինում ներառվել էին սակագների հաշվարկում:

Հաշվեքննիչ պալատին՝

- իրականացնել վերը նկարագրված հանրային սեփականության օբյեկտների մասնավորեցման կամ կառավարման հանձնելու գործընթացների, ինչպես նաև դրանց օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ ստուգում և արդյունքների հրապարակում:

7 ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջին 20-25 տարիներին Հայաստանի Հանրապետությունում պետական գույքի մասնավորեցման և ներդրումների խնդրահարույց գործընթացների ուսումնասիրությունը վեր է հանել պետական կառավարման, հանրային ծառայությունների կարգավորման, հաստատությունների կարողությունների, գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության, օրենքի գերակայության հետ կապված թույլ կողմերը և, դրան զուգահեռ, պետության պատասխանատու պաշտոնյաների ակնհայտորեն ծրագրված և կազմակերպված գործարքները, որոնք միտված են եղել սեփական իշխանությունը պահելուն և ամրապնդելուն, և, օգտագործվելով արտաքին ուժերի կողմից, ռիսկի տակ են դրել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, խոցելի դարձրել երկրի կայունությունը և տնտեսությունը զգալի կախվածության մեջ դրել այլ պետություններից:

2018թ.-ի ապրիլ-մայիսի թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանը արմատական փոփոխությունների և քաղաքական ու տնտեսական առումներով առաջ շարժվելու կարիք ունի: Ակնկալվում է, որ սույն զեկույցում ամփոփված հետազոտության արդյունքները և ներկայացված առաջարկությունները հաշվի կառնվեն որոշումներ ընդունող կառույցների կողմից:

Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավումը, պետական հաստատությունների զարգացումը, դրանց անկախության երաշխավորումն ու հաշվետվողականության բարելավումը կօգնեն Հայաստանի Հանրապետությունը դարձնելու բացության, թափանցիկության, հաշվետու և պատասխանատու կառավարման առումով օրինակելի երկիր: